«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ - ԹԻՎ 3

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ
ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
2005

Գևորգ Խուդինյան
Արարատ Հակոբյան

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25):329(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) +66.6
Խ 963

Աշխատանքը երաշխավորվել է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
Նոր պատմության բաժնի կողմից

Խմբագիր՝ ***պ. գ. թ., դոցենտ Վահան Մելիքյան***

Խուդինյան Գ.
Հակոբյան Ա.
Խ 963
ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը. - Եր.: ՀՅԴ, 2005.-60 էջ

Գիրքը նվիրված է վերջին շրջանում Հայաստանում հրապարակված առանձին աշխատություններում և հոդվածներում ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարախոսության խեղաթյուրման ու վարկաբեկման փորձերի քննադատական վերլուծությանը: Նախատեսված է գիտական և քաղաքական շրջանակների ու լայն հասարակայնության համար:

Այս գիրքը հրատարակվում է Համազգայինի Վաշինգտոնի մասնաճյուղի
Համազգայինի Նյու Ջերսի մասնաճյուղի
ՀՅԴ Դետրոյթի կոմիտեի հովանավորությամբ

ԳՄԴ 63.3 (2Հ) +66.6

ISBN 99930-78-35-2

© ՀՅԴ, 2005

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության ողջ ժամանակամիջոցում մեզանում երբեք չի դադարել անհաշտ ու սկզբունքային պայքարը հայոց նորանկախ պետականությանն անհրաժեշտ արժեքային, գաղափարական ու քաղաքական ուղենիշների ընտրության հարցի շուրջ: Այդ պայքարը աննկատ կերպով դուրս է եկել ներկա իրողությունների հարթությունից և անցյալի ու ներկայի կապի ու փոխպայմանավորվածության հանգույցը «բացելու» միջոցով աստիճանաբար սկսել է լուծել ապագայի ռացիոնալ կանխատեսման ու ծրագրավորման խնդիրը: Մարդկանց որոշակի հավաքականության՝ ազգի համար, սերունդների հերթափոխը կենսաբանական էակների պարզ ինքնավերարտադրության գործընթաց չէ և ոչ էլ սոսկ անցյալի ձեռքբերումների ու կորուստների, նվաճումների ու սխալների վրա շահաբաժիններ վաստակելու ընթացիկ-քաղաքական խնդիր: Սերունդների հերթափոխը նախ և առաջ նպատակների ու արժեքների պահպանման կամ վերաիմաստավորման գործընթաց է, ուստի անցյալի ձեռքբերումների ու կորուստների ճշգրիտ հաշվեկշիռը կարող է հաստատվել միայն ազգի ու պետության հավաքական շահի ընկալման որոշակի համակարգի վրա:

Մինչդեռ երբ պատմությունը դիտարկվում է տարբեր գաղափարախոսական ոսպնյակների միջով, ներկայումս առկա քաղաքական նպատակների և դրանք իմաստավորող գաղափարների բախումը հաճախ աննկատ կերպով տեղափոխվում է ոչ վաղ անցյալի գիրկը՝ վերածվելով նրա հիմնական դերակատարների շուրջ ընթացող բանավեճի: Գիտական անաչառ մոտեցումների շղարշի տակ քողարկվող նման քաղաքական բանավեճի մեջ առավել մեծ ուշադրության են արժանանում այն ուժերը, որոնք ոչ միայն անցյալ են, այլև ներկա, այսինքն՝ ունեն հարուստ պատմություն և նրանով իմաստավորվող գաղափարախոսություն: Նրանց շարքում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն հայ ազգային կուսակցությունները և առաջին հերթին ՀՅ Դաշնակցությունը (ՀՅԴ):

Հարց է առաջանում՝ ինչու՞ հենց ՀՅԴ -ն է մեզանում աստիճանաբար դառնում մեր ժողովրդի ոչ վաղ անցյալի գնահատման շուրջ ծավալվող գաղափարական պայքարի յուրահատուկ առանցքը: Ինչու՞ է ՀՅԴ -ի անցյալի ու ներկայի հանդեպ նման ուշադրությունն ու տագնապը ձեռք բերում գրեթե համընդհանուր բնույթ: Արդյո՞ք սա պայմանավորված է միայն վերջին տարիներին ծավալված իշխանություն-ընդդիմություն պայքարով և նրանում ՀՅԴ -ի ունեցած որոշակի դերակատարությամբ: Բաղդատելով իշխանության համակարգում ՀՅԴ-ի սահմանափակ ներկայության փաստը նրա հանդեպ ի հայտ եկող հետաքրքրության չափի հետ՝ դժվար չէ եզրակացնել, որ այստեղ մենք գործ ունենք ոչ այնքան ներքաղաքական պայքարի, որքան մի երևույթի հետ, որն առանց չափազանցության կարելի է անվանել պետականության «գաղափարախոսական ինքնորոշման» գործընթաց:

Ցանկացած պետության զարգացման որոշակի հանգրվանում օրինաչա-

փորեն վրա է հասնում այն պահը, երբ համընդհանուր ապագաղափարականացման ֆոնի վրա ի հայտ է գալիս արտաքինից դեռևս պարզորոշ կերպով չերևացող գաղափարախոսական ջրբաժանը և նրա միջոցով տարանջատվող այն հիմնական հակասությունը, որը դառնում է ապագայի դռները բացող քաղաքական լուծումների բանալին: Նման հակասության արդի դրսևորումներից մեկը՝ ներկա կյանքի իմաստը «պատմության իմաստի» մեջ փնտրելու փորձն է, որը հանդես է գալիս ոչ թե որպես անցյալի պաշտամունք կամ անվերապահ մերժում, այլ պատմությունը պետական շահերի բարձրությունից վերաիմաստավորելու ցանկություն: Պետությունը որպես ինքնակազմակերպման նոր՝ ավելի բարձր մակարդակ, այդ գործընթացի մեջ փնտրում է ոչ թե անցյալի հիմքերը քանդելու, այլ վերանորոգելու ու վերաիմաստավորելու սեփական բանաձևը, իսկ կոնկրետ քաղաքական ուժերը՝ ինքնաբերաբար հանդես են գալիս որպես անցյալից բխող ու ներկայումս նոր կեպարանք ձեռք բերող որոշակի արժեքների կրողներ: Ուրեմն, ներկա իրողությունների համատեքստում ՀՅ Դաշնակցությունը, որպես պատմություն և գաղափարախոսություն, խորհրդանշում է մեր պետական կեցության սաղմնավորման դարաշրջանի ազգային կյանքի այն առավել բնորոշ ու տիպական արժեքները, առանց որոնց՝ Հայաստանի Երրորդ Հանրապետությունը չի կարող վերաիմաստավորել իր անցած ուղին:

Հետաքրքրությունը ՀՅԴ պատմության ու գաղափարախոսության հանդեպ Հայաստանի ներկա քաղաքական դաշտում դրսևորվում է երեք հիմնական գաղափարախոսական հարթությունների վրա.

ա) ազգային- ազատագրական շարժման գաղափարախոսություն, որի համար ՀՅԴ-ն հանդիսանում է հիմնական, առանցքային՝ արժեքներից մեկը,

բ) այսպես կոչված՝ նոր մտածողության կրողը հանդիսացող ուժեր, որոնց համար ՀՅԴ -ն, որպես պատմություն ու գաղափարախոսություն, խորհրդանշում է պետականազուրկ ազգին բնորոշ քաղաքական գործելակերպը՝ ազգային ազատագրական շարժումը, որը բացարձակապես անընդունելի է նրանց համար,

գ) ազգային շահերի պետական ընկալում, որի տեսանկյունից ՀՅԴ պատմությունն ու գաղափարախոսությունը միաժամանակ ե՛ւ անցյալ է՝ ե՛ւ ներկա, ուստի այն ոչ թե պաշտամունքի կամ ժխտական վերաբերմունքի, այլ պետականորեն, վերաիմաստավորելու ու բովանդակային առումով յուրացնելու կարիք է զգում:

Նման եռաստիճան քաղաքական հետաքրքրասիրության ծնունդ են առնում ՀՅԴ պատմության հանդեպ՝ վերաբերմունքի երկու՝ տրամագծորեն հակադիր մեթոդներ.

ա) **պատմության արդիական - քաղաքական՝ մոդեռնիստական ընկալում**, երբ մեր օրերին ծավալվող քաղաքական ու գաղափարական պայքարը տեղափոխվում է պատմության գիրկը, իսկ հաճախ էլ ընդհակառակը՝ ոչ վաղ անցյալի պատմությունն է մեխանիկորեն դիտարկվում ներկա քաղաքական ու գաղափարախոսական իրողությունների համատեքստում:

բ) **պատմականության՝ իստորիզմի սկզբունք**. որը հայոց պատմությունը դիտարկում է իբրև հայ ժողովրդի ու նրա ստեղծած բոլոր պետական կազ-

մավորումների ձեռքբերումների ու կորուստների ամբողջական հաշվեկշռի վրա հիմնված Միացյալ Հայաստանի պատմություն, ուստի նրա համար անցյալը ոչ թե ներկա քաղաքական իրողությունների համատեքստում օրախնդիր հարցեր լուծելու հարվածելու կամ պաշտպանվելու գործիք է, այլ համազգային իմաստնության ու կենսափորձի աղբյուր և նրանցից բխող համազգային պատասխանատվություն:

Պատմականության սկզբունքի կիրառումը թույլ է տալիս անցյալի հանդեպ միասնական պատասխանատվության հիման վրա իմաստավորել մեր ներկա պետական կեցությունը, որը ձեռք է բերվել ազգի հավաքական կամքից բխող հետևողական ջանքերի շնորհիվ: Քանզի ակնհայտ է, որ ո՛վ էլ լիներ այդ հավաքական կամքի կրողը անցյալում, նա գործել է ոչ թե սեփական սուբյեկտիվ ցանկության, այլ տվյալ դարաշրջանի և նրանից բխող խնդիրների համատեքստում: Այդ պատճառով, հարազատ ժողովրդի պատմության վերաիմաստավորումը՝ որպես պետական կեցությանն անցնելու պարտադիր պայման, հնարավոր չէ իրականացնել այդ պատմությանը և նրանում առանցքային դերակատարություն ունեցած այս կամ այն ուժին (ՀՅԴ, Հայկոմկուս և այլն) պատերազմ հայտարարելու միջոցով: Որովհետև սեփական պատմության հետ հաշվեհարդարի միջոցով ժողովրդի ու պետության ներկա ընթացքը փոխելու ձգտումները կարող են դառնալ (եթե արդեն չեն դարձել) տվյալ ժողովրդի բուն էությունը պայմանավորող արժեքների դեմ ուղղված պատերազմ:

Հայոց պատմության փիլիսոփայությունն «արդիականացնելու» մոդեռնիստական մտավարժանքների առաջին տիպական օրինակը 20-րդ դարի 20-30-ականներին հայ բոլշևիկների և նրանց քաղաքական թելադրանքի դաշտում հայտնված մասնագետ -պատմաբանների կողմից գռեհիկ - սոցիոլոգիզմի դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Մ. Պոկրովսկու հայեցակարգը մեր իրականության վրա տարածելու և այդ ճանապարհով ոչ վաղ անցյալի հետ հաշվեհարդար տեսնելու ձախողված փորձն էր, որի մասնակիցը դարձավ անգամ մեծանուն պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան): Քանզի այն քաղաքական նպատակը, որը դրված էր 1920-30-ականների խորհրդահայ պատմագրության առջև, ամենևին էլ հայ ժողովրդի պատմության վերաիմաստավորումը չէր, այլ Լենին-Աթաթուրք դաշինքի կողմից Հայաստանի հանդեպ իրականացված հաշվեհարդարի պատմագիտական «արդարացումը»: Իսկ դա պահանջում էր ոչ թե ժողովրդի քաղաքական առաջնորդների սխալների վերհանում, այլ գաղափարախոսական պատերազմի սանձազերծում տվյալ ժողովրդի նպատակների ու իդեալների դեմ՝ հիմնավորելու համար այն գաղափարը, թե հայ ժողովուրդը անցյալում չի եղել և ապագայում էլ չի կարող լինել պատմության ինքնուրույն սուբյեկտ: Մեր ազգային նպատակներն ու իդեալները և առաջին հերթին՝ Հայաստանի անկախության գաղափարը, դիմացան նման հաշվեհարդարի դաժան հարվածներին, քանզի դրանք հայ ժողովրդի բուն էության այն բաղկացուցիչներն էին, որոնք ի վերջո փոխում են իրենց դրսևորման արտաքին ձևերը, բայց ո՛չ բովանդակությունը:

Հայ պատմաբանների ու հրապարակախոսների կողմից ձեռնարկված այդ «պատմաշինարարության» նպատակները լուսարձակվեցին ավելի ուշ, երբ

նույն Քեմալ Աթաթուրքի ջանքերով ձևավորված թուրքական պատմագրության ներկայացուցիչների աշխատություններն սկսեցին «զարդարվել» Մ. Պոկրովսկու դպրոցի հայազգի կողմնակիցների և առաջին հերթին՝ հենց Լեոյի գրքերից ընդարձակ մեջբերումներով: Դրանից հետո միայն՝ չափազանց ուշացումով հասկացանք, որ սեփական պատմությունը ներքաղաքական պայքարի զենք դարձելու գործելակերպը ինքնամաքրման ճանապարհ չէ, այլ մեր ժողովրդին ու պետությանը հարվածելու փորձ:

Սակայն հայ ժողովրդի ինքնուրույն ապրելու իրավունքի և առաջին հերթին՝ Հայաստանի անկախության գաղափարի դեմ ուղղված բոլշևիկյան քարոզարշավի ձախողված փորձը հետագայում՝ 20 դարի վերջին տասնամյակում, ուսանելի դաս չդարձավ Հայաստանի երրորդ հանրապետության մեջ իշխող ուժ դարձած ՀՀՇ -ի ու նրա առաջնորդների համար: Թվում էր, թե վերջիններս՝ որպես Հայաստանի անկախության գաղափարի կողմնակիցներ և խորհրդային - ամբողջատիրական վարչակարգի հակառակորդներ, պետք է իրենց հարվածի գլխավոր սլաքն ուղղեին ոչ թե ՀՅԴ -ի, այլ հայ բոլշևիկների և նրանց թելադրանքով՝ մի քանի տասնամյակ շարունակ հայոց պատմությունը նենգափոխած պատմաբանների դեմ: Սակայն հակախորհրդային - անկախական քարոզարշավի կարճատև հանգրվանից հետո, շատ շուտով, նրանք ևս իրենց հարվածի գլխավոր թիրախը դարձրին ՀՅԴ -ին՝ շարունակելով կարինյանների «լավագույն ավանդույթները»: Նման պարադոքսի խորքային պատճառը անկախ պետականությունը այն ստեղծող ազգի նպատակներին ու իդեալներին հակադրելու ձգտումն էր և այդ ճանապարհով սեփական քաղաքական հակառակորդին՝ ՀՅԴ-ին, քաղաքական ասպարեզից դուրս մղելու փորձը:

ՀՀՇ -ի ձախողումից և 1998 -ի իշխանափոխությունից հետո էլ նրա առաջնորդները, իրենց քաղաքական պարտության պատճառներն ուսումնասիրելու և վերհանելու փոխարեն, շարունակեցին ղեկավարվել սեփական անսխալականության և դրանից բխող քաղաքական ռևանշի անխուսափելիության գաղափարով: Նման պայմաններում քաղաքական պարտություն կրած կուսակցությանը սկզբում անհրաժեշտ էր ռևանշ՝ եթե ոչ քաղաքական, ապա գոնե գաղափարախոսական հողի վրա: Այդ ռևանշի քաղաքական շարժառիթը Ղարաբաղյան հիմնահարցի լուծման և վերջինիս հետ անխզելիորեն կապված՝ հայ - ադրբեջանական ու հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման սեփական մոտեցումները հիմնավորելու և քաղաքական հակառակորդների ու առաջին հերթին՝ ՀՅԴ -ի դիրքորոշումները որպես կործանարար արկածախնդրություն ներկայացնելու ձգտումն էր: Իսկ նման ցանկությունը ոչ միայն քաղաքական կամ գաղափարախոսական, այլև պատմական հիմնավորման կարիք էր զգում:

Այդ պատճառով, 1998 -ից հետո և մանավանդ՝ վերջին տարիների ընթացքում, ՀՀՇ -ի առաջնորդները, գաղափարախոսները և ՀՅԴ -ի հանդեպ վերապահ մոտեցում ունեցող հին սերնդի պատմաբանների մի մասը, իրենց տեսական «պրպտումների» առանցքը դարձրին ՀՅԴ -ի և ողջ հայ ազատամարտի պատմությունը: Պատճառն ավելի քան ակնհայտ է. 1997-ին գրած իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածով Լ. Տեր-Պետ-

րոսյանը առաջ քաշեց այն գաղափարը, որ մեր ներկան անցյալում բազմիցս արձանագրված օրինաչափության առավելագույնին ձգտելու և ամեն ինչ կորցնելու փաստի կրկնությունն է: Այս պատմա - քաղաքական ելակետից իրականացվող հայ ազատամարտի և ՀՅ Դաշնակցության պատմության քննությունը նպատակ էր հետապնդում ցույց տալ, որ անցյալում ևս մեր բոլոր ձախողումները նման մաքսիմալիզմի և նրա կրողը հանդիսացող ծայրահեղական - ազգայնական, հեղափոխական ուժերի գործունեության հետևանքներն են: Իհարկե, ՀՀՇ -ի տեսաբանների և նրանց ազդեցության տակ գտնվող հեղինակների համար առանձնապես մեծ դժվարություն չէր ներկայացնում անցյալ - ներկա զուգահեռների ստեղծումը, որոնց առանցքում տեղադրվում է ՀՅԴ -ի ու նրա ղեկավարած հայ ազատամարտի պատմությունը: Սակայն, նման շինծու «պատմա - համեմատական» մեթոդի կիրառումը ոչ թե նպաստում էր անցյալի քննական վերլուծությանը և դրա հիման վրա ներկա իրողությունների ճիշտ գնահատմանը, այլ պարզապես թուլացնում Հայաստանը որպես պետություն ու հասարակություն նրան ներշնչելով սեփական անլիարժեքության գաղափարը և դրանից բխող քաղաքական կապիտուլյացիայի որոշումը: Պատճառն ակնհայտ է. ուժերի այն հաշվեկշիռը, որը գոյություն ուներ Օսմանյան կայսրության և պետականազուրկ հայ ժողովրդի միջև XIX վերջին և XX դարի սկզբներին մեխանիկորեն նույնացվում էր ներկայումս Հայաստան - Ադրբեջան հակամարտության մեջ առկա ուժերի նոր հաշվեկշռի հետ: Ավելին, անտեսվում էր այն իրողությունը, որ չնայած հայ ժողովրդին և նրան ղեկավարող ՀՅԴ -ին XX դարի առաջին երկու տասնամյակներում պարտադրված անհավասար կռիվներում առկա ուժերի բացարձակ անհավասարության փաստին, շնորհիվ ՀՅԴ - ի դրսևորած քաղաքական կամքի ու ողջ ժողովրդի անօրինակ սխրանքի և զոհողությունների, հնարավոր դարձավ Հայաստանի տարածքների մի մասի վրա ձևավորել ու պահպանել էթնիկապես միատարր հայկական պետությունը դրանով իսկ ստեղծելով մասը փրկելու միջոցով ամբողջին վերատիրանալու համար անհրաժեշտ քաղաքական հենակետ: Ոչ վաղ անցյալի պատմության այս հիմնական և մնայուն ձեռքբերումը գալիս է հաստատելու այն ակնհայտ փաստը, որ չլիներ հայ ազատամարտը և նրա առաջնորդող ուժը՝ ՀՅԴ -ն, չէր լինի նաև այդ հենակետը որպես առաջին, ապա երկրորդ և երրորդ հանրապետություն:

Պատմական ժառանգությունը միայն իբրև կորուստների երկար շարք ներկայացնելու մեթոդաբանությունը խանգարում է ձեռքբերումների ու կորուստների ճշգրիտ հաշվեկշիռը ձևավորելու գործին: Նման մեկնակետից «անտեսման մեթոդով» հայ ազատամարտի ու ՀՅԴ պատմության հանդեպ իրականացվող հաշվեհարդարը ի վերջո հանգում է այն գաղափարին, որ առաջին հանրապետությունը մեզ «նվիրել է» ցեղասպան Թուրքիան, նրա բաղկացուցիչներից՝ Զանգեզուրը փրկել է «պատահաբար» այնտեղ հայտնված Գարեգին Նժդեհը, իսկ Լոռին՝ Դրոյի զորավարական տաղանդը: Սեփական պատմության նման պարզունակ խեղաթյուրումից բխում է այն գաղափարը, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր հայերը՝ որպես ազգ ու պետություն ի վիճակի չեն ինքնուրույն կերպով լուծելու որևէ քաղաքական խնդիր, ուստի Արևելյան Հայաստանի մյուս կարևոր բաղկացուցչի՝ Ղարաբաղի հարցում որ-

քան հնարավոր է շուտ պետք է վերհիշեն «հայի հետին խելքը», որին անդրադարձել է Լևոն Տեր -Պետրոսյանը՝ իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հարցադրումով: Ուրեմն, սկսելով հայ ազատամարտի ու ՀՅԴ պատմության խեղաթյուրման գործը՝ ՀՀՇ -ն ու նրա հովանու ներքո գործող հեղինակները ոչ թե նպատակ են հետապնդում հայ ժողովրդին դարձնել ավելի «իմաստուն ու խելացի», այլ կոտրել Հայաստանի ու հայության դիմադրական ոգին, որը ներկայումս հանդես է գալիս որպես պետական կամք ու նրան աջակցող ազգային միասնություն: Այսինքն, նրանք ոչ թե մտածում են այն մասին, որ, սրբագրելով 1908 -ին, 1918 -ին կամ 1920 -ին արձանագրված այս կամ այն կոնկրետ սխալը, 2008 -ին, 2018 -ին կամ 2020 -ին կարելի է խուսափել նրանց կրկնությունից, այլ առաջարկում են «գայլերին չհանդիպելու համար հրաժարվել անտառ գնալուց»: Նպատակը պարզ է՝ հրաժարվել ընտրված ուղուց, պայքարից, դիմադրությունից, մաքառումից: Հենց դրա համար էլ փորձ է արվում առավելագույնս վերհանել մեր պատմության ողբերգական էջերը, ձախողումները, անհաջողությունները, սայթաքումները և այդ ամենը, տեղին թե անտեղի, կապել սեփական քաղաքական հակառակորդի՝ ՀՅ Դաշնակցության հետ:

Մինչդեռ, ազգային շահերի պետական ընկալման վրա խարսխվող քաղաքական իրատեսությունը և նրա հիմնավորման գիտական հիմքը հանդիսացող՝ պատմականության սկզբունքը պահանջում է այս կամ երևույթը քննել տվյալ դարաշրջանի իրողությունների համատեքստում և միաժամանակ՝ արձանագրված ձեռքբերումներն ու կորուստները «չափել» իրենց ամբողջական հաշվեկշռով: Քանզի հակառակն ապացուցելու «խիզախությունը» պահանջում է նաև զուգահեռաբար ներկայացնել քաղաքական որոշումների և դրանցից բխող՝ քաղաքական քայլերի այն այլընտրական տարբերակները, որոնք բաց են թողնվել տվյալ գործընթացը ղեկավարող այս կամ այն ուժի կամ անհատի քաղաքական ոչ ճիշտ հաշվարկի և անհեռատեսության պատճառով: Նման այլընտրանքի մատնանշումը կարևոր է՝ նախ և առաջ ներկայումս նույնպես նրանով առաջնորդվելու համար: Բայց ամբողջ հարցը հենց այն է, որ ոչ վաղ անցյալի կտրվածքով, ՀՅ Դաշնակցության ներկա հակառակորդները չեն մատնանշում որևէ ռազմավարական այլընտրանք՝ բավարարվելով միայն «ուշացած մարգարեների» ծանոթ իմաստակությամբ, քանզի եթե ունենան նման համարձակություն, պետք է Լեոյի նման պատմության դատաստանին հանձնեն նոր ժամանակների հայոց ողջ ազգային զարթոնքը և նրա ծնունդ՝ հայ ազատամարտը, իսկ դրանից դեպի ինքնության կորստի հեռանկարը, ինչպես ասում են՝ մեկ քայլ է:

Դրանով ակնհայտ է դառնում, որ անցյալի կտրվածքով ՀՅ Դաշնակցության ու նրա գլխավորած հայ ազատամարտի ճանապարհը մերժելու «արմատական» այլընտրանքը կրոնափոխությունն ու թրքանալն էր, իսկ «չափավոր» այլընտրանքը հայ կրոնական համայնքի ֆիզիկական գոյատևումը՝ Թուրքիայի մայրաքաղաքում և հարկադիր արտագաղթը իր բնօրրան Արևմտյան Հայաստանից: Այդ նույն «այլընտրանքի» ներկա կերպավորումը մասամբ հարուստ երկրներ գաղթելու, իսկ մասամբ էլ՝ Հայ Դատից ոչ միայն պետականորեն, այլև ազգովին հրաժարվելով՝ հայ -թուրքական հարաբերու-

թյունները «կարգավորելու» այն դեղատոմսն է, որն իրականում Անդրկովկասում ևս Թուրքիայի քաղաքական ու տնտեսական գերիշխանության հաստատման, ուրեմն արյամբ ու զոհողություններով ձեռք բերված ներկա Հայաստանի ստույգ կորստյան հեռանկարն է: Ահա թե որ «այլընտրանքների» գաղափարական հիմնավորումն է ՀՅ Դաշնակցության դեմ սկիզբ առած ներկա քարոզարշավը:

Պատասխանելով ՀՅ Դաշնակցության պատմությունը խեղաթյուրման ճանապարհով՝ վարկաբեկելու ներկա փորձերին, հասարակության ազգային նկարագիրն ու արժանապատվությունը պահպանած մեծամասնությունը հավաստում է պայքարով ինքնահաստատվելու իր կամքը, որը ձևավորվել ու ամրապնդվել է ու ներկայումս էլ շարունակում է կռփվել նաև ՀՅԴ -ի պատմությունը ուսումնասիրելու միջոցով: Այդ պայքարի ու նահատակության իմաստի վարկաբեկումը իմաստազրկում է նաև հայության մեծագույն ձեռքբերումը հանդիսացող Հայոց պետականությունը, քանզի վերջինիս գոյատևման ու զարգացման ներկա խնդիրների լուծումը պահանջում է ոչ թե հրաժարվել գոյության կռվի՝ 21-րդ դարում ևս պահպանվող մարտահրավերներից, այլ սոսկ փոխել պայքարի ձևերը, բայց ոչ՝ էությունը, բովանդակությունը: Այդ խնդիրների համատեքստում հայ - թուրքական մրցակցությունը՝ որպես երկու՝ արժեքային առումով փոխբացասող քաղաքակրթությունների ու նրանց հիման վրա ձևավորված պետությունների պայքար, ոչ միայն չի ավարտվել, այլև շարունակվում է: ՀՅ Դաշնակցության պատմությունն այդ պայքարում այսօր էլ մեր կամքը կոփող զենքն է, ազգի դիմադրողականությունն ամրացնող ոգեղեն հարստությունը, որի դեմ ձեռնարկվող ոտնձգությունները օբյեկտիվորեն՝ անգամ նրանց հեղինակների կամքից անկախ, ջուր են լցնում մեր հակառակորդների և առաջին հերթին՝ արդի Թուրքիայի պետական քարոզչության ջրաղացին:

Ուրեմն, ներկայումս 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի առաջին զույգ տասնամյակների հայ ազատամարտի ու նրա առաջատար ուժի՝ ՀՅ Դաշնակցության պատմությունը խեղաթյուրումից պաշտպանելու խնդիրն ունի ոչ թե նեղ - կուսակցական, այլ համազգային ու համապետական արժեք ու նշանակություն և դրանով պայմանավորված՝ արդիական - քաղաքական հնչեղություն: Ընդ որում, քաղաքական նպատակահարմարության հաշվառման և գիտական օբյեկտիվության պահպանման՝ թվում է, թե միմյանց բացասող առաջադրանքները տվյալ հարթության վրա բացարձակապես չեն հակասում մեկը մյուսին: Պատճառն այն է, որ պատմականության սկզբունքի լիարժեք կիրարկումը պահանջում է որևէ կոնկրետ դարաշրջանում հանդես եկող ուղղության, գաղափարախոսության, արժեքային համակարգի և հայ ժողովրդի նպատակների ու ձգտումների համեմատությունը: Եվ այն ամենևին դժվար չէ եզրակացնել, որ տվյալ պատմաշրջանում հենց ՀՅԴ -ն էր այդ նպատակների ու ձգտումների հարազատ պատկերը: Ուստի, պատմական ճշմարտության պաշտպանության խնդիրը պատմաբանների ներկա սերնդից պահանջում է խոստովանել, որ XIX դարի վերջի XX դարի առաջին տասնամյակների կտրվածքով հայ ժողովուրդ - ՀՅԴ հակաթեզի ստեղծման նախկին ու ներկա փորձերը ամբողջովին խեղաթյուրում են մեր պատմությունը: Այսօր ևս

նրանց նպատակը ոչ թե հայոց պատմության վերաիմաստավորումն է, այլ ներկա քաղաքական կյանքում նույն հակաթեզը ստեղծելու ձգտումը, որին էլ զոհաբերվում է պատմական ճշմարտությունը:

Առաջնորդվելով նման գաղափարաքաղաքական ելակետով, ընթերցողի ուշադրությանն ենք անցած մի քանի տարիների ընթացքում ՀՅԴ պատմության վերաբերյալ Հայաստանում հրապարակված պատմագիտական բնույթի աշխատություններում, հոդվածներում ու քաղաքական վերլուծություններում տեղ գտած միտումնավոր աղավաղումների, կեղծարարությունների առավել բնորոշ ու տիպական օրինակների քննադատական վերլուծությունը: Քննարկվող հիմնահարցերը վերաբերվում են 1890 -ից մինչև 1921 թվականներն ընկած դեպքերով ու իրադարձություններով խիստ հարուստ ժամանակաշրջանի պատմությանը: Դրան զուգահեռ, իրականացվում է նաև վերջին շրջանում ՀՅ Դաշնակցության գործելակերպի ու գաղափարախոսության մասին հետևողականորեն մեր հասարակությանը ներարկվող որոշ շիծնու կարծրատիպերի քննադատական վերլուծությունը: Քանզի դրանց միջոցով, ջնջելով պատմությունը արդիականությունից բաժանող սահմանագիծը, փորձ է արվում ՀՅԴ -ին մեր հասարակությանը ներկայացնել որպես ազգայնամոլ ու ծայրահեղական կազմակերպություն:

Ցույց է տրվում, որ քաղաքական արդի իրողությունների համատեքստում ՀՅԴ արժեքային համակարգը, գաղափարախոսությունն ու պատմությունը աղավաղելու նման փորձերը ծառայում են Հայոց ցեղասպանության փաստի ուրացմանն ուղղված ժամանակակից Թուրքիայի քարոզչական ռազմավարությանը:

Հ Յ Դաշնակցության պատմության վաղ շրջանը խեղաթյուրելու փորձերը

Հայաստանյան ներկա իրականության մեջ ՀՅ Դաշնակցության պատմության վաղ շրջանի վերաբերյալ ձևավորվել է թյուր պատկերացումների ու տեսակետների երկու խումբ, որոնց զուգահեռ գոյակցության փաստը անհրաժեշտ ենթահող է ստեղծել հայաստանյան մամուլի ու հրապարակախոսության և անգամ՝ «գիտական» համարվող որոշ աշխատություններում տեղ գտած տարիմաստ մեկնաբանությունների համար: Դրանցից ***առաջին*** խումբը XIX դարի վերջին քառորդի և XX դարի առաջին տասնամյակների հայ ազատամարտի հանդեպ 1920-30-ական թվականների խորհրդահայ պատմագրության մշակած ժխտական՝ վերաբերմունքի վերապրուկներն են՝ իրենց նորագույն՝ ՀՀՇ -ական և այլ մեկնաբանություններով հանդերձ: ***Երկրորդ*** խումբը, ընդհակառակը, բխում է խորհրդահայ պատմագրության մեջ՝ 1970-80-ական թվականներին սկիզբ առած գաղափարա-քաղաքական վերարժևորումների արդյունքում որոշ պատմաբանների մոտ ձևավորված հակասական պատկերացումներից, որոնցում ճշգրիտ ու արդարացի գնահատականները զուգորդվում են փաստերի ու երևույթների մակերեսային իմացության, իսկ հաճախ էլ՝ ուղղակի սխալ եզրահանգումների հետ: Երկրորդ մոտեցման

պատճառը չպետք է փնտրել ՀՅ Դաշնակցության անցած ուղին, ներկա գործունեությունը անվերապահորեն քննադատելու կամ վարկաբեկելու զենք դարձնելու ձգտումների մեջ, քանզի դրան զուգահեռ նկատվում է նաև որոշ հեղինակների ակնհայտ անտեղյակությունը, փաստերի ու իրադարձությունների վատ իմացությունը:

Ի վերջո, այս մեկնաբանությունների մեջ արձանագրվող ընդհանուր օրինաչափությունն այն է, որ ՀՅ Դաշնակցության ձևավորման և առաջին տարիների բուռն գործունեության պատմությունը դիտարկվում է որպես հայ ժողովրդի պատմությունից ամբողջապես կտրված, առանձին մի երևույթ: Մինչդեռ, ՀՅԴ -ն ոչ թե հայոց նոր պատմության կողմնակի արդյունքն էր կամ պարզ ուղեկիցը, այլ XIX դարի ողջ հայ ազատամարտի և հասարակաքաղաքական մտքի բարդ հոլովույթի ծնունդը: Ընդ որում ՀՅԴ -ն մարմնավորում էր հայոց նոր պատմության և նրա ծնունդը հանդիսացող՝ հայ ազատամարտի հիմնական, առանցքային գաղափարները և միաժամանակ՝ դրանք իրականություն դարձնելու ձգտումներն ու գործը: Տվյալ ազգային-քաղաքական ուղեգիծը ՀՅԴ -ն ինքը չէր ստեղծել, այլ սոսկ առաջնորդել, և հունավորել էր նրա ձևավորման գործընթացը: Որպես համազգային ընդհանուր նպատակը՝ արևմտահայերի ազատագրության խնդիրը հետապնդող համազգային մեկ կազմակերպության՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության ստեղծման փորձ (1890թ.) և որպես այդ փորձի ձախողման արդյունքում ձևավորված ուրույն կուսակցություն (1892թ.)՝ ՀՅ Դաշնակցությունը հարազատորեն արտացոլում էր ոչ թե հայ ժողովրդի առանձին հատվածների կամ խմբերի, այլ նրա գիտակից և ըմբոստ նոր սերնդի առավել ընդհանուր՝ հավաքական ձգտումները: Այդ պատճառով ՀՅԴ-ն, իր ձևավորման պահից սկսած, ոչ միայն հայկական միջավայրի, այլև հենց հայաստանյան իրականության ծնունդն էր՝ նրան համակած ազգակազմավորման և ազգային - ազատագրական շարժման ճանապարհով՝ պետական անկախության հասնելու ձգտումների մարմնավորումը: Աբովյանից մինչև Պատկանյան, Նալբանդյանից մինչև Ռաֆֆի, այդ ձգտումների առանցքում ընկած էր ազգի ու հայրենիքի միասնության գաղափարը, որը այլևս չէր կարող հատվածական կամ տեղայնական բնույթի մտասևեռում լինել: Այդ պատճառով ՀՅ Դաշնակցությունը ստեղծվեց հենց հայաստանյան իրականության մեջ մեծացած և Հայաստանի ներքին կացությանը խորապես տեղյակ անհատների կողմից: Ու թեև ՀՅԴ հիմնադիրները արևելահայեր էին, սակայն նրանց վաղ շրջանի գործունեության բուն նպատակը արևմտահայությունն ու Արևմտյան Հայաստանն էր:

Այս ակնհայտ փաստը, որն անկասկած հայտնի է հայոց պատմությանը շատ թե քիչ տեղյակ յուրաքանչյուր անհատի, վերջին շրջանում, քաղաքական թե անձնական ինչ-ինչ նկատառումներից ելնելով, կասկածի տակ է դրվում անգամ որոշ պատմաբանների կողմից: Նրանցից մեկը՝ Ստեփան Պողոսյանը, անգամ պնդում է, որ «ՀՅԴ հիմնադրեցին Հայաստանից դուրս ծնված ու մեծացած, հայ կյանքին անծանոթ երիտասարդները, որոնցից շատերը Հայաստանի մասին գիտեին միայն գրքերից և այլևայլ պատմություններից, նույնիսկ հայերեն չէին խոսում [1]»: Կարելի էր պարզ թյուրիմացություն համարել նման տարօրինակ պնդումը, եթե այն որոշակի կոնցեպ-

ցիայի հիմնավորման համար ասպարեզ նետվող պարզ ապատեղեկատվություն չլիներ, որովհետև, ով-ով, բայց կարծում ենք, գոնե ինքը՝ Ստ. Պողոսյանը, տեղյակ է, որ ՀՅԴ բոլոր հիմնադիրները ծնվել ու մեծացել են Հայաստանում. Քրիստափոր Միքայելյանը՝ Վերին Ագուլիսում, Սիմոն Զավարյանը՝ Լոռվա Այգեհատում, իսկ Ռոստոմը (Ստեփան Զորյան)՝ Նախիջևանի գավառի Ցղնա գյուղում: Այն հանգամանքը, որ նրանք միմյանց հանդիպել են Թիֆլիսում, նույնպես վկայում է ՀՅԴ հիմնադիրների՝ հենց հայաստանյան իրականության ծնունդը լինելու մասին, քանզի ներկա Վրաստանի մայրաքաղաքը XIX դարում ոչ միայն Անդրկովկասի խոշորագույն կենտրոնն էր, այլև գերազանցապես հայկական նկարագիր ունեցող մի քաղաք: Թիֆլիսը XIX դարում և XX դարի սկզբին ավելի հայկական էր իր մշակույթով, հայ բնակչության թվաքանակով, քան բուն Հայաստանի տարածքում գտնվող ներկա մայրաքաղաք Երևանը: Ուրեմն, որտե՞ղ պետք է հավաքվեին ՀՅԴ հիմնադիրները՝ գավառական քաղաքներ Երևանո՞ւմ կամ Ալեքսանդրապոլո՞ւմ, թե՞ բուն Հայաստանին սահմանակից Թիֆլիսում, որը ողջ արևելահայության մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոնն էր:

Ակնհայտ է, որ նման տարօրինակ հարցադրման միջոցով փորձ է արվում ցույց տալ ՀՅԴ հիմնադիրների կտրվածությունը Մայր Հայրենիքից, նրանց անտեղյակությունը հայաստանյան միջավայրի պայմաններին, որպեսզի այդ ճանապարհով հնարավոր լինի հիմնավորել ՀՅԴ գործունեությանը վերագրվող «անպատասխանատու», «արկածախնդրական» և այլ պիտակները:

Այս փորձը, իհարկե, նորություն չէ մեր պատմագրության մեջ և բխում է դեռևս Լեոյի ու մի շարք այլ հեղինակների կողմից առաջ քաշված այն տեսակետից, որ ՀՅԴ -ն ձևավորվել է օտար արժեքների, մասնավորապես՝ ռուսական իրականությունից բխող հեղափոխական նարոդնիկության գաղափարների ազդեցությամբ: Անշուշտ, ռուսական նարոդնիկության գաղափարներն իրենց խոր հետքն են թողել արևելահայ առաջադեմ երիտասարդության, այդ թվում և ՀՅԴ հիմնադիրների աշխարհայեցողության վրա: Սակայն չպետք է մոռանալ մեր պատմագրության կողմից վաղուց արդեն նկատված այն իրողությունը, որ ՀՅԴ -ն ոչ թե ռուսական նարոդնիկության գաղափարների ու գործելակերպի պարզունակ պատճենումն ու ընդօրինակումն էր, այլ նարոդնիկության դպրոցն անցած, նրա գաղափարախոսությունը «մարսած» ու վերամշակված հայ ազգային նարոդնիկության 1880-ական թվականների սերնդի՝ համամարդկային արժեքներից դեպի ազգային նպատակներ ու արժեքներ բնականոն անցման արդյունքը: Նման պայմաններում «ազդեցություն» ասելով իհարկե պետք է նկատի ունենալ ավելի շատ պայքարի մեթոդներն ու եղանակները, քան կոնկրետ նպատակները: Բայց անգամ առաջինների ընտրության հարցում ՀՅԴ հիմնադիրները չեն եղել նարոդնիկների հեղափոխական գործելակերպի գերին, այլ ի սկզբանե որդեգրել են իրենց առջև դրված նպատակների իրականացման խառը մարտավարությունը, որի տարրերից, բաղադրիչներից մի այն մեկն է եղել ռուսական նարոդնիկության գործելակերպը: Նման մարտավարությունը ներառել է պայքարի բոլոր հնարավոր մեթոդները՝ խաղաղ-ուվանագիտականից մինչև մարտական-հեղափոխական գործունեությունը: Մինչդեռ ՀՅԴ պատմության նորօրյա մեկնաբան-

ների մի մասը փորձում է ընթերցողների մոտ տպավորություն ստեղծել, թե ՀՅԴ -ն ի սկզբանե եղել է հույսը մեծ տերությունների վրա դրած, ծայրահեղական-ահաբեկչական կազմակերպություն, մյուսները՝ ընդհակառակը, թուրքական լծից արևմտահայերի ազատագրության գաղափարը մերժող, Հայաստանի անկախության հարցը անտեսող, հարմարվողական մի կուսակցություն: Տարիմաստ մեկնաբանությունների և անգամ բացահայտ զրպարտությունների «լայն գունապնակը» հնարավորություն է տալիս ՀՅԴ պատմության նորագույն մեկնաբաններին կիրառել միաժամանակ և՛ ձախից, և՛ աջից հարվածելու «խառը» մարտավարությունը: Դատեք ինքներդ. մասնագետ պատմաբանի գիտական կոչում ունեցող Աշոտ Սարգսյանը փորձում է զարգացնել այն տեսակետը, թե, իբր, «ի սկզբանե և մինչև վերջ ՀՅԴ -ն ունեցել է անհեթեթ ու հանցավոր գաղափար, թե հայ ժողովրդի ազատությունը հնարավոր է միայն մեծ երկրների միջամտությամբ, այդ միջամտությանը կարելի է հասնել միայն նրանց ստիպելով, իսկ ստիպել կարելի է միայն ժողովրդի թափած արյամբ[3]»: Հեղինակի՝ ի սկզբանե հետապնդած կեղծարարական նպատակները բացահայտելու համար բավական է վերհիշել հենց «ի սկզբանե» ՀՅԴ -ի գոյության մասին ազդարարող առաջին փաստաթղթի՝ ՀՅ Դաշնակցության «Մանիֆեստի» գաղափարական առանցքը կազմող՝ ինքնօգնության գաղափարը: ՀՅԴ «Մանիֆեստն» ազդարարում էր. «Հայը, որ դեռ երէկ, շլինքը ծռած, եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...», կամ «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ուխտելով մինչև արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար[4]»: Ու՞ր է այստեղ «ի սկզբանե» հույսը մեծ երկրների վրա դնելու «անհեթեթ ու հանցավոր գաղափարը»: Որտե՞ղ է հեղինակի մատնանշած ծայրահեղականությունն ու արկածախնդրությունը, երբ կոչ է արվում հայության բոլոր հատվածներին, շերտերին, անգամ՝ տարիքային խմբերին՝ միավորվել, համախմբվել, գոտեպնդվել՝ ընդհանուր, համազգային նպատակին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրությանը, հասնելու համար. «Եւ դո՛ւք, ալեզարդ ծերունիներ, ոգևորեցէ՛ք ձեր որդոց, օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեանբ: Եւ դո՛ւք, հարուստներ, բաց արէք ձեր քսակները զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ: Եւ դո՛ւ, հայ կին, ոգի ներշնչիր սուրբ գործի մէջ: Եւ դո՛ւ, հայ հոգևորական[5]» և այլն և այլն:

Ու՞ր է վերջապես այն այլամերժության, հատվածականության, կուսակցական նեղմտության ամբաստանությունը, որը կապվում է ՀՅԴ -ի հետ, երբ մեր աչքի առաջ է հստակորեն համազգային նպատակներով առաջնորդվող և նրանց իրականացման համար պայքարի ոչ մի եղանակից չխորշող կազմակերպության պատմությունը: Ակնհայտ փաստերը անտեսելու ճանապարհով ներկայումս ՀՅԴ հիմնադիր սերնդի հասցեին հնչում է մեկ այլ զրպարտություն՝ «Դաշնակցությունը միշտ էլ դեմ է եղել Թուրքիայից անջատվելուն[6]»: Նման քարոզչական հերյուրանքը հիմնվում է այն փաստարկի վրա, որ իր ծրագրային փաստաթղթերում՝ մինչև 1919 թվականը, ՀՅԴ -ն, ի տարբերություն, օրինակ, ՍԴ Հնչակյան կուսակցության, չի ձևակերպել Հայաստանի

անկախության գաղափարը: Սակայն այդ հետաքրքրական երևույթի խորքային դիտարկումը ցույց է տալիս, որ տվյալ փաստը դեռևս չի վկայում այն մասին, որ ՀՅԴ -ն որևէ ժամանակ դեմ է եղել Թուրքիայից անջատվելուն, քանզի մի բան է՝ սկզբունքով անկախական լինելը, մեկ այլ բան՝ անկախությանը հասնելու ցանկության ու հնարավորության բաղդատման վրա հիմնված՝ «հնարավորի արվեստը»: Թեև ՀՅԴ առաջին (1892) և երկրորդ (1907) ծրագրերում բացակայել է Հայաստանի անկախության՝ հստակորեն ձևակերպված պահանջը, սակայն ՀՅԴ պատմությանը շատ թե քիչ տեղյակ յուրաքանչյուր ոք վաղուց է նկատել այն փաստը, որ «Թիւրքայ-Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատութիւնը» (1892) կամ ինքնավարությունը (1907) այն հանգրվաններն էին, որոնք տանում էին դեպի անկախություն: Նման «խոհական չափավորությունը» հիմնազուրկ է դարձնում մի կողմից՝ ՀՅԴ -ին ծայրահեղական ու արկածախնդրական համարողների նախորդ պնդումները, մյուս կողմից՝ նրան հակաանկախականի պիտակ կպցնելու փորձեր անող հեղինակների հարցադրումները: Ինքնին հասկանալի է, որ եթե ՀՅԴ 1892 կամ 1907 թվականի ծրագրերում լինեին Արևմտյան Հայաստանի անկախության բացահայտ պահանջներ, ապա այս անգամ էլ նույն հեղինակները ՀՅԴ-ին կմեղադրեին ծայրահեղականության ու արկածախնդրության մեջ: Մինչդեռ հենց այն փաստը, որ իր ձևավորման շրջանից ՀՅԴ -ն որդեգրեց ոչ թե կարգախոսային - դեկլարատիվ, այլ գործուն մարտավարություն՝ փորձելով գտնել ռազմավարական նպատակի իրականացման մարտավարական առաջնահերթությունները, վկայում է ուղիղ հակառակի մասին: Սա հնարավորություն է տվել ՀՅԴ -ին անել հնարավորը, բայց չհրաժարվել ցանկալիից, քանզի կուսակցության հենց առաջին՝ 1892թ. ծրագիրն իր խորքում արդեն իսկ պարունակում էր Հայաստանի անկախության գաղափարը: Այն, ինչպես ժամանակին նկատել է Վ. Նավասարդյանը, «...Տաճկաստանից զատում ու բաժանում է միմիայն Տաճկահայաստանը և այն դարձնում Հայաստան[7]»:

ՀՅԴ -ի ձևավորման և առաջին տարիների գործունեության պատմությունը ներկայումս քաղաքագիտական և հրապարակախոսական «խաչաձև կրակի» տակ վերցնելու մեկ այլ օրինակ է կուսակցությանը վերագրվող՝ «իր քաղաքական գծի ընդդիմադիրներին ահաբեկելու, նրանց նկատմամբ բռնարարքներ, մատնություններ ու հրոսակային հարձակումներ իրականցնելու[8]» զրպարտությունը: Վերջերս նման մի անհաջող փորձ է ձեռնարկել Արա Սահակյանը՝ ի մի բերելով հայ իրականության մեջ գործող՝ այլ քաղաքական ուժերի ու անհատների հետ ՀՅԴ ունեցած տարաձայնությունների և բախումների մասին վկայող փաստերի այն հատվածը, ուր «տուժող կողմի» դերում հանդես են եկել ՀՅԴ հակառակորդները: Անշուշտ, կարելի էր բերել նման փաստերի ևս մեկ շարք, որտեղ նույն դերում հանդես են գալիս դաշնակցականները, կարելի էր նաև վերհիշել ՍԴ Հնչակյան կուսակցության երկու թևերի՝ մեկը մյուսին ահաբեկելու պատմությունները, կամ հայ ազատամարտին մասնակից այլ կուսակցությունների ու կազմակերպությունների համանման քայլերը՝ համոզվելու համար, որ նրանց շարքում ՀՅԴ -ն միշտ էլ եղել է ամենապարկեշտը, արդարամիտը և, ինչու չէ, նաև՝ ամենակազմակերպվածը: Սակայն Արա Սահակյանը «մասնագիտացել է» միայն ՀՅԴ -ի անցյալը փորփրե-

լու գործում՝ հիմնավորելու համար այն թյուր մտասևեռումը, համաձայն որի, ՀՅԴ -ն իր հիմնադրման օրվանից սկսած դավանել է բացահայտ բռնության՝ ահաբեկչության միջոցով ներազգային կյանքում գերիշխանություն հաստատելու սկզբունքը. «Կուսակցության հիմնադրումից անմիջապես հետո, լրտեսության ու դավաճանության չապացուցված մեղադրանքով, դաշնակցության վճռով (ընդգծումը մերն է) 1891-ին սպանվեց Արսեն Թոխմախյանը (վանեցի ուսուցիչ, հոգևորական, Խրիմյան Հայրիկի աշակերտը): Նույն տարում և նույն կերպ էրզրումում վերացվեց Կերեկցյանը, որը, հեղափոխական լինելով հանդերձ, մերժում էր դաշնակցության հախուռն գործողությունները[9]»: Թե որտեղի՞ց է վերցրել Արա Սահակյանը այս հին հերյուրանքները, որոնք վաղուց մերժվել են ոչ միայն ՀՅԴ -ի, այլև չեզոք ու անկողմնակալ հեղինակների կողմից, մեզ անհայտ է մնում, քանզի եթե հեղինակը վկայակոչեր որևէ սկզբնաղբյուր, ապա ստիպված կլիներ հերքել ինքն իրեն: Վաղուց, շատ վաղուց, երբ ՀՅԴ-ն ամենևին էլ արա սահակյաններից «պաշտպանվելու» խնդիր չուներ և ոչ էլ նպատակ ուներ հերքել իր մասնակցությունը առանձին լրտեսների ու դավաճանների ահաբեկմանը, դաշնակցական մամուլում, գրականության մեջ, ինչպես նաև կուսակցական ղեկավար մարմինների հայտարարություններում տրվել է այս երկու ողբերգական իրադարձությունների գնահատականը: Նախ, ՀՅԴ -ն ո՛չ Արսեն Թոխմախյանին և ո՛չ էլ Խաչատուր Կերեկցյանին երբեք, ո՛չ 1891-ին և ո՛չ էլ հետագայում, դավաճան կամ լրտես չի համարել, ուրեմն՝ ամբաստանության մասին խոսելն անգամ ավելորդ է: Երկրորդ, ո՛չ առաջինին և ո՛չ էլ երկրորդին ահաբեկելու մասին 1891 թվականին դեռևս որպես ուրույն կուսակցություն չձևավորված Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը որոշում չի ընդունել: Եվ վերջապես, երրորդ, և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքի վերաբերյալ ՀՅԴ -ն հետագայում կատարել է իր ինքնուրույն քննությունը, որից պարզվել է հետևյալը. վանեցի վարդապետ Արսեն Թոխմախյանը զոհ է դարձել իր հայրենակից, ծագումով՝ Վասպուրականի Շահբաղի գյուղացի Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան) վրեժխնդրությանը: Նրանց ընդհարման ու թշնամության փաստի մասին վկայել են ոչ թե դաշնակցական, այլ արմենական՝ նույնպես վանեցի, գործիչները (Արսեն Օտյան, հետագայում՝ Տեր Գևորգ քահանա): Ավելին, Արսեն Թոխմախյանին ամբաստանող նամակը, որը նրա մրցակից հոգևորականների ձեռքով հասել է Հունոյին և լցրել վերջինիս համբերության բաժակը, ուղարկվել է Վանից՝ արմենական Գրիգոր Պեռզիկյանի (Շիկահեր) կողմից և այդ մասին վկայում են հենց արմենական գործիչները[10]: Իսկ ահա ՀՅԴ արխիվների լավագույն գիտակ Աբրահամ Գյուլխանդանյանը դեռևս 1939 թվականին է վկայում, որ «Դաշնակցութեան արխիվի մէջ յամենայն դէպս ոչ մի հետք չկայ այդ սպանութեան և ընդհանրապէս Թոխմախեանի լրտես լինելու մասին[11]»: Այնպես որ, ինչպես ասում են՝ բոլոր կետերը դրվել են իրենց տեղերում: Քննությունը և արդյունքների հրապարակումը եղել են բաց, հրապարակային: Ավելին, ՀՅԴ պատմությունից հայտնի է, որ 1890-ական թվականներին հայ լրտեսների ու մատնիչների դեմ իրականացված բոլոր գործողությունները ուղեկցվել են պարտադիր պաշտոնական հայտարարություններով, որոնք տպագրվել են ՀՅԴ մամուլի օրգաններում կամ թռուցիկների տեսքով: Եթե Արսեն Թոխմախյանի դեմ

լիներ դավաճանության ամբաստանություն, ամպայման կլիներ նաև համապատասխան հայտարարություն: Իսկ իրականությունն այն է, որ Վանից արմենական գործիչներից ստացված այդ չարաբաստիկ նամակը, ուր կասկածներ կային Ա. Թոխմախյանի լրտես լինելու մեջ, օգտագործվել է նրա մրցակից - հոգևորական Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանի կողմից, որը կարծում էր, թե Արսեն վարդապետը հավակնում է իր գլխավորած Ատրպատականի թեմի առաջնորդի աթոռին:

Նույնը վերաբերվում է նաև առանձին գործիչների սխալներին կամ ինքնագլուխ քայլերին: Այս առումով ևս ՀՅԴ-ն ոչինչ չի թաքցրել հայ հասարակայնությունից: Դրա վառ վկայությունն է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադիր Խաչատուր Կերեկցյանի ողբերգական սպանության հետ կապված՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնի հայտարարությունը, ուր նշվում էր. «Յանուն ընդհանուր գործի և բազմաչարչար ազգի ազատութեան գաղափարի մենք դիմում ենք հայ յեղափոխականներին, մանավանդ մեր կոմիտէներին, երբէք չդիմել այդպիսի միջոցի: Մենք բարձրաձայն յայտնում ենք, որ այդպիսի սպանութիւնը մենք համարում ենք յանցանք, ուղղուած ազգի շահերի դէմ, որի անունով կատարուում է նա»: Դրանից հետո Հայ Յեղափոխականների Դաշնակցության Կենտրոնը պարզաբանում էր նաև, որ «ՀՅԴ-ը ընկերների վերաբերեալ միայն մի դէպքում թոյլատրելի է համարում այդ միջոցի գործադրությունը, այն է, երբ ապացուցուած է մէկի գիտակցական դաւաճանութիւնը և այդ մահավճիռը կարող չէ լինել առանց Կենտրոնի համաձայնութեան, առանց նրա սանկցիայի[12]»: Իրականությունն այն է, որ ինչպես Արսեն Թոխմախյանի, այնպես էլ Խաչատուր Կերեկցյանի սպանությունների ժամանակ՝ 1891 թվականին գոյություն է ունեցել ոչ թե ներկա ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը, այլ Հայ Յեղափոխականների Դաշնակցություն կազմակերպությունը, որը ղեկավարվել է Կենտրոնական վարչության, կամ Կենտրոնի կողմից: Վերջինս միայն իրավունք ուներ նման վճիռներ կայացնել:

Հարց է առաջանում. ո՞րն է մեր ընդհանուր ցավի ու կորուստների, ինչու՞ չէ, հաճախ նաև սխալների ու ողբերգությունների պատմությունն աղավաղելու ուղղությամբ Արա Սահակյանի ու նրա կուսակիցների կողմից գործադրվող ջանքերի իրական շարժառիթը: Պատասխանն ակնհայտ է դառնում, երբ ծանոթանում ենք այս հեղինակի հրապարակման ժամկետին՝ 2002թ. հոկտեմբերի 27, այո, հոկտեմբերի 27, ողբերգություն, որը ՀՀՇ-ին անհրաժեշտ է անպայման կապել ՀՅ Դաշնակցության՝ որպես գաղափարաքաղաքական որոշակի ուղղության հետ: Հենց դրա համար են այսօր փորփրվում անցյալի տխուր էջերը, նենգափոխվում ակնհայտ փաստերը:

ՀՅԴ-ն վարկաբեկելու նպատակ են հետապնդում նաև նրան հայ ժողովրդին բաժին ընկած դժբախտությունների, մասնավորապես՝ 1894-1896թթ. հայկական կոտորածների մեղսակիցների շարքը դասելու վերջին փորձերը: Երբ նման հնարքի է դիմում մասնագետ-պատմաբանի գիտական կոչում ունեցող Աշոտ Սարգսյանը, ակամայից հարց է ծագում՝ իսկ ո՞ւր մնաց պատմության փաստերի տարրական իմացությունը, որն անհրաժեշտ է ոչ միայն գիտնականին, այլև անգամ բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր հայ

մարդու: Դատեք ինքներդ. Աշոտ Սարգսյանը ոչ ավել, ոչ պակաս պնդում է, որ 1895-1896 թթ. հայկական կոտորածները ՀՅԴ գործունեության հետևանքն էին և դրանից հետո, իբր թե, «...արևմտահայությունը երկրից դուրս վռնդեց իր «ազատարարներին[13]»: Մինչդեռ, կարծում ենք, որ ոչ միայն գիտական կոչում ունեցող պատմաբանին, այլև ուսանողին անգամ պետք է հայտնի լինի այն փաստը, որ մինչև 1895-ի ջարդերը ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանում կամ Օսմանյան կայսրության որևէ այլ տարածքում կոնկրետ որևէ խոշոր ապստամբություն կամ լայն շարժում չի ձեռնարկել, իսկ ջարդերի շրջանում զբաղվել է միայն արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպմամբ: Ավելին, արևմտահայերի գոյամարտի բնօրրան Տարոնում ՀՅԴ-ն լուրջ ներկայություն է դարձել միայն 1895-ի ջարդերից հետո՝ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման և ազգ-բանակ դառնալու հրայրյան գործելակերպի շնորհիվ: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել իրեն ՀՅԴ պատմության գիտակ համարող Ստեփան Պողոսյանի վկայությունն այն մասին, որ «Եթե հնչակը 1890-ական թվականների երկրորդ կեսին հրապարակավ ու ազնվորեն ընդունեց իր սխալները՝ համարելով նաև, որ սեփական խղճին էր լերդացել 300 հազար հայի արյունը, ապա ՀՀԴ-ն մինչև օրս էլ իրեն համարում է անսխալական...[14]»:

Իհարկե, հնչակյանների գործելակերպը չէր 1895-1896 թթ. ջարդերի պատճառը, բայց չի կարելի չընդունել նաև այն փաստը, որ նման գործողությունների մի մասը, մանավանդ 1895-ի Բաբը-Ալիի ցույցը, սուլթան Համիդի համար հայերի զանգվածային կոտորածներ ձեռնարկելու առիթ դարձավ: Բայց ո՞րն է տվյալ պարագայում ՀՅԴ-ի սխալը՝ այն ընդունելու և «անսխալականության» մեղադրանքից խուսափելու համար: Ստեփան Պողոսյանը որպես այդպիսին փաստորեն մատնանշում է միայն ՀՅԴ-ի կազմակերպած ընդամենը մեկ գործողություն՝ Բանկ-Օտտոմանը (1896թ. օգոստոսի 26)՝ այն համարելով դաշնակցական գործելակերպին բնորոշ օրինակ: Նրա կարծիքով, այդ գործողությունը ոչ թե դաշնակցականների մատնանշված «քաջության, ինքնազոհության, հմտության» օրինակ էր, այլ «դրսի աշխարհի» համար նախատեսված ժամանակակից սյուժե, որի արդյունքում սուլթանի հրամանով մորթվեցին 6-ից 10 հազար հայեր, իսկ «արկածախնդրության մասնակիցներից» (նկատի ունի ՀՅԴ անդամներին) սպանվեց ընդամենը մեկ հոգի: Ողջ խնդիրն այն է, որ նախ, Բանկ-Օտտոմանի գործողության մասնակիցները «դրսի աշխարհի» արձագանքի համար չեն զոհաբերել իրենց կյանքը, այլ հայկական բարենորոգումների իրականացման, որի առիթով ՀՅԴ Կ. Պոլսի Կ. Կոմիտեն հրապարակել է հատուկ թռուցիկ[15], երկրորդ, ոչ թե չեն ցանկացել իրենց հետ միասին պայթեցնել Օսմանյան կայսրության բանկը՝ «փառահեղ տրամադրությամբ Մարսել հասնելու համար», այլ չեն կարողացել՝ մեծ դժվարությամբ բանկ մտցված պայթուցիչների անբավարարության պատճառով, և վերջապես, երրորդն ու ամենակարևորը՝ Կ. Պոլսի Կ. կոմիտեն Կ. Պոլսի հայության կյանքը չվտանգելու համար կազմակերպել է Սամաթիայի կռիվները՝ նախօրոք, պլանավորված ձևով՝ ՀՅԴ լավագույն ուժերի վրա վերցնելով Բանկ-Օտտոմանի գրավումից հետո անխուսափելի դարձող թուրք խուժանի հարձակմանը դիմագրավելու գործը: Դրա հետևանքով Բանկ-Օտ-

տոմանի գրավումից հետո ծավալվել է ՀՅԴ մարտիկների և թուրք խուժանի, իսկ հետո նաև կանոնավոր բանակի կռիվը, որի արդյունքում զոհվել են ոչ թե 6-10 հազար անպաշտպան հայեր, այլ ՀՅԴ լավագույն ուժերի մի մասը (Միսաքյան եղբայրներ, Խաչիկ Գնունի և ուրիշներ) և մեծ քանակությամբ թուրք ջարդարարներ: Բավական է հիշատակել այն փաստը, որ համաձայն Բուլղարիայից ստացված մի հեռագրի միայն Սամաթիայի 12 ժամ տևած կռիվներում սպանվել է մոտ 1000 թուրք ջարդարար[16]: Սա է իրականությունը, որը հետևանք էր ըստ էության արդեն իսկ ավարտված 1895-1896 թթ. կոտորածներին հակահարված տալու և բարենորոգումների իրականացման գործը տեղից շարժելու՝ ՀՅԴ-ի ցանկության: Հանուն դրա ՀՅԴ-ն իր վրա վերցրեց անհավասար կռիվը և տվեց թանկագին զոհեր՝ թուրքական իշխանությունների ջարդարարական մոլուցքը խափանելու համար: Ուրեմն, հանցա՞նք էր դա, թե՞ քաջություն և ինքնազոհություն՝ թող դատեն ընթերցողները: Շնորհիվ այդ կռիվների և քիչ անց տեղի ունեցած Խանասորի արշավանքի (1897թ., հուլիս), զսպվեցին հակառակորդի ջարդարարական տրամադրությունները և ամենակարևորը՝ ակնհայտ դարձավ, որ հայը նույնպես կարող է հարվածին հարվածով պատասխանել: Իսկ Խանասորի արշավանքին տրվող «անհաջող մարտական գործողություն[17]» բնորոշումը ցույց է տալիս, որ նրա հեղինակը միմյանցից չի տարբերում մոտ 250 հայդուկների արշավանքը՝ ահաբեկչական գործողությունից, քանզի Խանասորը միայն ու միայն մի ցեղապետի՝ Շարաֆին սպանելու համար չէր կազմակերպվել, այլ մազրիկ ցեղին զսպելու նպատակով:

ՀՅԴ-ի անցած պատմական ուղին խորհրդանշող այս փաստերը կեղծելու ու խեղաթյուրելու փորձերի մանրամասն քննությունը ամենևին էլ ՀՅԴ-ին անհիմն կերպով վերագրվող «անսխալականության բարդույթը» հիմնավորելու փորձ չէ, քանզի մի բան է ցանկացած ուժի գործունեությանն ուղեկցող սխալների օբյեկտիվ քննությունը, մեկ այլ բան՝ այդ սխալները բացահայտելու անվան տակ՝ պատմության հանրահայտ փաստերի խեղաթյուրումը:

ՀՅ Դաշնակցությունը որպես քաղաքական արժեք և գաղափարախոսություն, վարկաբեկելու անզուսպ մոլուցքը հաճախ հասնում է այն աստիճանի, որ նման մտասևեռումով տարված ուսումնասիրողներն ու հրապարակախոսները չեն նկատում անգամ, թե որտե՞ղ է վերջանում միջկուսակցական բանավեճերի լաբիրինթոսը և սկսվում՝ համազգային միասնության ու համերաշխության դաշտը: Քանզի խնդիրների այն համակարգը, որոնց լուծման դժվարին գործը ստանձնել էր ՀՅԴ-ն XIX դարի վերջերին կամ XX դարի սկզբներին, գտնվում էր համազգային միասնության սկզբունքի, կոնկրետացման ու կիրառման՝ ողջ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման հարթության վրա: Այդ քաղաքականության տիրույթում, ըստ էության, չէր էլ կարող լինել քաղաքական տարբեր ուղղությունների պայքար: Ուրեմն, որքա՛ն պետք է կուրանալ ՀՅԴ-ի հանդեպ ունեցած անսահման ատելության մեջ, որպեսզի օրինակ՝ XX դարի սկզբներին ՀՅԴ հիմնադիր Քրիստափոր Միքայելյանի նախաձեռնած «Փոթորիկ» գործողությունը ևս դասվի սեփական քաղաքական գծի ընդդիմադիրներին ահաբեկելու, տեռորի ենթարկելու օրինակների շարքը: Հայտնի է, որ ժողովրդի ինքնապաշտ-

պանության գործը կազմակերպելու համար 1901թ. գարնանը Ֆիլիպեում (Բուլղարիա) տեղի ունեցած «Դաշնակցության կամքը ներկայացնող մարմնի» ժողովը հարկադրաբար որոշում կայացրեց բռնի հանգանակության դիմելու մասին: Հաջորդ տարվանից՝ անձամբ Քր. Միքայելյանի ղեկավարությամբ, սկսված այդ ձեռնարկը, որը հայտնի է «Փոթորիկ»-ի գործ անվամբ, նպատակ ուներ շտապ կերպով խոշոր գումարներ հանգանակել՝ թուրքական նոր ջարդերի սպառնալիքի տակ գտնվող արևմտահայությանը զինելու համար: Հայտնի է, որ արդեն 1904 թվականին կայացած ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովը արձանագրեց, որ «Փոթորիկ»-ը կուսակցությանն ապահովել է 432.500 ֆրանկ (կամ 163.208 ռուբլի), որը նշանակալի գումար էր[18]: ՀՅԴ-ն ինքը կարծում էր, որ նման ձեռնարկը հակասում է ՀՅԴ գաղափարա-բարոյական սկզբունքներին, ուստի պատահական չէ, որ երրորդ ընդհանուր ժողովը այն որակեց որպես «բացարձակ չարիք» և խիստ սահմանափակեց բռնի հանգանակության կիրառումը, իսկ 1907-ին կայացած չորրորդ ընդհանուր ժողովը ընդհանրապես արգելեց այն:

Թուրքական զորքի կողմից շրջապատված Սասունը օրհասի մեջ էր, շուտով սկսվելու էին հայ-թաթարական կռիվները: Չլինեին «Փոթորիկ»-ի հանգանակած խոշոր գումարները և նրանցով գնված մեծ քանակությամբ զենքը՝ ոչ միայն հնարավոր չէր լինի 1904 թվականին սասունցիներին փրկել կոտորածից, այլև կանխել արևելահայության բնաջնջումը՝ Արարատյան դաշտում և Զանգեզուրի լեռներում: Դրանով ստեղծվեցին այն ռազմատեխնիկական հնարավորությունները, որոնց միջոցով 1906 թվականին Անդրկովկասի բուն հայկական հատվածում՝ Արևելյան Հայաստանում, ՀՅԴ-ն ինքնապաշտպանությունից անցավ կանխարգելիչ հարվածներ հասցնելու մարտավարությանը՝ վերականգնելով Երևանի նահանգի, Զանգեզուրի ու Ղարաբաղի նշանակալից մասի հայկական նկարագիրը, բացելով Արևելյան Հայաստանի կարևորագույն ռազմավարական կետերում հաստատված թաթարական գյուղերի կողմից փակված՝ հայկական առանձին գավառները միմյանց կապող ճանապարհները: Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, երբ ամփոփելով հայ-թաթարական ընդհարումների և նրանցում ՀՅԴ խաղացած վճռորոշ դերակատարության արդյունքները, նկատում է, որ «Ընդհարումները համերաշխության ոգի արթնացրին և միասնական կամք կոփեցին հայության մեջ: Ցրված գրեթե ամբողջ Կովկասում, առանց ներքին անմիջական կապի, ամբողջ հայությունը կռիվների ընթացքում անխտիր մի միասնական ճակատ կազմեց: Իր երկարատև պատմության ընթացքում ժողովուրդը շատ քիչ անգամ էր ի հայտ բերել այդպիսի միասնականություն»[19]:

1905-1906 թվականներին ՀՅԴ-ի կողմից իրականացված հենց այդ հեռատես քայլերն էին, որ Արևելյան Հայաստանի տարածքում ապահովեցին հայերի համար կենսականորեն անհրաժեշտ՝ ժողովրդագրական գերակշռություն՝ 1918 թվականին Հայաստանի առաջին հանրապետության հիմքերը դնելու և ամրապնդելու համար, առանց որի չէր ստեղծվի նաև Հայաստանի ներկա՝ երրորդ հանրապետությունը: Եվ այսօր իրեն երրորդ հանրապետության հիմնադիրներից մեկը համարող քաղաքական գործիչը՝ Արա Սահակյանը, առանց դույզն - ինչ խղճի խայթ զգալու, «Փոթորիկ» գործողությունը դա-

սում է «բռնարարքների» և «հրոսակային հարձակումների» շարքը: Սերունդների երախտամոռությո՞ւն է սա, թե՞ պատմական փաստերի վատ իմացություն՝ դժվար է ասել: Բայց մի բան ավելի քան ակնհայտ է. «Փոթորիկ» գործողությունը պարզունակ ահաբեկչությունների շարքը կարող է դասել միայն քաղաքական հակառակորդի հանդեպ անսահման ատելությամբ կուրացած մարդը, քանզի առանձին բռնարարքներն ու սպանությունները, որոնք այդ տարիներին դաշնակցականները գործադրել են հայ մեծահարուստների հանդեպ, ՀՅԴ անդամներին ցարական ոստիկանության ձեռքը մատնելու փորձերի պատասխանն էին սոսկ:

Տեղեկացնենք ՀՅԴ պատմությունը արդիական ինչ-ինչ խնդիրների լուծման միջոց համարողներին, որ նախորդ սերունդների արյան ու քրտինքի միջոցով փրկված հայրենի հողի մի հատվածը և նրա վրա կառուցված պետականությունը, այո՛, ձեռք է բերվել նաև բռնության միջոցով, որի կիրառման կոնկրետ ձևերն ու եղանակները ներկա քաղաքական իրողությունների պայմաններում գուցե նաև արտառոց են թվում, բայց իր ժամանակի ու պայմանների համար՝ արդարացի էին և միանգամայն տրամաբանական: Եվ քանի որ հենց ՀՅԴ-ն է եղել այդ օրհասական ժամանակներում հայ ժողովրդին առաջնորդող հիմնական ուժը, ոչ միայն քաղաքական հակառակորդների, այլ հաճախ նաև ժողովրդի հիշողության մեջ նրա մասին ձևավորվել և պահպանվել են նման կարծրատիպեր, որոնք ճիշտ գնահատելու և իմաստավորելու համար երևույթը պետք է քննել տվյալ ժամանակաշրջանի պայմանների ու միջավայրի համատեքստում: Հակառակ դեպքում կաղավաղվի ոչ միայն մեր պատմությունը, այլև կթունավորվի ներկան՝ վախի, անվստահության և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելով ՀՅ Դաշնակցության հանդեպ:

ՀՅԴ - ԻԹԹԻՀԱՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀՅԴ բոլոր հակառակորդների համար միշտ էլ «ամենահրապուրիչ» թեմաներից մեկն է եղել 1908թ. երիտթուրքական պետական հեղաշրջմանը նախորդող և հաջորդող մի քանի տարիներին արձանագրված՝ Իթթիհատ - ՀՅԴ համագործակցության փաստը:

Երիտթուրքերի կուսակցության և կառավարության հետ համագործակցությունը ՀՅԴ -ի հասցեին ուղղված «ամենամոդայիկ» մեղադրանքներից է նաև այսօր: Այս առումով ՀՅ Դաշնակցության պատմության ժամանակակից քննադատները պնդում են, թե, իբր, ՀՅ *Դաշնակցությունը, մերձենալով ու համագործակցելով իթթիահատականների հետ, լիովին հրաժարվեց իր ծրագրային հիմնանպատակից՝ Հայկական հարցից, այդ համագործակցությունը շարունակեց նաև Ադանայի կոտորածներից հետո, զինաթափեց ժողովրդին և կոտրեց նրա դիմադրական ոգին և այլն, և այլն*[20]:

Փորձելով պատասխանել այս հարցադրումներին՝ նախ տեղեկացնենք, որ հայ և համաշխարհային պատմությունն ու քաղաքական միտքը չի ժխ-

տել մարտավարական փոխզիջումներն ու ժամանակավոր հաշտությունները՝ անգամ ամենավտանգավոր ու ոխերիմ թշնամու, թեկուզև Թուրքիայի հետ[21]: Փոխզիջումների քաղաքականությունը բնորոշ է ցանկացած ողջախոհ քաղաքական կուսակցության և կառավարության: Տվյալ դեպքում հենց այդպիսի բնույթ ուներ Իթթիհատ - ՀՅԴ ժամանակավոր գործակցությունը 1907-1911թթ.:

Պատմագիտության մեջ հասարակական երևույթները, դեպքերն ու իրադարձությունները ճիշտ բացահայտելու և գնահատելու համար, որպես մեթոդաբանական սկզբունք, պետք է դրանք դիտարկել ու քննել կոնկրետ պատմական պայմանների, քաղաքական, իրավական, անգամ սոցիալ-հոգեբանական գործոնների ամբողջության հաշվառման միջոցով: Այն հարցը, թե ինչո՞ւ ՀՅԴ-ն ժամանակավոր համագործակցության գնաց երիտթուրքերի հետ, անշուշտ, ունի իր պատմական բացատրությունն ու տրամաբանությունը: Հայտնի է, որ Սասունի 1904թ. ապստամբության անհաջողությունը բավական մեծ հուսալքություն էր առաջացրել: Գնալով թուլանում էր արևմտահայերի ազատագրական պայքարի թափը, ժողովրդի մեջ նկատվում էր հոգնածություն: Այդ նույն ժամանակ ուժեղանում էր երիտթուրքական կազմակերպությունների պայքարը՝ աբդուլհամիդյան վարչակարգի դեմ: Հայ ժողովուրդն արդեն ճաշակել էր կարմիր սուլթանի կառավարության ջարդարարական քաղաքականության դառնությունները: Նրանից այլևս սպասելիքներ չկային: Իսկ սեփական ուժերով ազատագրվելու ռեսուրսները շատ քիչ էին: Տեղի ունեցած ջարդերից հետո միայն քրդերը բավական էին՝ արևմտահայերին ճնշելու և հնազանդության մեջ պահելու համար:

Եվ ահա, «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը ասպարեզ իջավ միդհատյան սահմանադրության վերականգնման և հուրիեթի (ազատության) կարգախոսներով: ՀՅԴ-ն, տեսնելով սուլթան Համիդի իշխանության իսկական դեմքը, Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների այլ քաղաքական ուժերի հետ համախորհուրդ, ժամանակաշրջանի ու հանգամանքների հրամայականով, որոշեց գործակցել Իթթիհատի հետ՝ սուլթան Համիդի բռնապետությունից ազատվելու, իսկ եթե հնարավոր լինի՝ նաև խաղաղ - սահմանադրական ճանապարհով արևմտահայությանը հուզող որոշ հիմնախնդիրներին լուծում տալու համար: Չպետք է մոռանալ, որ սուլթանի դեմ պայքարում ՀՅԴ -ի և Իթթիհատի նպատակներն ընդհանուր էին, քանի դեռ ձեռք չէր բերվել հաղթանակը: Հաղթանակից հետո նրանց նպատակները վաղ թե ուշ բաժանվելու էին: Դա լավ էր հասկանում թե՛ մեկ, թե՛ մյուս կողմը:

Հենց այդ շրջանում էլ Ռուսաստանում, Իրանում և աշխարհի մի շարք այլ երկրներում տեղի էին ունենում հեղափոխություններ: Առաջին պլան էր մղվել սոցիալ - դասակարգային և հեղափոխական պայքարի միջոցով՝ ազգային - քաղաքական խնդիրների լուծման հնարավորության փնտրտուքը: Իսկ ռուսական առաջին հեղափոխությունը նկատելի ազդակ դարձավ նաև երիտթուրքական հեղափոխության (պետական հեղաշրջման) համար:

Եվ ահա, նման հանգամանքների օրինաչափ թելադրանքով ՀՅԴ-ն դիմեց հայկական հարցին չափավոր լուծումներ գտնելու մարտավարությանը՝ չհրաժարվելով իր վերջնական նպատակներից: Այս նոր գործելակերպն իր մարմնավորումը գտավ կուսակցության 1907թ. ծրագրում: 1907թ. ընդունված

ծրագրի հիման վրա 1908թ. սեպտեմբերի 1-ին ՀՅԴ-ն հանդես եկավ իր պլատֆորմով՝ որպես խորհրդարանական ընտրություններում ներկայացվող քաղաքական հայտ: Նրա հիմքում դրված էր Օսմանյան կայսրությունը ֆեդերատիվ՝ դաշնային հիմունքներով վերակազմավորելու խնդիրը, որն ամենևին էլ նահանջ չէր հայկական հարցի լուծման ճանապարհից, այլ փաստորեն, նրա իրականացման հանգրվաններից մեկը: Պլատֆորմը հիմնված էր այն գաղափարի վրա, որ ՀՅԴ-ի կողմից Օսմանյան կայսրության ամբողջականության ճանաչումը պայմանական բնույթ ունի, այսինքն՝ քանի դեռ այդ երկիրը կլինի սահմանադրական - ժողովրդավարական, ՀՅԴ-ն կգործի տվյալ ամբողջականության շրջանակներում: Միաժամանակ, խնդիր էր դրվում հասնել Արևմտյան Հայաստանի վարչական ապակենտրոնացման կարգավիճակին՝ մահմեդականների հետ հայերի իրավահավասարության ապահովման, վիլայեթների սահմանների փոփոխման (միաձույլ ազգային համախմբումներ ստեղծելու համար), խոսքի և խղճի ազատության, դասային ու դասակարգային առանձնաշնորհումների վերացման և այլ ճանապարհներով: Այսպիսով, 1908 թվականից հետո ՀՅԴ -ն փոխում էր իր պայքարի մարտավարությունը, բայց ո՛չ նպատակը:

ՀՅ Դաշնակցության օրինակով, մի փոքր ավելի ուշ, հայ ազգային մյուս կուսակցությունը՝ ՀՍՌԿ-ը, ինչպես նաև ՍԴ Հնչակյան կուսակցությունը, չափավորեցին իրենց քաղաքական պահանջները և փորձեցին գործել քաղաքական պայքարի օրինական եղանակներով:[22] Հավելենք, որ ՍԴ Հնչակյան կուսակցությունը համագործակցեց թուրքական մեկ այլ՝ անգլիական կողմնորոշում ունեցող Իթթիլյաֆ (Ազատություն և համաձայնություն) կուսակցության հետ:

Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե ՀՅԴ-ն և հայ ազգային մյուս կուսակցությունները հրաժարվել են հայկական հարցից: Նրանք պարզապես ժամանակի և հանգամանքների հրամայականով փորձեցին ապավինել հայկական հարցի լուծման ավելի խաղաղ, բարեշրջական ուղուն (գործելակերպին): Բայց կյանքը ցույց տվեց, որ Թուրքիան այն երկիրը չէր, որտեղ երբևէ հնարավոր կլիներ հպատակ ժողովուրդների ազգային-մշակութային իրավունքների հարգումը, ազգային հարցի քաղաքական լուծումը և այլն: Գործակցության փորձն իրեն չարդարացրեց. իթթիհատականները այն ի չարս օգտագործեցին՝ ընդդեմ հայ ժողովրդի: Անշուշտ, ՀՅԴ շարքերում կային գործիչներ՝ Արամ Մանուկյանը, Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), Ա. Վռամյանը, Վ. Փափազյանը (Կոմս), էլ չենք խոսում՝ Անդրանիկի և փորձառու մյուս ֆիդայիների մասին, որոնք վերապահ էին երիտթուրքական «հեղափոխության» նկատմամբ[23]:

Մյուս կողմից ՀՅԴ -ն որքան էլ գիտակցաբար չափավորում էր իր քաղաքական պահանջները և պայքարի ձևերը, դա ամենևին էլ չէր նշանակում, թե նա հրաժարվում էր արևմտահայության ազատության ու անկախության իդեալից: Եթե ՀՅԴ մամուլում կամ նրա գործիչների հրապարակային ելույթներում մարտավարական՝ քաղաքական կամ դիվանագիտական նկատառումներով խաղաղության ու համագործակցության կոչեր էին արվում, ապա դա ամենևին էլ չէր նշանակում, թե կուսակցությունը բոլորովին մոռացության էր մատնել ինքնապաշտպանության խնդիրը: Սակայն, միաժամանակ հասկա-

նալի է, որ առնվազն անմտություն կլիներ, եթե ՀՅԴ Բյուրոյի օրգան «Դրոշակը» կամ Կ. Պոլսում լույս տեսնող «Ազատամարտը» այդ ժամանակ իրենց էջերում զենք կուտակելու և ապստամբելու կոչեր տպագրեին:

Որքան էլ որ ՀՅԴ-ն հրապարակայնորեն խոսում էր իր մարտավարությունը փոխելու մասին, հնարավորության սահմաններում՝ ընդհատակյա եղանակներով, ինքնապաշտպանության նպատակով գավառներում զենք ու զինամթերք էր կուտակում: Խնդրո առարկա շրջանում թեև այդ հոսքը պակասեց, բայց ամենևին էլ կանգ չառավ: 1907թ. ՀՅԴ 4 -րդ Ընդհանուր ժողովի հաստատած ընդամենը 1 միլիոն ֆրանկ բյուջեի ամենամեծ մասնաբաժինը՝ 35 տոկոսը, հատկացվել էր ժողովրդին գաղտնի զինելու համար[24]: 1908թ. միայն Վանում կային զենքի տասնյակ պահեստներ[25]: 1909 թ. գարնանը (մարտին) ՀՅԴ Դիարբեքիրի նահանգի Վիշապաձորի շրջանային ժողովը ընդամենը 500 ոսկի կազմող տարեկան բյուջեի ուղիղ կեսը հատկացրեց ինքնապաշտպանական նպատակներին[25ա] և այլն: Ուստի ներկայումս անիմաստ է անգամ խոսել ժողովրդին «զինաթափ» անելու մասին:

ՀՅԴ -Իթթիհատ մարտավարական գործակցության խնդրի շուրջ ուշագրավ տեսակետ է արտահայտել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Համբարյանը: «Մեզ թվում է,- գրում է նա,-որ երիտթուրքերի հետ Դաշնակցության այդ համագործակցությունը պիտի ճիշտ համարել, քանզի երիտասարդ թուրքերը, այսպես թե այնպես, Աբդուլ Համիդի դեմ պետք է հաղթանակ տաներին... Եթե դաշնակցականները չմիանային նրանց, մեղադրվելու էին սեպարատիզմի ու դավաճանության մեջ: Նորելուկ կառավարիչները դրանով պետք է արդարացնեին իրենց հակահայկական վարքագիծը: Ընդհակառակը դաշնակցականները, միանալով երիտթուրքերին, նրանց զրկում էին այդ հիմքից և քաղաքական ու բարոյական իրավունք էին ձեռք բերում՝ ներկայացնելու իրենց ազգային պահանջները[26]»:

Որքան էլ անողոք լինեն ՀՅԴ -Իթթիհատ համագործակցության մասին հետագայի բոլոր որակումներն ու գնահատականները, տեղի ունեցածը տվյալ կոնկրետ պատմա -քաղաքական պայմաններում ընթացող դեպքերի և իրադարձությունների հանտեքստում անցանկալի, բայց հարկադիր քայլ էր:

Ամփոփելով այս ամենը՝ տեսնում ենք, որ տևական ժամանակ ՀՅԴ -ն Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիայից քաղաքական անջատման պահանջ չի բարձրացրել, և այդ իմաստով անհիմն են թուրք ու, ըստ էության, նրանց անուղղակի կերպով ձայնակցող ՀՀՇ -ական գաղափարախոսների այն պնդում - մեղադրանքները, թե՛ իբր, արևմտահայոց բաժին հասած ցավալի ու տխուր ճակատագիրը հետևանք էր հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅԴ -ի վարած հեղափոխական, անջատողական, արկածախնդրական քաղաքականության: Պատմական փաստերն ու իրողություններն ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանին և արևմտահայությանը պատուհասած մեծ ողբերգությունը թուրքական կառավարությունների՝ հետևողականորեն վարած հայաջինջ քաղաքականության հետևանքն էր: Այն իբրև պետական քաղաքականություն՝ սկսեց կարմիր սուլթան Աբդուլ Համիդը, իսկ վերջնականորեն իրագործեցին ու ավարտին հասցրին երիտթուրքերն ու քեմալականները: Ուստի միանգամայն իրավացի էր ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը, գրելով, որ «...1907թ. վերջին բռնած քաղաքական նշուած ուղեգծի

համար այսօր Դաշնակցութեան հարցէին մեղադրանք շպրտելը շատ ավելի հեշտ գործ է, քան թէ այն խորքային երևույթներ բացահայտումը, որոնք այդ կուսակցութեան գլխավորներին հակադրում էին, ազգի գոյատևման խնդիրներին համեմատ, ստիպողաբար ընտրելու նման գործընթաց:Համոզուած եմ, եթէ Դաշնակցութեան ղեկավարութինը չընդունէր քաղաքական այդ դիրքորոշումը, ապա այնժամ և այսօր կը գտնուէին մարդիկ, որոնք նրան կըմեղադրէին հակառակ ծայրից՝ երիտթուրքերի հետ լեզու չգտնելու համար»[27]:

Երիտթուրքերի կազմակերպած պետական հեղաշրջման փուլում ՀՅԴ ցուցաբերած նոր մարտավարությունը հիմնավոր ապացույցն է այն բանի, որ հայերը, ի դեմս իրենց գլխավոր կուսակցության, ապստամբներ ու անջատողականներ չեն եղել, այլ պատմության որոշակի շրջափուլերում նաև հայ, թուրք, քուրդ և այլ ժողովուրդների համակեցության ու համագործակցության եզրեր են փնտրել, սակայն թուրքական իշխանությունները նման քաղաքականությանը պատասխանել են կեղծ բարեկամությամբ և ի վերջո՝ անսքող թշնամանքով ու կոտորածներով:

Այս ակնհայտ փաստերի առկայության պայմաններում ՀՅԴ պատմության նորօրյա «մեկնաբանները» մի կողմից կուսակցությանը մեղադրում են ծայրահեղականության և հեղափոխական արկածախնդրության մեջ, որն, իբր, պատճառ է դարձել Թուրքիայում հայերի բնաջնջման համար, իսկ մյուս կողմից՝ ընդհակառակը. 1908թ. պետական հեղաշրջումից հետո Իթթիհատի հետ համագործակցելու և դրանով իսկ՝ հայոց մարտական-դիմադրական ուժը կազմալուծելու մեջ: Ավելորդ է նշել, որ այդ մեղադրանքները տրամաբանորեն հակասում են միմյանց, ավելին, ՀՅԴ մարտավարությունը շփոթում են ռազմավարության հետ՝ ստանալով բացահայտ զրպարտությունների կերպարանք: Բերենք մի քանի օրինակ. «Երիտթուրքերին տված հավատարմության երդումը, ըստ էության, պահպանվեց 1915ին, 1916ին, 1917ին...: Հայտնի չէ, թե Դաշնակցությունը ե՞րբ և ո՞ր փաստաթղթով է չեղյալ հայտարարել այդ դաշինքը»[28],- բացահայտորեն ստում է «Հայկական ժամանակի» մեկնաբան Գագիկ Խաչատրյանը: Նույն թերթում տեղ է գտել նաև մեկ այլ մեկնաբանություն. «Իսկ 1908ին նրանք հավատարիմ քաղաքացիներ էին, այնքան հավատարիմ, որ չսթափվեցին նույն 1908ին (?) Ադանայում կազմակերպված հայկական ջարդերից հետո: Չսթափվեցին և չփորձեցին համախմբել հայկական ինքնապաշտպանական ցաքուցրիվ ջոկատները, չկարողացան զինված դիմության համար զինել հայկական բնակչությանը, երբ Օսմանյան կայսրության ֆինանսական, տնտեսական միջոցների 60 տոկոսը հայերի ձեռքին էր»[29], -պնդում է ոմն Միքայել Գաբրիելյան:

Բայց արդյո՞ք դա այդպես է եղել, երբ ամենքին է հայտնի, որ 1907 -ին Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ կոնգրեսում ձևավորված ՀՅԴ -Իթթիհատ մարտավարական փոխգործակցությունը ունեցել է ոչ միայն սկիզբ, այլև ավարտ: Ընդ որում, անգամ համագործակցության փուլում, ՀՅԴ -ն չի դադարել Իթթիհատի հետ հնարավոր դիմակայությանը նախապատրաստվելուն: Դատեք ինքներդ. 1909 -ին, երբ դեռևս տեղի չէր ունեցել ՀՅԴ -Իթթիհատ խզումը, հրավիրվում է ՀՅԴ 5-րդ Ընդհանուր ժողովը, որի որոշումների մեջ հստակորեն ամրագրվում է ինքնապաշտպանության նախապատրաստվելու անհրաժեշտությունը՝ խնդիր դնելով այն կազմակերպել

ժողովրդական ու անկուսակցական հիմունքներով, միաժամանակ նկատելով, որ «վտանգի ատեն Դաշնակցութիւնը հրապարակ կու գայ իր ամբողջ ուժով...»[30], իսկ քիչ անց՝ 1911թ. օգոստոս - սեպտեմբերին, Կ. Պոլսում կայացած ՀՅԴ 6 -րդ Ընդհանուր ժողովը, արձանագրելով այն փաստը, որ, հակառակ համագործակցության ուղղությամբ ՀՅԴ գործադրած ջանքերին, Իթթիհատի և նրա կազմած կառավարության՝ հայերի հանդեպ վերաբերմունքը ընդհանուր առմամբ մնացել է ոչ բարեկամական, որոշում է առկա դժգոհություններն ամփոփող հայտարարագիր ուղարկել Իթթիհատի առաջիկա համագումարին և հստակ բարեփոխումներ չտեսնելու պարագայում՝ դադարեցնել բոլոր հարաբերությունները: Ժողովն ընտրում է հատուկ «Ինքնապաշտպանության մարմին», որի մեջ են մտնում Անդրանիկը, Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Ռոստոմը և ուրիշ ականավոր գործիչներ ու ֆիդայիներ:

1911-1912 թթ. ընթացքում ակներև դարձավ ՀՅԴ-Իթթիհատ հարաբերությունների աստիճանական սառեցումը, որը հանգեցրեց նրանց կապերի խզմանը: Քաղաքական նկատառումներով, ՀՅԴ վտանգավոր համարեց միանգամից խզել կապերը Իթթիհատից: Քանի որ այդ ժամանակ ընթանում էր թուրք-իտալական (Տրիպոլիտանական) պատերազմը և որպեսզի Թուրքիայում տուրք չտրվեր հակահայկական տրամադրությունների բորբոքմանը ու առիթ չստեղծվեր հայերին հակապետականության մեջ մեղադրելու, Հ. Յ. Դաշնակցությունը կոչ արեց արևմտահայությանը ոչ միայն լիակատար լոյալություն պահպանել, այլև «ազնվորեն կատարել իրենց քաղաքացիական պարտքը»[30ա]:

6-րդ Ընդհանուր ժողովի ընդունած հայտարարագիրը Իթթիհատին հանձնվեց 1912թ. սկզբին՝ խորհրդարանական նոր ընտրություններից առաջ: Տեղեկացնենք նաև ՀՅԴ պատմությանը անտեղյակներին, որ ՀՅԴ - Իթթիհատ պաշտոնական խզումը տեղի է ունեցել 1912թ. մայիսի 5-ին՝ Իթթիհատին ներկայացված նոր պահանջագրի հիման վրա[31]: Այդ առիթով ՀՅԴ Կ. Պոլսի Կենտրոնական Կոմիտեն 1912թ. հունիսի 1 -ի թիվ 17 շրջաբերականով տեղեկացրել է իր շարքերին՝ Իթթիահատի հետ խզման մասին: Այս փաստերը ցույց են տալիս, թե որքան մակերեսային են ՀՅԴ -ի հասցեին հնչող այն մեղադրանքները, որ «երիտթուրքերին հավատարմության երդումը» պահպանվել է 1915, 1916, 1917 թթ.: Սա վկայում է նաև նրանց հեղինակների անտեղյակության ու քաղաքական շահարկումներով զբաղվելու մասին: Դրանից հետո՝ 7-րդ Ընդհանուր ժողովում (1913թ. օգոստոս, Կարին), ընդունվեց, իսկ 8-րդ Ընդհանուր ժողովի (1914թ. հուլիս, Կարին) որոշումներով ամրագրվեց այն անխախտ սկզբունքը, որ հնարավոր պատերազմի պարագայում ՀՅԴ -ն որդեգրելու է հետևյալ դիրքորոշումը՝ յուրաքանչյուր երկրի հայ քաղաքացիները պետք է կատարեն սեփական պարտականությունները՝ տվյալ երկրի հանդեպ: Ստեղծված կացության մեջ դա, փաստորեն, միակ ելքն էր, քանզի պետականազուրկ հայությունը հայտնվել էր մուրճի ու սալի արանքում. Թուրքիան ու Ռուսաստանը պատրաստվում էին պատերազմի, ուստի ՀՅԴ -ն որպես և՛ արևմտահայերի, և՛ արևելահայերի շահերի արտահայտիչ, ստիպված էր որդեգրել չեզոք կեցվածքներ: Այլ բան է, որ դա ձեռնտու չէր ո՛չ ցարական կառավարությանը, որը արևելահայությանը պարտադրում էր սկսել կամավորական շարժում, և ո՛չ էլ երիտթուրքերին, որոնք ՀՅԴ -

ին առաջարկում էին դաշինք՝ ընդդեմ Ռուսաստանի: Ուրեմն, որքան էլ այսօր փորձեն ՀՅԴ ընդդիմախոսները տրամագծորեն հակառակ ծայրերից մեղադրել ՀՅԴ -ին՝ մի կողմից երիտթուրքերի հետ կույր համագործակցության, իսկ մյուս կողմից, կամավորական շարժմանը մասնակցելով՝ արևմտահայության կյանքը վտանգելու մեջ, իրականում չեն կարող մատնանշել կուսակցության 7-րդ և 8-րդ Ընդհանուր ժողովներում որդեգրված չեզոքության սկզբունքի այլընտրանքը: Եվ հենց այստեղ է հարցի մեխը, բուն էությունը՝ ՀՅԴ -ի որդեգրած պաշտոնական դիրքորոշումը փաստորեն միակն էր տվյալ անելանելի իրավիճակում: Բայց քանի որ անգամ նման դիրքորոշումը չփրկեց արևմտահայությանը, ուրեմն ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության ծրագրման ու իրականացման խնդրի տեսանկյունից ամենևին էլ նշանակություն չուներ այն հարցը, թե ինչպե՞ս իրենց կպահեն հայերը: Նման պայմաններում ՀՅԴ -Իթթիհատ համագործակցության, իսկ քիչ անց՝ խզումի ու մոտեցող պատերազմի հանդեպ որդեգրված չեզոքության սկզբունքները չդիմացան ժամանակի քննությանը, ոչ թե այն պատճառով, որ այդ սկզբունքները սխալ էին, այլ որովհետև հայերի բնաջնջման ու տեղահանման որոշումներն ընդունված էին նախօրոք: ՀՅԴ -ն փորձարկեց տվյալ քաղաքական նպատակները չեզոքացնելու՝ փաստորեն հնարավոր բոլոր տարբերակները, սակայն հանկարծահաս պատերազմը և ուժերի անհավասարության գործոնը ի վերջո ապահովեցին բոլորովին այլ արդյունքներ:

Սրանից կարող ենք եզրակացնել, որ ՀՅԴ -Իթթիհատ համագործակցության պատմական փաստի մեջ ամենևին էլ չկար որևէ ազգակործան նպատակադրում, այլ առկա էր սոսկ գազանին զսպելու ժամանակավոր մարտավարությունը:

Եզրակացնելով՝ փորձենք պարզել, թե ո՞րն է տվյալ պատմական փաստը քաղաքական շահարկումների առարկա դարձնելու պատճառը՝ արդյո՞ք միայն ՀՅԴ -ին վարկաբեկելու կամ նրան «թրքամետ» պիտակը կպցնելու ձգտումը: Անշուշտ, ո՛չ, քանզի նման պիտակը և մեր ժողովրդի հավաքական հիշողությունը գտնվում են միմյանցից 180 աստիճանով հակադիր հարթությունների վրա: Բուն իրականությունն այն է (և դրա վրա, դժբախտաբար, քիչ ուշադրություն է դարձվում), որ ՀՅԴ -Իթթիհատ համագործակցության մասին գրող ՀՀՇ -ական հեղինակները իրականում սպասարկում էին ձախողված «Թուրք - հայկական հաշտեցման հանձնաժողովի» քաղաքական նպատակները: Ուստի, նրանք փորձում էին պատմական փաստերով ցույց տալ, որ մեր հասարակայնության աչքում անգամ՝ ամենահակաթուրք ուժի համարումն ունեցող ՀՅԴ -ն ժամանակին համագործակցել է թուրքերի հետ: Ուրեմն, այսօր դիմադրելով հայ - թուրքական «հաշտեցմանը», ՀՅԴ -ն խաչ է քաշում սեփական պատմության վրա կամ, ինչպես իրենք են պնդում՝ աղբանոց է նետում այդ պատմությունը: Այստեղից էլ պարզ է եզրակացությունը՝ մի՛ խանգարեք մեզ անել այն, ինչով ինքներդ նույնպես զբաղվել եք:

Ինքնին հասկանալի է, որ Հայոց ցեղասպանությունը կանխելու նպատակ ունեցող փոխգործակցությունը որևէ ձևով չի կարող դրվել ցեղասպանության փաստը ժխտող երկրի հետ «հաշտվելու» ՀՀՇ-ական ներկա փորձերի կողքին: Ուրեմն, տարբեր դարաշրջանների և նրանցից բխող խնդիրների այս մեխանիկական մեկտեղումը ոչ թե պատմությունից դասեր քաղելու, այդ թվում

և ՀՅԴ -ի սխալները բացահայտելու, և դրանց կրկնությունից խուսափելու նպատակ ունի, այլ սոսկ ներկա պետական - քաղաքական կյանքի մեջ ՀՀՇ -ի քաղաքական գիծը հիմնավորելու ուղիներից մեկն է:

Մեծ Եղեռնի և կամավորական շարժման պատմության խեղաթյուրումը

ՀՅԴ-ին վերագրվող թերևս ամենաստահոդ ու ամենազազրելի կեղծիքը Հայոց ցեղասպանության հրահրման մեջ նրան մեղադրելու փորձն է:

Այսօր, երբ աշխարհի բազում երկրներ անհերքելի փաստերի հիման վրա ճանաչում ու դատապարտում են Հայոց ցեղասպանությունը, երբ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում է դրված այդ խնդրի միջազգային ճանաչման հարցը, մեզանում դեռևս գտնվում են մարդիկ, ովքեր փորձում են այս կամ այն կերպ մեղմել ենրիտթուրքերի մեծ ոճիրը՝ մեղքի ինչ-որ բաժին վերագրելով ՀՅ Դաշնակցության և մյուս ազգային կուսակցությունների հեղափոխական գործելակերպին, կազմակերպած ապստամբական ելույթներին և այլն:

Տասը տարուց ավելի է, ինչ ՀՀՇ -ն դեմ է Հայոց ցեղասպանության հարցը միջազգային քաղաքականության օրակարգ մտցնելու և նրա ճանաչմանը հետամուտ լինելու քաղաքականությանը: ՀՀՇ քաղաքական - գաղափարախոսական սկզբունքների տեսակետից հայոց պահանջատիրությունը «*այլևս զգացմունքային ոլորտ է: Լավագույն դեպքում պատմաբանական վերուծության նյութ, բայց ոչ երբեք՝ պրակտիկ քաղաքականության*»[32]:

Նման մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու ներկա քաղաքականությունը խանգարում է պետության կայացմանը, ուստի մենք ոչ թե հզորացնում, այլ խարխլում ենք այն Հայաստանը, որին ապագայում իր հողային հարցերը լուծելու համար «*...ոչ պատմական հիմնավորվածություն պետք կլինի, ոչ պահանջատիրական գաղափարախոսություն, ոչ եղեռնի ճանաչում ու դատապարտում այլևայլ կողմերից, այլ միայն բիրտ ուժ*»[33]: Պահանջատիրությունը պարզունակ նվաճողական քաղաքականություն համարող այս ելակետից Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը միայն ավելորդ բեռ է մեր երկրի ու ժողովրդի համար, որից ազատվելու խնդիրը հիմնավորելու նպատակով ՀՀՇ տեսաբանները նենգափոխում են պատմությունը՝ ընդլայնելով Հայոց ցեղասպանության պատասխանատուների շրջանակը: Նման փորձերը, իհարկե, միտված են այն ուժերի չեզոքացմանը, որոնք հայոց պահանջատիրության դրոշակակիրներն են: Ուստի դրանք կանխամտածված ձևով վերածվում են ՀՅԴ -ին ցեղասպանության պատասխանատուների շրջանակի մեջ ներառելու գիտա-տեսական մտավարժանքների: Այդ պատճառով, սեփական քաղաքական հակառակորդին «լռեցնելու» նման տգեղ «մեթոդաբանությունը» դառնում է լուրջ կռվան՝ Թուրքիայի պետական քարոզչության ձեռքին:

Ուրեմն, Հայոց ցեղասպանության պատմության նման նենգափոխումնե-

րին հակահարված տալու խնդիրը ոչ այնքան ՀՅ Դաշնակցություն կուսակցության վարկի ու հեղինակության պաշտպանություն է, որքան ազգային - պետական կարևորության գործ, որովհետև այդ նենգափոխումների միջոցով փորձ է արվում ոչ միայն վարկաբեկել ՀՅԴ -ին, այլև մասնակիորեն արդարացնել Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը:

Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության առնչությամբ ՀՀՇ - ամետ մամուլում կարելի է հանդիպել ՀՅ Դաշնակցությանը հասցեագրվող հետևյալ հիմնական մեղադրանքները. «*Թուրքական կառավարությանը թիկունքից հարվածելով՝ ՀՅԴ -ն լրացուցիչ հիմքեր էր տալիս երիտթուրքերին արդարացնելու և հիմնավորելու ցեղասպանության իրականացման իրենց ծրագիրը*»[34], *ՀՅԴ-ն ...ոչինչ չձեռնարկեց ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով, Արամը (Արամ Մանուկյան) 1915թ. ամռանը «խուճապային փախուստի մատնեց հարյուր հազարավոր վան-վասպուրականցիների» «ՀՅԴ-ն իրականում իր դատապարտելի գործելակերպով Արևմտահայաստանը մատնեց կորստյան, իսկ արևմտահայությանը՝ ցեղասպանության» «հայ քաղաքական ուժերը մեղքի մեծ բաժին ունեն 1915թ. ոճրագործությունը հնարավոր դարձնելու համար»*[35] *և այլն:*

Հայտնի է, որ սկսած 1920-ական թվականներից՝ նոր ձևավորվող խորհրդային պատմագրության մեջ ՀՅ Դաշնակցություն կուսակցությանը ուղղված մեղադրանքներից մեկն այն էր, որ, իբր, նա իր «արկածախնդրական ծրագրերով ու գործելակերպով գրգռել է սուլթանական կառավարությանը և դրանով նպաստել է հայկական կոտորածներին[36]»: Մեր ժամանակներում նույնպես նման արտահայտությունները նորից են հնչում այս անգամ արդեն նեոբոլշևիկյան ՀՀՇ կուսակցության ամենաբարձր ղեկավարների բերանով:

1920 -ական թվականների խորհրդահայ պատմագրության առանձին ներկայացուցիչների ու հետագա տասնամյակների թուրք պաշտոնական պատմագրության կարծիքով՝ առաջին աշխարհամարտի տարիներին արևմտահայերի հետ պատահածի մեղավորը իրենք՝ հայերն են՝ իրենց նացիոնալիստական կուսակցությունների արկածախնդրական քաղաքականության պատճառով, որոնք, իբր, անհավատարմություն ցուցաբերեցին օսմանյան կառավարության հանդեպ և դրա հետևանքով պատժվեցին: Ստացվում է, որ 1915-1916 թթ. կատարվածի համար զոհն էր մեղավորն ու պատասխանատուն, և ոչ թե դահիճը: Թուրք պաշտոնական և որոշ բոլշևիկ պատմագիրների տեսակետները 80 տարի անց որոշ խմբագրումներով այսօր կրկնում են իրենց ազատական ու ժողովրդավարական որակող ՀՀՇ գաղափարախոսները: Բայց արդյո՞ք դրա համար նրանք անհրաժեշտ հիմքեր ունեն:

Հենց սկզբից նշենք, որ օսմանյան բռնավարչակարգի ձեռքին տապակվող (գյավուր, ռայա, խաֆիր, մարաբա և այլն որակվող) արևմտահայության շղթայակիր կացության հետևանքը հանդիսացող ազատագրական - ինքնապաշտպանական ելույթները եղել են կոտորածների հետևանքները և ոչ թե պատճառը: Իսկ պատճառը երկրի կառավարողների վարած քաղաքականությունն էր: «Հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում, - գրում է ակադեմիկոս Հ. Ավետիսյանը, - եղել են օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանք, որ ֆիդայական և կամավորական շարժումները հայ ժողովրդի պատմական տենչերի ու ազգային ազատագրական ձգտումների, բռնության դեմ ցասման

ինքնաբուխ արտահայտություն են[37]»:

Ազգի ազատագրությունը, անկախությունը, ամեն մի մարդու և ազգի բնական ձգտումն է, որն առավել ևս հասկանալի է թուրքական բռնակալության տակ հեծող ժողովրդի շահերի տեսանկյունից: Վերջիններիս, մանավանդ արևմտահայերի կացությանը հատկանշական էր «Սիստեմատիք սպանություն ու թալան, խմբական բռնի կրոնափոխություն, իրաւազրկություն, «զրկանք, առևանգում ու բռնաբարություն հրէշային չափերով, առասպելական չափով և անարդար հարկահանություն, սրբապղծութեան ամենազազիր տեսակներ, հարստահարություն, գազանություններ ու ամեն տեսակ անլուր բարբարոսություն[38]...»: Ազատությունը և անկախությունը մեծագույն արժեքներ են, որոնցից չէր կարող անմասն մնալ արևմտահայ հարստահարվող ժողովուրդը: Ամեն մարդու, կուսակցության կամ ժողովրդի դեպքում իր ազգային ազատագրության համար պայքարելը ոչ թե հանցանք է, այլ ամենամեծ ազգային արժանիքը, նրա կենսունակության առհավատչյան: «Լոյալ լինել, - մտորում էր Լ. Շանթը, - ամենօրյա հալածանքների, կողոպուտի ու հոշոտող բարբարոսության՝ նշանակում է փոշիանալ իբրև ազգ: Եվ մի՞թե գերադասելի չէ մաքառումը, որ հատկանիշ է արժանապատվության, անհատականության ու անձնազոհության[39]»:

Իսկ խոսելով առաջին աշխարհամարտում հայերի կամավորական շարժման մասին՝ հարկ է փաստել, որ այն պայմանավորված չէր ՀՅԴ -ի ցանկությամբ, այլ գրեթե ողջ հայ ժողովրդի կամքով և անպայման՝ Ռուսաստանի շահերով: Հ. Քաջազնունին իր հայտնի աշխատության մեջ, որից, ի դեպ, 80 տարի շարունակ սիրում են առատորեն քաղվածքներ անել ՀՅԴ տարբեր գունավորման ընդդիմախոսները, նշում է, որ ՀՅ Դաշնակցությունը չէր կամավորական շարժման հեղինակն ու նախաձեռնողը, այլ նա, ոգևորվելով զանգվածների տրամադրությունից, հետևեց այդ շարժմանը, որն առաջ էր եկել անկախ իրենից[40]:

Իրականությունն այն է, որ 1914թ. ամռանը ՀՅԴ -ն Կարինի իր Ընդհանուր ժողովում հավասարակշռված ու զգուշավոր որոշում էր կայացրել. ամեն ճիգ գործադրել համոզելու թուրքերին՝ չմտնել պատերազմի մեջ, իսկ եթե դա հնարավոր չլիներ, ապա ռուս - թուրքական պատերազմի դեպքում հնարավորինս պահպանել ակտիվ չեզոքություն՝ միաժամանակ պայքարելով Իթթիհատի ազգայնամոլ, վնասակար քաղաքականության դեմ[41]: Սակայն երբ սկսվեց պատերազմը և քաղաքական ցնցումների ու վայրիվերումների հետևանքով անհնար դարձավ չեզոքությունը՝ ՀՅԴ -ն, բնականաբար, նման ճակատագրական պահին չէր կարող մնալ անտարբեր և թույլ տալ, որ արևմտահայ եղբայրներին օգնելու համար սկիզբ առած կամավորական շարժումը մնա անղեկ:

Տեղին է հիշել, որ հայերի կամավորական շարժումը նոր երևույթ չէր ռուս-թուրքական պատերազմների պատմության մեջ: Հայտնի է նաև, որ առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի շարքերում կամավորական միավորներ էին ստեղծել նաև այլ ազգերի ու էթնիկ խմբերի ներկայացուցիչներ, այդ թվում կովկասյան թաթարները, լեզգիները, չերքեզները և այլն: Հայտնի էր կովկասյան լեռնականների «Վայրի Դիվիզիան» (Դիկայա դիվիզիա), որն իր քանակով գերազանցում էր հայկական գնդերը: Ռուսաստանի դեմ կռվում էին քուրդ կամավորները, անգամ Ավստրո - Հունգարիայի սլավոն

(սերբ, չեխ և այլն) էթնիկ միավորները: Թուրքերի դեմ կռվում էին նաև հույն, ասորի, արաբ և այլ կամավորներ: Այնպես որ հայերը «սպիտակ ագռավ» չէին այդ պատերազմում: Ի դեպ, ներկայումս Թուրքիայի հետ լավ հարաբերություններ պահպանող վրացիները ևս ստեղծել էին իրենց կամավորական զորամասը, որը կռվում էր թուրքերի դեմ[42]: Այս իմաստով միանգամայն հիմնազուրկ է թուրք պաշտոնական պատմագրության ջրաղացին ջուր լցնող այն մերժելի վարկածը, թե հայերի կոտորածները, փաստորեն, հետևանք էին կամավորական - ֆիդայական շարժման և հայ ազգային կուսակցությունների կողմից հրահրվող անզգույշ ու ծայրահեղական գործողությունների: Ուստի, եթե անգամ այդ մի քանի հազարանոց հայ կամավորական խմբերը չլինեին, միևնույն է, պատերազմական նպաստավոր պայմաններում իրագործվելու էր արևմտահայության բնաջնջման քաղաքականությունը՝ միգուցե ավելի հրեշավոր հետևանքներով, որովհետև արևմտահայ գաղթականության բեկորները անվտանգ կերպով Կովկաս և այլուր փոխադրող այդ ուժերը չէին լինելու:

1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանի Վան, Մուշ, Ալաշկերտ, Բասեն և այլ քաղաքներից ու գավառներից Անդրկովկաս գաղթեցին շուրջ 200 հազար հայեր[43]: Արդեն 1919 թ. ապրիլին Կովկասում հաշվվում էին 463 հազար թուրքահայեր, որից 263 հազարը գտնվում էր ՀՀ սահմաններում, իսկ 200 հազարը՝ Վրաստանում և Հյուսիսային Կովկասում[44]:

Հայ ազգային կուսակցությունների և կամավորների մասնակցությունը ընդամենը հարմար առիթ էր երիտթուրքերի պարագլուխների համար՝ նախապես ծրագրված իրենց մեծ ոճիրն իրագործելու ճանապարհին: Փաստերը ցույց են տալիս, որ ինչ դիրքորոշում էլ որ ցուցաբերեր հայ ժողովուրդը, և նրա գլխավոր կուսակցությունը, միևնույն է՝ երիտթուրքերը իրագործելու էին նախապես ծրագրած բնաջնջման և Հայաստանը հայազրկելու քաղաքականությունը: «Իթթիհատի ազգայնամոլության իմաստն այն էր, - գրում է Մ. Վարանդյանը,- որ ի սկզբանե չէր ճանաչվում ազգի ինքնուրույն գոյությունը կայսրության մեջ: Նրանց հավատամքն էր՝ բոլոր այլազան ցեղերը ձուլել օսմանցիության մեջ և ստեղծել մեկ ազգ՝ Օսմանյան ազգ[45]»:

Ուստի, ՀՅԴ գործունեությամբ բացատրել երիտթուրքերի կառավարության հայակուլ քաղաքականությունը՝ նշանակում է մեղանչել պատմական ճշմարտության առաջ, որովհետև այդ քաղաքականության բուն շարժիչը կազմող պանթուրքիզմի գաղափարաբանությունը ինքնին հիմնված էր «հայկական սեպի» վերացման սևեռուն նպատակի վրա:

Կամավորական շարժման և արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների առնչությամբ ՀՅԴ-ի դեմ ուղղված մեղադրանքներում նկատվում են նաև ակնհայտ հակասություններ: Այսպես, օրինակ, մի դեպքում ասվում է, որ ՀՅԴ -ն «*ոչինչ չձեռնարկեց ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով*»: Մեկ այլ տեղ նույն հեղինակը ՀՅ Դաշնակցությանը և մյուս ազգային կուսակցություններին մեղադրում է *պատերազմի ու վտանգի պահին օտար պետություններին դիմելով և գրգռիչ, հեղափոխական ապստամբական ելույթներ կազմակերպելով՝ թիկունքից թուրքական կառավարությանը հարվածելու մեջ*[46]: Իսկ մեկ ուրիշում իբր փաստական բնույթ ունեցող տվյալներ են բերվում, թե *ինքնապաշտպանության համար որքան քիչ զենք էր կուտակվել* (տես նույնը):

Մեր ժողովրդին քաջ հայտնի են ցեղասպանության ամենադաժան տա-

րում Արևմտահայաստանի մի շարք վայրերում՝ Վանում, Շատախում, Տարոն-Սասունում, Ուրֆայում և այլուր տեղի ունեցած ինքնապաշտպանական ինքնաբուխ, հերոսամարտերը: «Չնայացած ծանրագույն պայմաններին, - գրում է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, - և ուժերի անհավասարությանը, հայերը շատ անգամ են զենքը ձեռքներին հանդես եկել ընդդեմ երիտթուրքական դահիճների, մեկ անգամ չէ, որ մարտնչել են իրենց պատվի, ազգային արժանապատվության, ֆիզիկական գոյության համար: Բայց անօգնական ժողովրդի հերոսական այդ կռիվները շատ դեպքերում հաջողություն չունեցան: Ուժերը անհավասար էին...[47] »:

1915թ. արևմտահայերի հերոսական ինքնապաշտպանության թագն ու պսակը եղավ Վանի հերոսամարտը, որի արդյունքում ավելի քան 120 հազար վան -վասպուրականցիներ փրկվեցին հետագա կոտորածներից և հաջողությամբ ներգաղթեցին Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս[48]: Ինչ վերաբերում է Տարոն -Սասունի գոյամարտին, որը հիմնականում խեղդվեց արյան մեջ, ապա դրա պատճառները պետք է բացատրել ոչ միայն ապստամբության ղեկավարների թույլ տված մարտավարական սխալներով, զենքի ու կռվողների պակասով, այլ ռուսական բանակի հրամանատարության վարքագծով, երբ 1915թ. հուլիսի 16-ին սկսվեց բանակի ընդհանուր նահանջ:

«Հայկական Ժամանակի» հոդվածագիրը, քաղվածքներ բերելով Սահմանադիր ռամկավարների պաշտոնաթերթ «Վան-Տոսպից» մեղադրում է Վանի նահանգի ժամանակավոր կառավարիչ Արամ Մանուկյանին այն բանում, որ, իբր, նա «*խուճապային փախուստի մատնեց ժողովուրդը ու պատճառ դարձավ Վասպուրականի փճացման*» (տե՛ս «Հայկական Ժամանակ», 24 ապրիլի, 2002թ.):

Իրականում հայտնի է, որ վան - վասպուրականցիների՝ 1915թ. ամառային մեծ գաղթը ամենևին էլ կախված չի եղել Արամ Մանուկյանի կամքից, այլ այն պետք է բացատրել ռուսական բանակի տարօրինակ նահանջներով, երբ կարծես դիտավորյալ հայահոծ զանգվածները թողնվում էին թուրք ասկյարների երախում[49]: Այս առնչությամբ Ս. Վրացյանը գրում էր, որ «ռուս զորավարները կադրիլ էին խաղում թուրքական ռազմաբեմում: Մեկ քայլ առաջ, երկու քայլ հետ՝ ռուս բանակը անվերջ առաջխաղացում և նահանջ էր անում, որոնց ընթացքին իսպառ քար ու քանդ եղան իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը[50]»:

Խիստ տարօրինակ է հնչում նաև ՀՅԴ -ի հասցեին ուղղված այն հարցադրում -մեղադրանքը, թե «*ո՞ւմ թողտվությամբ առաջին աշխարհամարտի ժամանակ 250 հազար հայեր ուղարկվեցին գերմանական ճակատ, և ո՞վ էր, որ 1915-1917 թթ. չէր տեսնում ռուսական զորքերի «տարօրինակ» տեղաշարժերը, որոնց հետևանքով զոհվում էին եղեռնից մազապուրծ հայերի բեկորները*»[51]:

Հայտնի է, որ առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակ զորակոչված շուրջ 250 հազար հայազգի զինվորներից ավելի քան 200 հազարը գործում էր Ռուսաստանի արևմտյան ռազմաճակատներում: Բայց ռուսական կայսրության այդ ո՞ր հպատակ ազգության քաղաքական կուսակցությունը պետք է «խելք» սովորեցներ ցարական կառավարությանը, թե այս կամ այն ազգի ներկայացուցիչը ո՞ր ռազմաճակատում պետք է կռվեր: Ցարական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ բանակ զորակոչված՝

նման թվով հայ զինուժի համահավաք կուտակումը Կովկասյան ճակատում կարող էր քաղաքական հետագա բարդությունների տեղիք տալ՝ դառնալով ազգային բանակի ու սեպարատիզմի հիմք[52]: Այդ իսկ պատճառով հայ զինվորականությանը փոխադրում էին Կովկասից հեռու գտնվող ռազմական թատերաբեմեր: Պատահական չէ, որ նույն դրդապատճառով շուտով (1916թ. մարտին) լուծարվեցին հայկական կամավորական ջոկատները[53]:

Ինչ վերաբերում է ռուսական զորքերի «*տարօրինակ*» տեղաշարժերին և հայ կազմակերպությունների կողմից այդ փաստերը չտեսնելուն, ապա ինչպես արդեն վերևում ասվեց՝ նրանք լավ էլ տեսնում էին ռուսական զորքերի կասկածելի ու տարօրինակ առաջխաղացում - նահանջները, որը ռուս հրամանատարությունը բացատրում էր ռազմագիտական հանգամանքներով, իսկ ոմանք՝ կեղծ հեռագրերով: Դաշնակցական գործիչները, Ազգային Բյուրոյի ներկայացուցիչները բողոքում էին նման գործողությունների դեմ, սակայն ո՞վ էր լսողը:

Այսպիսով, ընթերցողին դժվար չէ տեսնել, որ առաջին աշխարհամարտի և Մեծ եղեռնի հետ կապված՝ ՀՅԴ -ին հասցեագրվող մեղադրանքները ոչ միայն անհիմն են ու փաստազուրկ, այլև Հայոց ցեղասպանության պատմության ընդհանուր համատեքստում դրանք ունեն հակահայ և թրքանպաստ ուղղվածություն:

Հայաստանի Առաջին Հանրապետություն. առասպելներ և իրականություն

ՀՅԴ պատմության և գաղափարախոսության դեմ ուղղված քարոզչական արշավի հեղինակները խեղաթյուրումների առարկա են դարձնում նաև 1918-ին Հայաստանի անկախության վերականգնման և ընդհանրապես՝ Առաջին Հանրապետության պատմության հիմնահարցերը:

Բանը հասել է այնտեղ, որ հակադաշնակցական քարոզարշավի միջոցով կասկածի ու հարցականի տակ է դրվում 1918թ. մայիսի 28-ը՝ Հայաստանի անկախության հռչակման փաստը:

«Առավոտի» հրապարակումներից մեկում հանդիպում ենք ոչ անհայտ Երջանիկ Աբգարյանի հետևյալ դատողությանը. «*Այդ ի՞նչ միֆ է, ի՞նչ մայիսի 28: Հայաստանի անկախության մասին հռչակագիր դաշնակները չեն ընդունել, ոչ այդ օրը և ոչ էլ դրանից հետո: Վրացիները հռչակագիր ընդունել են, ադրբեջանցիները՝ նույնպես, դաշնակները՝ ոչ: Մի ինչ-որ օտար քաղաքում, այդ ժամանակներում սնկի պես աճած «Ազգային խորհուրդներից» ինչ-որ մեկի կողմից մի ինչ-որ փաստաթուղթ է ընդունվել այն մասին, որով ինքը իրեն հայտարարում էր ինչ-որ «Հայկական գավառների» գերագույն ու միակ իշխանություն: Եվ վերջ*»[54]:

Ինքներդ դատեք, թե պատմական նյութի թերիմացության ինչպիսի գլուխգործոց է մատուցում «Առավոտը»: Նախ, 1918թ. մայիսի 28-ի հայտարարագիրը ընդունած մարմինը «*Ազգային խորհուրդներից*» ինչ-որ մեկը չէր: Այն Հայոց (Կենտրոնական) Ազգային խորհուրդն էր, որն ստեղծվել էր 1917թ. հոկտեմբերին Թիֆլիսում գումարված Արևելահայոց համագումարի (համախորհրդակցության) կողմից: Հայոց Ազգային խորհուրդն ուներ բազ-

մակուսակցական կազմ, որի 15 անդամներից միայն 6-ն էին դաշնակցական, մնացածը այլ կուսակցություններից էին կամ՝ անկուսակցական: Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդը, ի տարբերություն մյուս՝ տեղական նշանակության՝ Բաքվի, Երևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Ախալքալաքի, Նախիջևանի և այլն, համարվում էր արևելահայության գերագույն գործադիր մարմինը ու մինչև 1918թ. մայիսի 28-ը ստանձնել էր մեր ժողովրդի արևելահայ հատվածի քաղաքական կյանքի ղեկավարությունը[55]:

Իսկ թե ինչու՞ Հայոց Ազգային խորհրդի նստավայրը գտնվել է «օտար քաղաք» Թիֆլիսում, որտեղ էլ ընդունվել է մայիսի 28-ի ակտը, ապա ով շատ թե քիչ ծանոթ է հայոց պատմական ճակատագրին, գիտի, որ մինչև Հայաստանի անկախությունը արևելահայերի հասարակական - քաղաքական կյանքի ամենանշանավոր կենտրոնը եղել է հայաշատ Թիֆլիսը, ուր կենտրոնացած էր արևելահայ մտավորականության սերուցքը:

Այժմ՝ անկախության գործընթացի և ՀՅԴ բռնած դիրքորոշման մասին: Հայտնի է, որ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո խիստ թուլացան Անդրկովկասը՝ քաոսային վիճակում հայտնված Ռուսաստանին կապող հիմնական լծակները: Երկրի քաղաքական անկայունության, ինչպես նաև բոլշևիկների հրապուրիչ (հողի, հաշտության, հացի, աշխատանքի և այլն) կարգախոսների ազդեցությամբ արագորեն քայքայվեց ու մերկացավ Կովկասյան ռազմաճակատը: Ռուսական զորքի տարերային հեռացումով հայ ժողովուրդը 1918թ. սկզբներին կանգնեց թուրքական մահաբեր հարձակման դեմ հանդիման: Հայկական կյանքը տնօրինող ուժերը հայտնվեցին երկընտրանքի մեջ. կառչե՞լ կործանվող կայսրությունից, թե՞ դառնալ անկախ:

Առանց կշռադատելու ստեղծված չափազանց բարդ ռազմաքաղաքական իրավիճակը, այժմ էլ գտնվում են քաղաքագետ ձևացող իմաստակներ, որոնք ՀՅԴ -ին մեղադրում են հակաանկախական քաղաքականություն վարելու մեջ. «*Բոլշևիկների հեղաշրջումից անմիջապես հետո երկիրն անկախ չհռչակեց և կուլ գնաց վրացիների ու ադրբեջանցիների ժամանակ շահելու տակտիկական խաղերին, նրանց հետ միավորվելով այսպես կոչված Անդրկովկասյան Սեյմի մեջ*»[56]:

Մի՞թե ակներև չէ, թե ինչ էր նշանակում Ռուսաստանից կտրված, Վրաստանից ու Ադրբեջանից մեկուսի, առանց ինքնապաշտպանության որևէ միջոցի՝ Հայաստանի անկախության անմիջական հռչակումը: Ըստ էության, դա կնշանակեր Հայաստանի հոշոտում Թուրքիայի կողմից: Այդ ժամանակ Հայոց Ազգային խորհրդի, Արևմտահայ գործադիր մարմնի և ՀՅԴ -ի առջև ծառացած առաջնային խնդիրը ոչ թե Հայաստանի անկախության հռչակումն էր, այլ ազգային զինուժի (բանակի) ստեղծումը, ինչպիսին եղավ Հայկական բանակային կորպուսը՝ երեք դիվիզիա և մեկ գունդ համակազմով՝ զորավար Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ:

Հայ քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ -ի հետ միասին աշխարհաքաղաքական հայտնի սպառնալիքների առկայության պատճառով, ամենևին էլ ոգևորված չէին Ռուսաստանի՝ Անդրկովկասից հեռացումով և Հայաստանի անջատումով: «Հայերն իրենց զանազան կուսակցություններով,- հավաստում է ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը,- կառչած էին Ռուսիո հետ միացած մնալու գաղափարին»[57]: Արևելահայությունը մեծ ձգտում ուներ ամուր բռնել «Ռուսական փեշից, բայց այդ փեշը,- Դ. Անանունի պատ-

կերավոր բնորոշմամբ, - հակառակ հայության բուռն փափագին ինքը դուրս սողած նրա ձեռքից»[58]:

Նման պայմաններում Անդրկովկասում մեկուսացված չմնալու նպատակով ՀՅԴ -ն ստիպված էր հարաբերվել տարածաշրջանում քաղաքական եղանակ ստեղծող երկու այլ ազդեցիկ ուժերի՝ վրաց սոց - դեմ. մենշևիկների և թաթար - մուսավաթականների հետ թե՛ Անդրկովկասի կառավարությունում և թե՛ նրա խորհրդարանում (Սեյմում): Սակայն 1918 -ի ապրիլին Կովկասի դռները բախող Թուրքիայի պահանջով իրեն անկախ հռչակած Անդրկովկասյան դաշնությունը կենսունակ չգտնվեց, քանզի նրա ներսում առկա էին հայ-վրաց- թաթարական ազգային - տարածքային սուր վեճեր ու քաղաքական տարամերժ կողմնորոշումներ: Եվ 1918թ. մայիսի վերջին Անդրկովկասին պատուհասած թուրքական մահաբեր սպառնալիքի պայմաններում Անդրկովկասյան դաշնային հանրապետությունը կանգնեց փլուզման փաստի առաջ: Այն բանից հետո, երբ մայիսի 26 -ին և 27-ին հաջորդաբար իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանն ու Ադրբեջանը, Հայոց Ազգային խորհրդին չէր մնում այլ բան, քան մայիսի 28 -ին գրեթե միաձայնությամբ վճիռ կայացնել Հայաստանի անկախության մասին: Թեև այդ պատմական հայտարարագրում «անկախություն» բառը չի գործածվել, սակայն տեքստի բովանդակությունից դժվար չէ հասկանալ, որ խոսքը անկախության մասին է: Եվ ասել, թե ՀՅ Դաշնակցությունը «*ոչ մայիսի 28 -ին և ոչ էլ դրանից հետո անկախության մասին հռչակագիր չի ընդունել*», առնվազն պատմական իրադարձությունների և փաստաթղթերի աղավաղում է: Հայտնի է, որ, «Մայիս 28 -ի» ակտից զատ, մոտ երկու շաբաթ անց՝ հունիսի 13 -ին, Հայաստանի նորընտիր վարչապետ Հովհաննես Քաջազնունին, ի լրումն «Մայիս 28 -ի» հռչակագրի, կրկին պաշտոնական հայտարարություն արեց Հայաստանի անկախության մասին[59]:

Այնուամենայնիվ, հարց է ծագում. ինչո՞ւ «Մայիս 28 -ի» հայտարարագրի հեղինակները խուսափել են «անկախություն» բառի գործածումից: Խնդիրն այն է, որ դաշնակցական և ոչ դաշնակցական գործիչները գտնում էին, որ թուրքական մահաբեր հարձակման պայմաններում հայ ժողովրդի համար ստեղծված ռազմաքաղաքական չափազանց բարդ իրավիճակում «անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը»[60]: Չպետք է թաքցնել, որ կային որոշակի տատանումներ, և դրանց համար առկա էին լուրջ հիմքեր: Հայ ժողովրդի հիշողության մեջ դեռևս թարմ էր 1.5 միլիոն հայության կորուստը, թշնամու զորքը գտնվում էր Երևանի մոտերքում, Հայաստանին ներկայացվել էր վերջնագիր, և մտավախություն կար, որ թույլ ու անօգնական երկրի անկախության հռչակումը՝ առանց քաղաքական ծանրակշիռ փաստարկների ու երաշխիքների, կարող էր լուրջ սպառնալիք տակ դնել նաև արևելահայության գոյությունը:

Սակայն անկախության գաղափարին մեծ լիցք ու վստահություն հաղորդեցին մայիսյան հաղթական հերոսամարտերը, որոնք ծանրակշիռ հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար: 1918թ-ի հաղթական մայիսը լուծեց երկու կարևորագույն խնդիր: Նա մի կողմից հիմք հանդիսացավ Հայաստանի անկախության համար, իսկ մյուս կողմից՝ փրկեց արևելահայությանը թուրքական եղեռնից:

Անկախության խնդրում ՀՅԴ և Հայոց Ազգային խորհրդի դիրքորոշման

ճշմարտացիությունը մեկ անգամ ևս երևում է՝ այն փաստից, որ եթե նախորդ տասնամյակներում խորհրդային շատ պատմաբաններ ձախ դիրքերից պարսավում էին ՀՅ Դաշնակցությանը՝ մայիսի 28 -ի «անօրինական» որոշմամբ Հայաստանը Ռուսաստանից կտրելու և անկախացնելու համար, իսկ այժմ էլ նրանց ՀՀՇ -ական ժառանգները ՀՅ Դաշնակցությանը մեղադրում են այն բանում, թե ինչու նա «Մայիս 28 -ի» հռչակագրում հատուկ կերպով չի շեշտել «անկախություն» բառը: Կնշանակի՝ ամենաբնական մոտեցումը՝ վերը նշված երկու ծայրահեղ դիրքորոշումների միջակայքում է, ինչը և ցուցաբերեց Հայոց Ազգային խորհրդի մեջ տոն տվող ուժը՝ ՀՅԴ -ն:

Հայաստանի անկախության հռչակման փաստի առնչությամբ ՀՀՇ -ական մամուլի մեկ այլ հրապարակման մեջ զարգացվում է հայի ազգային նկարագրին ոչ հոգեհարազատ այն միտքը, թե, իբր, Առաջին հանրապետության անկախությունը արդյունք էր ոչ թե նախորդ տասնամյակների հայ ազատագրական պայքարի, այլ հատուցումն էր «*...ծախողված ապստամբության հետևանք եղեռնի...», որն իրականացվեց համաշխարհային հանրության, պատերազմող երկրների և այդ թվում Թուրքիայի կողմից որպես վճար մեր արյան գնի*[61]: Ասվածից տրամաբանորեն հետևում է, որ եղեռնի դիմաց հայերը ստացել են այն, ինչը ներկայումս ունեն, և որ *Առաջին հանրապետության հիմնադրումով հայ ազգային - ազատագրական պայքարը ավարտվել է, ուստի ներկայումս միանգամայն ավելորդ են Հայ Դատի ու Պահանջատիրության գաղափարախոսությունը*[62]:

Ավետիս Հարությունյան - Վանո Սիրադեղյանի այս դատողությունը՝ փաստորեն ուղղակիորեն կրկնում է «ծախողված ապստամբության զսպման» մասին թուրքական պատմագրության դրույթները, այսինքն՝ արդարացնում է Հայոց ցեղասպանությունը: Ուստի այն՝ քաղաքական նկատառումներով ներկայումս շարունակվող՝ ՀՅԴ պատմության կեղծարարության հերթական հանգրվանն է՝ թուրք պատմաբաններ - ՀՀՇ -ականներ յուրահատուկ «փոխանցումավազքը»:

Ամենևին էլ չպետք է զարմանալ նման դատողության ի հայտ գալու փաստի վրա, քանզի մեր պատմագրության մեջ տասնյակ տարիներ «դեգերում էր» այն կեղծ թեզը, թե Հայաստանի անկախությունը եղել է Թուրքիայի «նվերը» հայ ժողովրդին: Այնինչ իրականում ժամանակաշրջանի փաստերը, դեպքերն ու իրադարձությունները համոզում են, որ եթե խնդիրը թողնվեր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլև հնարավորության դեպքում՝ պանթուրքական ծրագրերի համատեքստում, Անդրկովկասում նույնպես հայ չէր թողնի և արևելահայոց հարցը ևս «կլուծեր» արևմտահայոց հարցի նման:

Որպեսզի հասկանանք, թե ո՞րն էր Հայաստանին ու հայությանը մատուցված թուրքական այս «նվերի» գաղտնիքը, բավական է՝ ծանոթանալ Թուրքիայի գլխավոր դաշնակից Գերմանիայի՝ Կովկասում տվյալ պահին հետապնդած առաջնահերթություններին, որոնց առանցքում Բաքվի նավթն էր: Իր հերթին Թուրքիան ձգտում էր օր առաջ տիրել Բաքվին: Թուրքիայի կողմից Բաքվի զավթումից հետո «լուծվելու» էր Արևելյան Հայաստանի հարցը:

Ասվածին իբրև ապացույց՝ տեղին է հիշեցնել մի քարտեզի գոյության մասին, որը թուրքական զորքերի կողմից Բաքվի գրավումից հետո, 1918թ. սեպտեմբերի 22-ին տպագրվել է Ստամբուլում լույս տեսնող կառավարա-

կան «Ենի գյուն» («Նոր օր») պաշտոնաթերթում: Պանթուրքիզմի ոգով կազմված այդ քարտեզում Հայաստանը, որն իբր թե ճանաչվել էր Թուրքիայի կողմից, իսպառ բացակայում էր՝ ոչ միայն որպես պետություն, այլև իբրև աշխարհագրական հասկացություն, իսկ հայ ազգաբնակչության տեղաբաշխումը ներկայացված էր ընդամենը մի քանի առանձին կղզյակների տեսքով: Դրա փոխարեն Ադրբեջանը պատկերված էր որպես Կովկասի լայնատարած և զորեղ տերություն, որի մեջ ներառված էր ամբողջ Արևելյան Հայաստանը, Դաղստանը, Արևելյան և Հարավային Վրաստանի մի մասը և այլն[63]:



Քարտեզի վրա եղած մակագրությունների թարգմանությունը. Ադրբեջանը ապահովեց իր տարածքային ամբողջականությունը:

Բաքվի գրավումը: Ադրբեջանի կառավարության մասին: Հարավային Կովկասում ազգաբնակչության թվի հարցը: Անհերքելի մի փաստաթուղթ: Խորհրդածության արժանի ծանոթություններ...

Քարտեզի ներքևում.-

«Հարավային Կովկասում ժողովուրդների թվական համեմատությունն ու խտությունը ցույց տվող քարտեզ

- մահմեդականներ (շեղ գծերով)
- վրացիներ (մանր կետերով)
- հայեր (սև բծերով)

Հարկ ենք համարում տեղեկացնել իրենց «սթափ, իրատես ու շրջահայաց» ներկայացնող ՀՀՇ -ական քաղաքագետներին, որ երիտթուրք պարագլուխները Բաքվին տիրանալուց հետո (1918թ. սեպտեմբեր) ծրագրել էին «մահմեդական բնակչության անվտանգությունը» ապահովելու պատրվակով իրականացնել արևելահայության բնաջնջումը՝ ստեղծել մեծ Ադրբեջան և դրանով իսկ լիովին վերացնել «հայկական սեպը»: Սակայն, ինչպես ասում են՝ ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը. առաջին աշխարհամարտում Թուրքիան պարտվեց, հոկտեմբերի 30 -ին կնքվեց Մուդրոսի զինադադարը՝ հաղթանակած Անտանտի երկրների հետ, և դրանով ձախողվեց երիտթուրքերի այդ հրեշավոր ծրագիրը:

Այս ամենը ցույց է տալիս, որ ՀՀՇ -ական քարոզչամեքենան հաջողությամբ զուգորդում է թուրքական պատմագրության զրպարտագրերը՝ հայոց պատմությունից իր «հարուստ» գիտելիքների հետ, քանզի իրականությունն այն է, որ ներկա Հայաստանը, որի հիմքը դրվեց 1918 թվականին, ոչ թե նվիրվել է մեզ Թուրքիայի կամ «միջազգային հանրության» կողմից՝ որպես արյան գին 1915 -ի Մեծ եղեռնի դիմաց, այլ փրկվել է ՀՅԴ կուսակցության գլխավորած արյունալի հայ ազատամարտի՝ առաջին հերթին հենց 1918թ. մայիսյան հերոսամարտերի արդյունքում: Քանզի, եթե չլիներ այն շուրջ 9 ամիսը (1918թ. հունվարից մինչև սեպտեմբեր), որի ընթացքում հայությունը հերոսաբար դիմադրեց թուրքական բանակին՝ Երզնկայից մինչև Բաքու, թուրքերը կհասցնեին ավարտել ոչ միայն Բաքվի գրավումը, այլև «Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումը», այսինքն՝ Արևելյան Հայաստանի ոչնչացումը: Այդ պլանի վերջին մասը նրանք բացահայտեցին Բաքվի գրավումից (1918 -ի սեպտեմբերի 15) հետո, բայց չհասցրին իրականացնել: Սա՛ է ճշմարտությունը:

Վերջին շրջանում հակադաշնակցական քարոզչական մեքենան չի խորշում օգտագործել նաև առանձին՝ խիստ կասկածելի փաստաթղթեր: Նման օրինակ է ծառայում *«Հայկական ժամանակում»* զետեղված՝ ՀՀ կառավարության կողմից, իբր, 1918թ. հուլիսի 17-ի թվագրությամբ Թուրքիայի զինվորական մինիստր Էնվեր փաշային ուղղված գրությունը, ուր խոսք է գնում Անդրանիկին երկուստեք *հետապնդելու և ջախջախելու մասին*[84]: Որ այս փաստաթուղթը, ըստ ամենայնի, հորինվածք է՝ երևում է գրության տակ ստորագրած երեք անձերից երկուսի զբաղեցրած պաշտոնների անճշտությունից: Գրությունում ՀՀ զինվորական նախարար է նշված Արամ Մանուկյանը: Հարկ է նշել, որ այդ ժամանակ անդրանիկ կառավարության կազմը դեռևս հստակեցված չէր, որից հետո Քաջազնունու կաբինետում զինվորական նախարար է նշանակվում զորավար Հ. Հախվերդյանը, իսկ Ն. Գ. նախարար՝ Ա. Մանուկյանը: Կասկած հարուցող այս գրությունում Ավետիս (պետք է լինի Ավետիք - Ա.Հ.) Սահակյանը ներկայացված է ՀՀ խորհրդարանի նախագահ: Այնինչ Հայաստանի խորհրդարանը (Խորհուրդը) հուլիսի

17-ին դեռևս չէր ձևավորվել, և նրա առաջին նիստը պետք է գումարվեր օգոստոսի 1-ին, որտեղ էլ Ա. Սահակյանը պետք է ընտրվեր Խորհրդարանի նախագահ: Հիշյալ գրությունը խիստ կասկածելի է նաև թվագրված օրվա առումով, որովհետև հուլիսի 17-ի վաղ առավոտյան Հայաստանի ոչ լիակազմ կառավարության և Հայոց Ազգային խորհրդի անդամները Թիֆլիսից գնացքով մեկնեցին դեպի Աղստաֆա, այնտեղից էլ գերմանական երկու ավտոմեքենայով հուլիսի 19 -ին ժամանեցին Երևան: Ուստի խիստ անհավանական է, որ նման ճամպրուկային վիճակում գրություն պատրաստվեր և ուղարկվեր Կ. Պոլիս: Բացի այդ պետք է նկատի առնել ևս մի հանգամանք. հուլիսի 19-ի դրությամբ Հ. Քաջազնունին և Ա. Սահակյանը դեռևս գտնվում էին Թիֆլիսում, իսկ Ա. Մանուկյանը՝ Երևանում, որը դարձյալ չի վկայում այդ փաստաթղթի վավերականության մասին: Սակայն այս բոլորով հանդերձ մեզ հայտնի է Հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանի հրամանը Անդրանիկի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, 1918թ. հունիսի 4-ին Բաքումում կնքված հայ - թուրքական հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր զինաթափ անել ՀՀ տարածքում գտնվող բոլոր անկանոն զորախմբերը, այդ թվում՝ Անդրանիկի կամավորական զորաջոկատը[65]: Եվ համաձայն այդ պայմանագրի՝ 1918թ. հուլիսի 6-ին, սպարապետ Թ. Նազարբեկյանի հրամանով Անդրանիկի զորաջոկատը պաշտոնապես հեռացվում է կորպուսի կազմից[66]: Դրանից հետո, ինչպես հայտնի է, Անդրանիկը հարկադրված էր անցնել Նախիջևան և Զանգեզուր:

Առաջին հանրապետության պատմությունը քննելու ընթացքում ՀՅԴ -ի հանդեպ ի հայտ եկող անհանդուրժողականությունը ՀՀՇ -ական առանձին գործիչների մոտ հասնում է կենսաբանական ատելության: Բավական է միայն թերթել Երջանիկ Աբգարյանի՝ արդեն իսկ նշված «պատմագիտական» գլուխգործոցը, ուր նրա հեղինակը ՀՅ Դաշնակցության հարյուրամյա գործունեության մեջ չի տեսնում ոչ մի լուսավոր էջ. *«Թերթում ես նրա գործերը և մի պայծառ էջ ես ուզում տեսնել: Չկա»*[67]:

Սակայն բավական է միայն ծանոթանալ Հայաստանի առաջին Հանրապետության պատմությանը, որի կառավարությունը սկզբից մինչև վերջ գլխավորել է ՀՅԴ կուսակցությունը՝ տեսնելու համար, թե ընդամենը 2.5 տարում արտաքին ու ներքին աննկարագրելի ծանր պայմաններում, առաջին վարչապետ Հ. Քաջազնունու բնութագրմամբ՝ «անձև քաոսից ու ավերակների կույտից» ինչպես ձևավորվեց հայոց պետականությունը, որը, ցավոք, վերջին վարչապետ Ս. Վրացյանի բնութագրմամբ՝ իր կամքից անկախ հայտնվեց ռուսական «մուրճի» և թուրքական «սալի» արանքում:

Առաջին հանրապետության գոյության ողջ ընթացքում ՀՅԴ -ն իր ուսերին կրեց անկախ պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ամբողջ պատասխանատվությունը: Ինչպե՞ս կարելի է ժխտել այն փաստը, որ 1919 -1920 թթ. Հայաստանը 2 մլն բնակչությամբ և ավելի քան 60 հազար քառակուսի կմ տարածքով մի բավականին ընդարձակ պետականություն էր[68]: Քաղաքական համակարգի տեսակետից Հայաստանը ժողովրդավարական հանրապետություն էր՝ կառավարման խորհրդարանա-

կան ձևով, ուր ազատորեն գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող քաղաքական կուսակցություններ, այդ թվում՝ բոլշևիկները: Խորհրդարանում և նրանից դուրս առկա էր ընդդիմություն, լույս էր տեսնում շուրջ հիսուն անուն թերթ ու ամսագիր, որի կեսից ավելին ընդդիմադիր էր:

Պետության կառուցվածքի հստակեցման առումով ծրագրվում էր Հայկական հարցի լուծումից՝ Միացյալ Հայաստանի ստեղծումից հետո հրավիրել Սահմանադիր ժողով, ընդունել Սահմանադրություն, մտցնել ՀՀ նախագահի ինստիտուտ և այլն: 1919թ. մայիսից ՀՀ -ում սկսեց ձևավորվել տեղական ինքնակառավարում (զեմստվոներ), այնուհետև ձևավորվեց եռաստիճան դատական համակարգ[69]:

1920թ. Հայաստանն ուներ շուրջ 40 հազարանոց բանակ, որն ապաքաղաքականացված էր: Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները ընտրություններին (խորհրդարանի, ինքնակառավարման մարմինների) մասնակցելու (ընտրել, ընտրվել) իրավունք չունեին[70]: Բանակի ապակուսակցականացված լինելու մասին է վկայում նաև այն փաստը, որ բարձրագույն հրամանատարական կազմի 33 գեներալներից գրեթե ոչ մեկը դաշնակցական չէր[71]: Բացառություն էր, թերևս, միայն Դրոն, որն իր նախորդ կենսագրությամբ ավելի շատ հայդուկ էր, քան պրոֆեսիոնալ զինվորական:

Սոցիալ-տնտեսական և կրթա-մշակութային առումով՝ մեկ-երկու տարում հանրապետությունում նկատելի տեղաշարժեր կատարվեցին: Բացվեցին ազգագրական - մարդաբանական թանգարան, բուսաբանական այգի, հանրային գրադարան, պատկերասրահ, թատերական վարժարան, կոնսերվատորիա, ռադիոկայան և այլն[72]:

Եթե 1918 /19 ուստարում հանրապետությունում կար ընդամենը 133 դպրոց՝ 11 հազար աշակերտով, ապա 1919 - 20 ուստարում՝ շուրջ 500 դպրոց՝ 50 հազար աշակերտով[73]: 1920թ. հունվարին առաջին անգամ հայոց հողի վրա բացվեց ժամանակակից չափանիշներով համալսարան, որը գտնվում էր պետության հոգածության ներքո: Ներկայիս ԵՊՀ-ն իրավահաջորդն է այդ համալսարանի: Առողջապահության տեսակետից՝ եթե 1918թ. ամռանը ՀՀ -ում կար ընդամենը 9 հիվանդանոց՝ 300 մահճակալով, ապա մեկ տարի անց արդեն հաշվվում էր 30 հիվանդանոց՝ 1600 մահճակալով[74]:

Իրականացվեցին ճարտարապետա-շինարարական զգալի աշխատանքներ: 1920թ. գարնանը Երևանի գլխավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ալ. Թամանյանը գծեց 60 հազարանոց մայրաքաղաքի առաջին գլխավոր հատակագիծը, որի համար հատկացվեց 23 մլն ռուբլի վարկ[75]: Ռուս ինժեներ Ս. Զավալիշինի գլխավորությամբ մշակվեցին 200 հազար դեսյատին աղուտային և ճահճացած հողերի մելիորացման և 255 հազար ձիաուժ հզորությամբ էլեկտրակայանների կառուցման նախագծեր[76], որոնք հետագայում գործողության մեջ դրվեցին՝ արդեն Խորհրդային Հայաստանում: 1920թ. գարնանը 20 մլն ռուբլի վարկ բացվեց արտասահմանից գյուղգործիքներ գնելու համար[77]:

Հանրապետության քաղաքներում գործում էին մի քանի տասնյակի հասնող կիսամանուֆակտուրային մեխանիկական ձեռնարկություններ: Սարիղամիշում և Դիլիջանում հիմնվեցին սղոցարաններ: Գործի դրվեցին Կողբի ու Կաղզվանի աղահանքերը, Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերը: Վար-

չապետ Ալ. Խատիսյանի հայտնած տվյալներով՝ 1920թ. ամռանը ՀՀ -ում գործում էին 67 արդյունաբերական ձեռնարկություններ[78]: Էլ չենք խոսում հայոց պետականության խորհրդանիշերի՝ եռագույնի, զինանշանի, օրհներգի, ազգային դրամի, հայկական դրոշմանիշերի ստեղծման մասին:

Ռազմաքաղաքական առումով ևս առկա էին լուրջ ձեռքբերումներ: Հայաստանի կառավարության ցուցաբերած հետևողականության և Դրոյի կամքի շնորհիվ 1918թ. հայ - վրացական կարճատև պատերազմում Հայաստանը հաղթեց և դրանով ամուր կռվաններ ստեղծեց, որ հետագայում՝ 1921թ., Լոռին միացվի Հայաստանին:

Հարկ է նշել , որ գրեթե ոչնչից ստեղծված Առաջին հանրապետության պետական հաստատությունները, իբրև արդեն պատրաստի կառույցներ, հետագայում հաջողությամբ օգտագործվեցին Խորհրդային Հայաստանում: 1918 -1920 թթ. հանրապետության խորհրդարանն ու կառավարությունը իրենց կարճատև գոյության ընթացքում ընդունել են 1200-ից ավելի օրենք[79]: Եվ պետք է նշել, որ դրանց ճնշող մեծամասնությունը կառավարող կուսակցության՝ ՀՅԴ -ի ընկերվարական ոգուն համապատասխան ունեցել է սոցիալական ուղղվածություն՝ միտված է եղել չքավոր (կարիքավոր) խավերի ու գաղթականության սոցիալական պաշտպանվածության, անվճար կրթության ու բուժսպասարկման, մարդկանց զբաղվածության ապահովման, զոհվածների ընտանիքներին օգնելու և համանման խնդիրների լուծմանը: Բավական է միայն այն փաստի հիշատակումը, որ կես միլիոնից ավելի կարիքավոր բնակիչ, արևմտահայ գաղթականների ու որբերի հետ միասին, պետությունից որպես նպաստ օրական ստանում էր կես ֆունտ ալյուր, որը ամսական պետգանձարանի վրա նստում էր ավելի քան 25 մլն ռուբլի[80]:

Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության վարած քաղաքականության սոցիալական ուղղվածության մասին է վկայում նաև այն փաստը, որ երկրի թիվ մեկ պաշտոնատար անձի՝ վարչապետի աշխատավարձը (1919թ. հուվարին՝ 1300 ռուբլի) Հայաստանում սահմանված նվազագույն աշխատավարձին (200 ռուբլի) գերազանցում էր ընդամենը 5.5 անգամ: Սա կարելի է համեմատել մեր ժամանակների հետ, երբ օրենքով ամրագրված նվազագույն աշխատավարձը 13000 դրամ է, իսկ ՀՀ առաջին դեմքը ստանում է 800 ԱՄՆ դոլար կամ մոտ 348000 դրամ, այսինքն՝ տարբերությունը ավելի քան 40 -ապատիկ մեծություն է կազմում:

Առաջին հանրապետության ղեկավարների բարոյական նկարագրի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հայոց բանակ զորակոչի էին ենթարկվում բոլորը՝ առանց սոցիալական և դիրքի խտրության, այդ թվում՝ բոլոր պաշտոնատար անձանց՝ զորակոչի ենթակա զավակները: Իբրև օրինակ՝ հիշեցնենք, որ Հայաստանի ազատության և անկախության համար կռիվներում զոհվեցին վարչապետներ Հովհաննես Քաջազնունու երկու տղաները, Համո Օհանջանյանի որդին, Ալ. Խատիսյանի եղբայրը և այլոք:

Այս հաստատումների լույսի ներքո կարելի է պնդել, որ ՀՀՇ քարոզչամեքենայի կողմից հեգնվող *«գեղջկական, դաշնակցական սոցիալիզմը»*[81] իր քաղաքական ու տնտեսական համակարգով ընդհանուր ոչինչ չունի անձնական նախաձեռնությունը մեռցնող խորհրդային սոցիալիզմի հետ:

ՀՅԴ դավանած ընկերվարությունը ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ հարստացված արժեքների ու պատկերացումների այն համակարգն է, որով հետագայում առաջնորդվեցին արևմտաեվրոպական երկրներից շատերը: Ավելին, 1920թ. Հայաստանում ՀՅԴ -ն դեռ մտադիր չէր «սոցիալիզմ կառուցել», որովհետև նա ստիպված էր ժողովրդի հետ միասին մաքառել արտաքին թշնամու, սովի, ցրտի, համաճարակի, խավարի դեմ: Ուստի գործնական քաղաքականության բնագավառում դաշնակցական կառավարությունը պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը, օտար ներդրումները, տնտեսվարման ազատությունը և այլն: Ագրարային հարցում ՀՅԴ -ն, ռուսական էսէռների նմանությամբ, 1907թ. իր ծրագրով որդեգրել էր գյուղացիությանը շատ հոգեհարազատ հողի (բայց ոչ արտադրության) սոցիալիզացման (համայնացման) ծրագիրը, սակայն բավարար նախադրյալների բացակայության ու հատկապես ժամանակի սղության պատճառով այն չգործադրվեց: ՀՅԴ -ն և նրա կառավարությունը իրավացիորեն կարծում էին, որ տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց, որբերով ու գաղթականներով լեցուն Հայաստանում վաղաժամ ու ավելորդ էր խոսել սոցիալիզմի մասին:

* * *

Վերջին շրջանի հակադաշնակցական հարձակումների մյուս թիրախը առաջին հանրապետության արտաքին քաղաքականությունն է: Այս կապակցությամբ նույնպես հարկ ենք համարում արտահայտել որոշ նկատառումներ:

ՀՀՇ -ամետ մամուլում հրապարակված «Հայրենիք» դաշինքի պատմա - քաղաքական հարցադրումներում կա հետևյալ դատողությունը. *«Ինչու՞ Առաջին հանրապետության պառլամենտը քննարկման առարկա չդարձրեց 1915թ.-ի եղեռնը»* (տես՝ «Հայկական ժամանակ», 26 դեկտեմբերի, 2000թ.): Թեև Հայաստանի խորհրդարանը 1915թ. Հայոց եղեռնի վերաբերյալ ժամանակակից չափանիշներով հատուկ օրենք չի ընդունել, սակայն նման օրենքի ուժ ունեցող փաստաթուղթ պետք է համարել 1919թ. օգոստոսին խորհրդարանի ընդունած բողոք-հուշագիրը՝ ուղղված աշխարհի մեկուկես տասնյակից ավելի խոշոր երկրների խորհրդարաններին՝ առաջին աշխարհամարտի տարիներին հայերի նկատմամբ կատարված ոճրագործությունների դատապարտման և դրա հիման վրա՝ հայկական հարցի լուծումն արագացնելու առաջարկությամբ[82]: Հայաստանի խորհրդարանի և կառավարության ընդունած ավելի քան 1200 օրենքներից ու որոշումներից մի քանի տասնյակը միտված են եղել հայկական կոտորածների հարցը (այն ժամանակ ցեղասպանություն (գենոցիդ) բառը չէր գործածվում), միջազգային ատյաններում բարձրացնելուն և դատապարտելուն, թարմ հետքերով դրա հետևանքների վերացմանը և նյութական ու տարածքային փոխհատուցում ստանալուն: Այսինքն՝ առաջին պլանի վրա էր դրված ոչ թե խոսքը, այլ գործը:

Որպեսզի ավելի առարկայական լինի Հայաստանի կառավարության

քայլերի լուսաբանումը՝ ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման ուղղությամբ, դիմենք մի քանի փաստերի: Հայաստանի անկախության հռչակումից մի քանի օր հետո՝ 1918թ. հունիսի սկզբին, Բեռլին մեկնած Հայաստանի պատվիրակությունը (Հ. Օհանջանյան, Ա. Զուրաբյան և ուրիշներ) Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կառավարությանը ներկայացրին Հայկական հարցի պաշտպանությանն ուղղված հուշագիր և համապատասխան գունավոր քարտեզ, որոնցում փաստերով ցույց էր տրվում «Երիտթուրքերի ոճրագործությունները թուրքահայերի գրեթե գլխովին ոչնչացման կամ իրենց բնակավայրերից բռնագաղթեցման մասին»[83]: Հայ պատվիրակների պատրաստած նյութերը բաժանվեցին Ռայխստագի պատգամավորներին, Բեռլինում և Վիեննայում հավատարմագրված մի շարք երկրների դեսպաններին՝ իրենց կառավարություններին հանձնելու համար[84]:

Հայկական հարցի պաշտպանությանն էր միտված 1918թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի խորհրդարանի և կառավարության հաստատած պաշտոնական հրահանգը, որով Փարիզ մեկնող պատվիրակությունը լիազորվում էր պաշտպանել Միացյալ Հայաստանի գաղափարը[85]: Այդ փաստաթղթում մասնավորապես ասվում էր. «Տաճկահայաստանում կատարված բարբարոսությունների համար պատասխանատվության կանչել իթթիհատական կառավարության անդամներին և երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին: Տարագրված տաճկահայերի վերադարձի և հայրենիքում տնտեսության վերականգնման ծախսերը դնել Թուրքիայի վրա[86]» և այլն: Ի դեպ, Խորհրդարանը մի շարք օրենքներ ընդունեց արևմտահայերի՝ դեպի երկիր ներգաղթն ապահովելու համար: ՀՀ ՆԳ նախարարությունում հիմնվել էր ներգաղթի հանձնաժողով: Հայաստանում և արտասահմանում ներգաղթի իրականացման նպատակով կատարվում էին բարեգործական հանգանակություններ: Միայն ԱՄՆ -ում հանգանակվեց 20 մլն դոլարի իր և ապրանք, որը պետք է բաշխվեր երկիր վերադարձող ժողովրդին[87]:

ՀՀ կառավարությունը և պատվիրակությունը 14 ամիսների ընթացքում ընդհանուր թվով 36 դիմում են ուղղել Փարիզի խաղաղության խորհրդաժողովին՝ արևմտահայերի ներգաղթի վերաբերյալ[88]: Արևմտահայերի տեղահանության, կոտորածների, թալանի և այլնի հետևանքով կրած նյութական վնասների հաշվարկմանն ու միջազգային ատյաններին ներկայացնելուն էր ուղղված Հայաստանի կառավարության որոշմամբ ստեղծված «Հայ բնակչությանը թուրքերի պատճառած վնասների ու կորուստների ուսումնասիրման հանձնաժողովի» գործունեությունը: Այն ղեկավարում էին Խ. Վերմիշյանը և Ա. Անաստասյանը[89]: Հավաքված տվյալները 1919թ. գարնանը ուղարկվեցին Փարիզ՝ խաղաղության խորհրդաժողովին: Ներկայացված հաշվարկներով արևմտահայության կրած նյութական անմիջական վնասները կազմել էին ավելի քան 14 մլրդ ֆրանկ[90]:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի կառավարությունը ընդունեց հռչակագիր Միացյալ և Անկախ Հայաստանի մասին, որով պաշտոնապես միացված էին համարվում Հայաստանի երկու մասերը[91]: Հարկ է նշել, որ Միացյալ Հայաստանի գաղափարը ամենևին էլ «ռոմանտիզմ» կամ «զգացմունքների ոլորտ» չէր, այլ միանգամայն իրականանալի գործընթաց: Այն կարող էր ո-

որոշակի սահմաններում իր մարմնավորումը ստանալ: Այդ կապակցությամբ հակադաշնակցական քարոզչական գրականության մեջ շատ է հեգնվում «ծովից ծով Հայաստանի» պահանջը («Հայկական ժամանակ», 12 մայիսի, 2001թ., «Առավոտ», 12 մայիսի, 2001թ. և այլն): Սակայն պետք է հիասթափեցնենք այս պարզունակ հնարքի հին և նոր սիրահարներին. ո՛չ ՀՅԴ կուսակցության ծրագրային փաստաթղթերում և ո՛չ էլ առաջին հանրապետության բարձրագույն իշխանության մարմինների հրահանգ-որոշումներում երբեք ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջ չկար և նման հարց չի բարձրացվել: «Դաշնակցությունը, - հավաստում է ՀՅԴ ճանաչված տեսաբան ու գործիչ Վ. Նավասարդյանը, - երբեք ծովից ծով ունենալու պահանջ չի դրել իր քաղաքական ծրագրերում[92]»: 1918թ. դեկտեմբերի 7-ին Ա. Ահարոնյանի գլխավորած կառավարական պատվիրակությանը տրված բանակցային իրավասությունների հրահանգում առաջարկվում էր հայկական հարցի պահանջը սկսել արևմտահայ 6 վիլայեթներից՝ առանց ոչ հայաբնակ ծայրագավառների և իջնել նվազագույնին՝ երեք (Վան, Բաղեշ և Էրզրում) վիլայեթ՝ դարձյալ առանց ծայրագավառների՝ սեփական ելքով դեպի Սև ծով: Ընդ որում, ծովային ելքին տրվելու էր ավելի մեծ կարևորություն, քան տարածքի մեծությանը[93]: ՀՅԴ որոշ գործիչներ՝ Ռ. Տեր-Մինասյանը, Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը և ուրիշներ, հանդես էին գալիս նույնիսկ ավելի համեստ ու իրատես առաջարկով, անգամ դեմ էին ծովային ելքի պահանջին: Իհարկե, ՀՅ Դաշնակցության շարքերում նույնպես կային անհատ գործիչներ, հատկապես գաղութահայ հատվածից, որոնք տարածքային ավելի մեծ պահանջներ էին դնում: Սակայն ՀՅԴ -ի և կառավարության քաղաքական ուղեգիծը որոշելիս նրանք որոշակի ազդեցություն չեն ունեցել: ***Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը և նրա ձևավորած կառավարությունը երբեք Կիլիկիայի և Միջերկրական ծով ելքի հարց չի բարձրացրել: Ուստի փաստազուրկ է տասնամյակներ շարունակ դեգերող այն պնդումը, թե ՀՅԴ -ն ծովից ծով Հայաստան էր պահանջում, դրա համար էլ, իբր, կորցրեց ունեցածը:***

Հայ քաղաքական կուսակցություններից տարածքային, թերևս, ամենամեծ պահանջը ներկայացնում էին Հայ սահմանադրական ռամկավարները՝ իրենց ճանաչված առաջնորդ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, և նրանց գաղափարակից ու ձայնակից Հայ ժողովրդական կուսակցությունը, ինչպես նաև գաղութահայ հնչակյանները: Նրանք, իրոք, պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ թուրքահայ 7 վիլայեթներ՝ Կիլիկիայի չորս սանջակների հետ միասին: Սակայն պետք է նաև արձանագրել, որ Փարիզի վեհաժողովի ընդհանուր ոգևորության պայմաններում, գաղութահայության ճնշմամբ և Արևմտահայ Ազգային պատվիրակության հորդորներով, ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը, անտեսելով կառավարության անհամեմատ համեստ հրահանգները, ստորագրեց 1919թ. փետրվարի 12-ի՝ Դաշնակից տերություններին ներկայացվող ծովից ծով Հայաստան պահանջող հուշագրի (memorandum) տակ[94]: Ինչպես ասվեց, Ահարոնյանի այս քայլը լուրջ շեղում էր Հայաստանի կառավարության և ՀՅԴ Բյուրոյի պաշտոնական հրահանգից: Սակայն, ինչպես հայտնի է, այդ հուշագրի առավելագույն պահանջ-

ները Անտանտի տերությունները և ԱՄՆ -ը չափավորեցին ու 1920թ. ապրիլին Սան-Ռեմոյում ընդունված՝ Թուրքիայի հետ կնքվելիք ապագա հաշտության պայմանագրի նախագծում ՀՀ -ի մեջ ներառվելու էին Արևմտյան Հայաստանի երեք նահանգ և Տրապիզոնի նահանգի մի նեղ պարանոցով՝ ելք էր ապահովվելու դեպի Սև ծով: Այդ նշանակում է, որ Ա. Ահարոնյանը վերջին հաշվով փաստորեն վերադարձել է կառավարության հրահանգին:

«Առավոտի» 2001թ. մայիսի 12 համարում խորհրդային ժամանակաշրջանի «լավ օրերի» նման երջանիկ Աբգարյանի կողմից զարգացվում է այն միտքը, որ եթե 1920թ. մայիսին դաշնակցականները ընդհանուր լեզու գտնեին բոլշևիկների հետ, ապա տարածքային նման կորուստներ չէինք ունենա: Նույն ոգով «Հայրենիք» դաշինքի կողմից մեկ այլ թերթում հարցադրում է արվում, թե «ինչու՞ 1920թ. մայիսին իշխանությունը չհանձնվեց բոլշևիկներին, երբ ակնհայտ էր Կովկասի բոլշևիկացումը»[95]: «Եթե» -ների ու «ապա» -ների վրա կառուցված այս մեղադրանքը ևս հիմնազուրկ է և քննադատության չի դիմանում, քանզի, նախ, պատմությունը երկրաչափական թեորեմ չէ, և չի ընդունում «եթե» -ներ ու «ապա» -ներ, որովհետև հասարակական երևույթները ոչ միշտ են ենթարկվում նման կանոններին, տրամաբանական դատողություններին ու կանխատեսումներին: Պատմական գործընթացներում շատ մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը, երբեմն կատարվում են բոլորովին անսպասելի, պարադոքսալ ու հակասական երևույթներ ու իրադարձություններ, ուստի պատմությունը ոչ ավել, ոչ պակաս այն է, ինչը տեղի է ունեցել: Եվ երկրորդ՝ 1920թ. գարնանը Անդրկովկասում և Հայաստանում ծավալվող իրադարձությունների խորագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկար որևէ երաշխիք, որ մայիսին խորհրդայնանալու դեպքում Հայաստանը կունենար տարածքային ձեռքբերումներ: Եվ ահա թե ինչու:

Հայտնի իրողություն է, որ մոսկովյան բոլշևիկները Հայաստանի տարածքային ամբողջականության ջատագովները չէին: Երբ իրեն հեղափոխական, հակաիմպերիալիստական շարժման առաջնորդ հայտարարած Մ. Քեմալի՝ 1920թ. ապրիլի 26-ին Վ. Ի. Լենինին ուղղված հայտնի նամակի ոգով ապրիլի 28-ին, առանց որևէ կրակոցի, Ադրբեջանը խորհրդայնացվեց, հաջորդ երկու օրերին Ադրբեջանի հեղկոմը և 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Հայաստանին վերջնագրեր ներկայացրին՝ երեք օրվա ընթացքում դատարկել Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը[96]: Վերջնագրերում Նախիջևանի մասին խոսք չկար, քանի որ վերջինս Հայաստանին չէր ենթարկվում: Քեմալի առաջարկությամբ նախատեսվում էր, որ Ադրբեջանը պետք է ստանար Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը, իսկ Թուրքիան՝ Հայաստանի վրա հարձակվելու իրավունք ու Ռուսաստանից ռազմական օգնություն[97]:

Մայիսյան ապստամբությանը դեմ էր բոլշևիկների Կովկասյան բյուրոն: Անդրկովկասում գտնվող բոլշևիկյան զորամասերը պետք է մասնակցեին և մասնակցում էին լեհական ճակատում սկսված պատերազմական գործողություններին, այնպես որ նրանցից օգնություն չէր կարող լինել, ինչպես ակնկալում էին ապստամբները: Դեմ էին ապստամբությանը նաև հայտնի

բոլշևիկներ Բագրատ Ղարիբջանյանը, Ստեփան Ալավերդյանը: Այնպես որ «ազատության» հաղթանակը շատ կասկածելի էր:

Ուստի, Ադրբեջանի խորհրդայնացումից և Բաքվի նավթին տիրելուց հետո Ռուսաստանի խորհրդային կառավարությունը և ՌԿ(բ)Կ ԿԿ -ի Քաղբյուրոն, ելնելով արտաքին ու ներքին ռազմաքաղաքական բարդություններից, մայիսի 4 -ին ընդունված որոշումով ժամանակավորապես օրակարգից հանեցին Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի խորհրդայնացման խնդիրը[98]: Բանն այն էր, որ Լեհական ռազմաճակատում սկսվել էին լայնամասշտաբ ռազմական գործողություններ և կարմիր բանակի, այդ թվում՝ Կովկասում տեղակայված 11րդ բանակի հիմնական ուժերը փոխադրվեցին Արևմտյան ճակատ: Բայց դա չխանգարեց, որ տաքգլուխ հայ բոլշևիկները ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և անձամբ Ս. Օրջոնիկիձեի խրախուսմամբ Հայաստանում ապստամբություն բարձրացնեն, որը, սակայն, դրսից բավարար աջակցություն չստանալով, ճնշվեց:

Այստեղ կարող է հարց ծագել. ինչո՞ւ Հայաստանի կառավարությունը չբանակցեց Խորհրդային Ռուսաստանի հետ՝ փոխընդունելի պայմաններով հաշտություն կնքելու համար: Հենց բանակցություններ վարելու նպատակով ապրիլի 30-ին Խորհրդարանի փոխխոսնակ Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Մոսկվա, և մայիսի վերջերին սկսվեցին խորհրդա - հայկական բանակցությունները: Լավ սկսված բանակցությունները շուտով ձգձգվեցին ու մտան փակուղի: Իսկ այն բանից հետո, երբ հուլիսի կեսերից նույն Մոսկվայում սկսվեցին խորհրդա - թուրքական բանակցությունները, Հայաստանի հետ տարվող բանակցությունները խորհրդային կողմի պահանջով ընդհատվեցին՝ Երևանում շարունակելու հեռանկարով: Խորհրդային իշխանության համար համաշխարհային հեղափոխությունը իսլամական աշխարհում տարածելու տեսակետից ավելի հրապուրիչ ու քաղաքական առումով մեծ ձգողական ուժ ունեին «իմպերիալիզմի դեմ ազգային - ազատագրական պայքար մղող» քեմալական Թուրքիան և նրա կրտսեր եղբայր՝ նավթառատ Ադրբեջանը, քան թե աղքատ, թույլ, բացի դրանից՝ «միջազգային իմպերիալիզմի դաշնակից ու գործակալ» որակվող Հայաստանը:

1920թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրված ռուս - թուրքական պայմանագրի նախագծով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի «Ազգային ուխտով» նախատեսված սահմանները[99]: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը ճանաչում է մինչև 1877 - 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը եղած պետական սահմանը: Եվ ահա այդ պատճառով է, որ Հայաստանը դարձավ թուրք-բոլշևիկյան ընդհանուր ռազմավարության զոհը: Բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, համագործակցելով իրար հետ, խորտակեցին Հայաստանի անկախությունը, պատռեցին Սևրի դաշնագիրը և հայկական տարածքները բաժանեցին իրար մեջ: Իսկ այդ ընթացքում Հայաստանի արևմտյան «դաշնակիցները» գտնվեցին ընդամենը պասսիվ դիտորդի դերում և լիովին ձեռք քաշեցին Հայաստանից:

Որքան էլ անողոք լիներ դատաստանը հայ ժողովրդի նվիրական ձգտումների հանդեպ, սակայն աներկբա փաստ է այն իրողությունը, որ 1920 թ. Սևրի պայմանագրով պաշտոնական Թուրքիան և Արևմուտքը ճանաչել

են հայ ժողովրդի իրավունքը՝ իր տարածքների՝ հայրենիքի նկատմամբ: «Սևրի պայմանագիրը,- ընդգծում է ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը,- Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր անկախ այն հանգամանքից, որ պայմանագիրը կյանքի չկոչվեց»[100]: Եվ որքան էլ ՀՀՇ -ական քաղաքագետները դաշնակցական ռոմանտիզմ համարեն Սևրը, չի բացառվում, որ կգան ժամանակներ, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու պահանջատիրության համատեքստում, Սևրը կարող է կրկին ներառվել միջազգային քննարկումների օրակարգի մեջ՝ նոր իրողությունների լույսի ներքո:

Եվ վերջապես, ՀՅԴ -ի դեմ մղվող գաղափարական պայքարում, ինչպես խորհրդային պատմագրության մեջ, այնպես էլ ՀՀՇ -ական մամուլի վերջին շրջանի հրապարակումներում, շահարկվող թեմաներից մեկը Առաջին Հանրապետության վերջալույսին՝ 1920թ. դեկտեմբերի 2-ին, ստորագրված Ալեքսանդրապոլի չարաբաստիկ պայմանագիրն է: Բոլորովին կեղծ է տարածում գտած այն մտամարզանքը, երբ ոմանք պնդում են, որ ժամանակային, իրավական ու գործնական տեսակետից իր ստորագրման իսկ պահից որևէ ուժ չունեցող այս պայմանագիրը ՀՀ չգո կառավարության ներկայացուցիչը իբր ստորագրել է, որպեսզի *փրկի կամ ինչ-որ կերպ երկարածգի իր իշխանությունը:* Այստեղ օրինական հարց է ծագում՝ ի՞նչ իշխանություն փրկելու մասին կարող էր խոսք լինել, երբ դրանից մի քանի ժամ առաջ Երևանի (Դրո-Լեգրան) համաձայնագրով Հայաստանում բովանդակ իշխանությունը խաղաղ և կամավոր ճանապարհով արդեն հանձնվել էր բոլշևիկներին:

Բնավ իրականությանը չի համապատասխանում Լեոյի աշխատությունից մեջբերված այն քաղվածքը, թե, իբր, Ալեքսանդրապոլի պայմանագրում տեղ է գտել հետևյալ հակահայկական ձևակերպումը. *«Օսմանյան սահմանի վրա հայ մեծամասնություն ունեցող որևէ հողամաս չկա»*[101]: Այս մեջբերումը ոչ միայն չար միտումնավորության, այլև պայմանագրի բնագրին անծանոթ հոդվածագրի բացահայտ անտեղյակության հետևանք է: Հազիվ թե գտնվի մի պայմանագիր, որն այնքան աղավաղեն ու կամայական մեկնաբանությունների ենթարկեն՝ ՀՅ Դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով, ինչպիսին Ալեքսանդրապոլինն է: Խորհրդային ժամանակաշրջանում նույնիսկ չի եղել միասնական կարծիք այդ պայմանագրի հոդվածների ընդհանուր թվի վերաբերյալ: Այն տատանվում էր 14-ից մինչև 18-ի սահմաններում: Պայմանագրի ստույգ հոդվածների թիվը 18-ն է: Քանի որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ մի կողմ չի վավերացրել և պաշտոնապես չի հրապարակել, ուստի ժամանակին շրջանառության մեջ է դրվել անգամ պայմանագրի նախագիծը՝ հրամցվելով իբրև իսկական տարբերակ (բնօրինակ): Հենց նման թյուրիմացության արդյունք է Լեոյի՝ վերը նշված «քաղվածքը», որն ընդամենը Ք. Կարաբեքիրի ներկայացրած՝ պայմանագրի նախագծի պարզ արտագրությունն է: Բանակցությունների ժամանակ Ալ. Խատիսյանին հաջողվել է հանել այդ կետը: Պայմանագրի բնագրում, իրոք, նման կետ չկա: Պայմանագրի ստորագրումից մեկ-երկու ամիս չանցած՝ արդեն ամենուրեք շրջող բամբասանքները հերքելու նպատակով Ալ. Խատիսյանն այս մասին լրացուցիչ պարզաբանումներ է տվել

Կ. Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» լրագրում[102]:

Թեև միջազգային - իրավական նորմերին համապատասխանության տեսակետից Ալեքսանդրապոլի պայմանագիրը իր ստորագրման իսկ պահից չի ունեցել իրավական ուժ, սակայն իբրև պատմական փաստաթուղթ՝ ճշմարտությունը պահանջում է ասել, որ, իրոք, այդ պայմանագրում իսկապես կան Հայաստանի պետական սուվերենությունը վտանգող և ռազմական ուժը զինաթափող միանգամայն անընդունելի հոդվածներ:

Բայց մյուս կողմից՝ կեղծ և էժան բամբասանք է հակադաշնակցական գրականության մեջ և վերջին շրջանի ՀՀՇ -ամետ մամուլում տեղ գտած այն միտքը, թե *«Ալեքսանդրապոլի հաշտությամբ Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազ. կմ քառակուսի»*[103]: Սույն միտքը իրականությանը չի համապատասխանում այն պարզ պատճառով, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն՝ հայ - թուրքական պետական սահմանը սկզբունքորեն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով; Ալեքսանդրապոլի գավառը մնալու էր թուրքերի կողմից ժամանակավորապես օկուպացված՝ մինչև Հայաստանի սահմանված չափով զինաթափումը, իսկ Նախիջևանը անցնում էր Թուրքիայի հովանավորության տակ, որպեսզի հետագայում՝ 1921թ. Մոսկվայի պայմանագրով, հանձնվեր Ադրբեջանին: Ինչ վերաբերում էր Արևելյան Հայաստանի վիճելի մնացած տարածքներին՝ Լոռու չեզոք գոտուն, Զանգեզուրին, Լեռնային Ղարաբաղին և այլն, ապա դրանց վերաբերյալ պայմանագրում ակնարկ անգամ չկար: Ինչպես հայտնի է, այն ժամանակ Զանգեզուրն արդեն գրեթե ազատագրված էր, և դեկտեմբերի 25-ին Տաթևի համազանգեզուրյան համագումարում հռչակվեց ինքնավար Սյունիք: Իսկ որ քիչ անց՝ 1921թ. հուլիսի 5-ին, ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն Լեռնային Ղարաբաղը հանձնեց Ադրբեջանին, դրա հետ Ալեքսանդրապոլի պայմանագիրը որևէ առնչություն չունի: Արդյունքում ստացվում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը պիտի ունենար գրեթե այնքան տարածք, ինչքան ունեցավ 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և նույնի կրկնությունը համարվող 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով:

Մեր պատասխաններն ամբողջացնելու համար անդրադառնանք մեկ այլ խնդրի ևս՝ 1921թ. Փետրվարյան ապստամբության պատմության նենգափոխմանը: Չար զրպարտանք ու պատմական կեղծիք է այն պնդումը, թե, իբր, 1921թ. փետրվարին ՀՅԴ-ն *«Հեղափոխություն է արել սեփական ժողովրդի դեմ»*[104]: Որ Փետրվարյան ապստամբության իրական հեղինակները դաշնակցականները չէին՝ այդ մասին վկայում է հենց Հայհեղկոմի անդամ Ա. Մռավյանը, որին ոչ ոք չի կարող մեղադրել ՀՅԴ -ին համակրելու մեջ: «Իմ խորին համոզմամբ,- թարմ հետքերով գրում էր Ա. Մռավյանը 1921թ. մարտի 9 -ի նամակում,- վերջին ամսում Կենտկոմի քաղաքականությունը՝ դաժան ձևով սպաների աքսորը, բռնագրավումները, ուժից վեր սայլապարհակը, թուրքերի նկատմամբ վերաբերմունքի անորոշությունը, մեր անկարողությունը՝ բնակչությանը տալու թեկուզ ինչ - որ բան. այս ամենը բնակչության մեջ առաջացրեց շատ նկատելի հոգեբանական ռեակցիա մեր դեմ...»[105]: Ուրեմն, անգամ հայ բոլշևիկներն իրենք են խոստովանել այն ակնհայտ փաստը, որ փետրվարյան ապստամբությունն սկսվել է որպես ա-

նելանելի վիճակի մեջ հայտնված ժողովրդի պոռթկում: Եվ դա ճիշտ է, քանի որ ՀՅԴ -ն միայն գլխավորել է սկսված շարժումը:

Փետրվարյան ապստամբության առնչությամբ ասպարեզ նետվող մյուս զրպարտությունն այն է, որ, իբր, *«Սրա հետևանքով Հայաստանի ներկայացուցիչը զրկվեց Մոսկվայում ընթացող ռուս - թուրքական բանակցություններին մասնակցելու իրավունքից, որովհետև Հայաստանում օրինական իշխանություն չկար»*[106]:

Ներկայումս դպրոցականն անգամ գիտի, որ Փետրվարյան ապստամբության սկսվելու փաստը և Ս. Վրացյանի հեռագիրը էական դեր չեն խաղացել ո՛չ Հայաստանի պատվիրակ Ալ. Բեկզադյանի՝ Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու և ո՛չ էլ պայմանագրի վերջնական արդյունքի վրա: Այդ մասին խոստովանել է ինքը՝ Ալ. Բեկզադյանը[107]:

Ձերբազատվելով խորհրդային - ամբողջատիրական կապանքներից՝ վերջին տասնամյակում հայ պատմագրությունը զգալի առաջընթաց է արձանագրել: Նման պայմաններում գիտական - պատմաբանների համար բացարձակապես անընդունելի են քաղաքական այն էժանագին զրպարտագրերը, որոնք տեղ են գտնում մեր մամուլում, հրապարակախոսության մեջ և որոշ հեղինակների աշխատություններում:

Գաղափարախոսական պայքարում քննադատությունը չպետք է լինի կույր և փաստազուրկ, այլապես ասվածը արժեզրկվում է ու դառնում իր հեղինակի դեմ ուղղված հակաքարոզչություն: Ակներև է, որ մեր հասարակության առաջընթացի համար գաղափարական բախումներն անհրաժեշտ են. առանց դրա հասարակությունը դատապարտված է լճացման ու մահվան: Սակայն այդ պայքարը պետք է մղվի քաղաքակիրթ ձևով, բարոյականության շրջանակներում և ամենակարևորը՝ ճշմարտությանը հասնելու նպատակադրումով:

ՈՎ-ԻՆՉՊԵՍ Է ՀԱՍԿԱՆՈՒՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Հասարակության առջև քաղաքական հակառակորդի վարկն ու հեղինակությունը խաթարելու նպատակի և այն իրականություն դարձնելու համար ընտրվող միջոցի միջև միշտ էլ գոյություն ունի մի բավական հստակ ու տեսանելի սահմանագիծ: Այն ոտնակոխ անելու պարագայում քաղաքական պայքարն ուղղվում է ոչ թե նույն ժողովրդի զավակը հանդիսացող սեփական ընդդիմախոսների, այլ տվյալ ժողովրդի ու պետության արմատական շահերի դեմ: Ուստի ներազգային բանավեճն ու ներքաղաքական պայքարը համազգային և համապետական նպատակներից ու խնդիրներից տարանջատող այդ սահմանագիծը հատելու մոլուցքը ի վերջո դառնում է էությամբ՝ ապազգային, դրսևորման ձևով՝ հակապետական գործունեություն:

Ուրեմն, տվյալ սահմանագիծը հատելուց առաջ ներազգային կամ ներքաղաքական հարթության վրա իսկապես անհրաժեշտ ու օգտակար բանավեճի մասնակիցներից յուրաքանչյուրը պարտավոր է հարց տալ ինքն իրեն՝ ի վերջո ո՞ւմ եմ ես ծառայում՝ սեփական ժողովրդի ներքին առողջաց-

մանը, թե՞ նրա արտաքին հակառակորդների նպատակների իրականացմանը: Նման հարցադրումը ազգի միասնությունը և պետականության գոյությունը պահպանելու, նրան սպառնացող վտանգները չեզոքացնելու՝ այն պարտադիր պայմաններից մեկն է, որի անտեսումը ճանապարհ է բացում ազգային նիհիլիզմի համար: Իսկ ցեղասպանության ենթարկված ժողովրդի համար ազգային նիհիլիզմը դա ստույգ կործանման ուղի է:

Վերջին տարիների ընթացքում պատմության կեղծարարությունը իրենց համար զենք դարձրած հայաստանյան որոշակի ուժերի և նրանց սպասարկող պատմաբանների ու հրապարախոսների կողմից ՀՅ Դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով համառորեն շրջանառության մեջ դրվող «հայկական ահաբեկչության» մասին թեզը ազգային նիհիլիզմի մեկնակետից բխող նման մտայնության ու գործելակերպի առավել բնորոշ ու տիպական օրինակներից մեկն է: Ներկայումս Հայաստանի ներսում ծավալվող ներքաղաքական պայքարը օտար, իսկ հաճախ էլ՝ ուղղակի թշնամական նպատակների ծառայեցնող այդ հարցադրումը որոշակի քաղաքական ուժի՝ ՀՀՇ-ի, սեփական ժողովրդի ազգային նպատակները ոտնակոխ անելու միջոցով՝ ինքնահաստատվելու ձգտման արտահայտությունն է:

Անցած տասնամյակի ընթացքում և մանավանդ՝ 1998 -ի իշխանափոխությունից հետո, հայաստանյան մամուլի ու հրապարախոսության, իսկ հաճախ էլ՝ պատմագրության «գիտական ժանրի» օգտագործման միջոցով ասպարեզ են նետվում ընդարձակ, բայց խիստ միտումնավոր ուղղվածություն ունեցող հրապարակումներ ու հոդվածներ[108], որոնց հեղինակները, փորձելով հաշվեհարդար տեսնել Հայաստանի քաղաքական դաշտում գործող ուժի՝ ՀՅ Դաշնակցության նկատմամբ, իրականում ազգի արմատական շահերը ոտնակոխ անելու միջոցով քաղաքական հաշվեհարդար են սկսում՝ նոր ու նորագույն ժամանակների հայոց պատմության հանդեպ: Ձինվելով ժամանակակից ահաբեկչության բնույթի ու նպատակների մասին հանրահայտ պատկերացումներով, նրանք գրոհի են անցնում վերջին երկու դարերի հայ ազատամարտի և նրա ղեկավար ուժի՝ ՀՅ Դաշնակցության պատմության, գաղափարախոսության, գործելակերպի ու նպատակների դեմ՝ ջնջելով անցյալը ներկայից տարանջատող բոլոր սահմանագծերը, պատկերացումները և, ինչու չէ, նաև դրանց հոլովույթում ձևավորված արժեքներն ու սրբությունները: Բանը հասնում է անգամ նրան, որ հայկական հարցի մասին դպրոցական դասագիրք ստեղծելու անմեղ փորձն անգամ դիտվում է իբրև տեռորիստական գաղափարախոսություն քարոզելու միտում:

Նույն նպատակով փորձեր են արվում նաև նորանկախ Հայաստանում տեղի ունեցած բոլոր ահաբեկչական գործողությունները, այդ թվում և 1999թ. հոկտեմբերի 27-ը, ՀՅ Դաշնակցության գաղափարախոսության անմիջական ազդեցության արդյունք ներկայացնելու ուղղությամբ:

1998-ի իշխանափոխությունից ու մանավանդ՝ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, ՀՅԴ-ի պատմության ու գաղափարախոսության դեմ ուղղված նման հետևողական քարոզարշավի յուրահատկությունն այն է, որ մի կողմից՝ փորձ է արվում «հայկական ահաբեկչության» առասպելը կապել 1998-ին ձևավորված նոր քաղաքական իրողությունների մեջ որոշակի դե-

րակատարություն ունեցող ուժի և նրա միջոցով՝ Հայաստանի իշխանությունների հետ, իսկ մյուս կողմից՝ մեր երկրի ներսում «հայտնագործելով» 21-րդ դարի գլոբալ վտանգների սանդղակում փաստորեն առաջին գծի վրա գտնվող «ահաբեկչություն» երևույթը՝ ողջ աշխարհում առաջ բերել պատասխան հակազդեցություն՝ ոչ միայն ՀՅԴ -ի, այլև Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ:

ՀՅ Դաշնակցության և դաշնակցականների դեմ ուղղված սեփական գործողությունները որպես «հայ ահաբեկիչների» ու «հայկական ահաբեկչության» դեմ պայքար ներկայացնելու՝ թուրքական պատմագրության մի քանի տասնամյակ տևող փորձերի շարունակությունը հանդիսացող այս երևույթը հնարավոր չէ գնահատել սոսկ որպես ներքաղաքական պայքարի դրսևորում կամ առանձին անհատների՝ ՀՅԴ հանդեպ առկա հակակրանքի ու ատելության արտահայտություն: Քանզի թուրքական պատմագրությունը ՀՅԴ-ին տրվող նման գնահատականների միջոցով ձգտում է «արդարացնել» Հայոց ցեղասպանության իրականացման փաստը: Իսկ ահա ՀՅԴ-ի հայ ընդդիմախոսները հիանալի կերպով հասկանում են մի քանի դար տևած հայ ազգային - ազատագրական շարժման, այդ թվում և նրա զինյալ դրսևորումների տարբերությունը՝ ժամանակակից ահաբեկչությունից ու ծայրահեղականությունից: Տեղյակ են նաև այն փաստին, որ հայ ժողովրդին ցեղասպանության ենթարկելու՝ Թուրքիայի պետական քաղաքականությունը ամենևին էլ պայմանավորված չէր հայ ազատամարտի այս կամ այն կոնկրետ դրսևորմամբ, այլ միատարր ազգային պետություն ստեղծելու՝ պանթուրքական ծրագրերով:

Ուրեմն, ի վերջո, ի՞նչ քաղաքական շարժառիթներով են առաջնորդվում «հայկական ահաբեկչության» մասին թուրքական առասպելները վերակենդանացնող ուժերն ու գործիչները: Ըմբռնելու համար դրանց բովանդակությունը՝ պետք է քննության ենթարկել ՀՅԴ -ին ներկայացվող «մեղադրանքների» ուղղվածությունը: Նախ և առաջ ուշագրավ է այն փաստը, որ ՀՅ Դաշնակցության պատմությունը որպես ահաբեկչությունների շարան ներկայացնելու փորձերը սերտորեն զուգակցվում են աշխարհում, այդ թվում և Հայաստանում ներկայումս տեղի ունեցող ահաբեկչական գործողությունների մեկնաբանության հետ: Ամենևին էլ պատահական չէ, օրինակ, այն իրողությունը, որ ՀՀՇ-ի հայտնի տեսաբան Արա Սահակյանը իր «Պատահականությո՞ւն, թե՞ օրինաչափություն» մեղադրական բնույթ կրող հրապարակումը մամուլին է հանձնել 2002թ. հոկտեմբերի 27-ին՝ Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչության երրորդ տարելիցի օրը: Պատահական չէ նաև այդ առիթով հեղինակի կողմից արվող եզրակացությունը. «...Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը «հարուստ» փորձ է կուտակել իր քաղաքական ուղեգծի ընդդիմադիրներին ահաբեկելու, նրանց նկատմամբ բռնարարքներ, մատնություններ ու հրոսակային հարձակումներ իրականացնելու ասպարեզում»[109]: Այստեղից էլ բխում է զգուշորեն ընթերցողին առաջարկվող եզրակացությունը. եթե անցյալի կտրվածքով ՀՅԴ-ն ունի նման փորձ, ապա արդյոք պատահակա՞ն կարելի է համարել «Հոկտեմբերի 27-ի» գործով ամբաստանվող երեք հան-

ցագործների նախկին դաշնակցական լինելը: Ուշագրավ է նաև այն փաստը, որ ինչպես Արա Սահակյանը, այնպես էլ մյուս հեղինակները արտաքուստ փորձում են տպավորություն ստեղծել, թե ՀՅԴ-ի մասնակցությունը հայ ազատագրական շարժմանը և նրա մոտ առկա «այլամերժությունն» ու «բռնության պաշտամունքը» սկզբունքորեն տարբեր երևույթներ են, այսինքն ձգտում են առաջինը տարանջատել երկրորդից: Նրանց կարծիքով, ահաբեկչությունը միայն 19-րդ դարի վերջին - 20րդ դարի սկզբին գործող հեղափոխական կուսակցության գործելակերպի տարր չէր, այսինքն միջոց, բուն նպատակին երկրի ու ժողովրդի ազատագրությանը հասնելու համար, այլ սեփական արյունակիցների հանդեպ հաշվեհարդարի զենք: Նման մոտեցումը և այն «հիմնավորող» կամայական փաստերի հայթայթումը նպատակ ունեն «փոխատեղել» նպատակն ու միջոցը և դրանով իսկ միջոցը դարձնել նպատակ: Դա հասկանալի է, որովհետև թուրքական բռնապետությանը ներկայացնող այս կամ այն պաշտոնյային ահաբեկելու մեջ ՀՅԴ -ին մեղադրելը հավասարազոր կլիներ հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանության արդարացմանը: Մինչդեռ, օրինակ, նույն թուրքական բռնապետության դեմ կռվելու համար զենք հայթայթելու նպատակով բռնությամբ միջոցներ հանգանակելու «Փոթորիկ» գործողության ընթացքում մեծահարուստ հայերի կամ առանձին քաղաքական հակառակորդների ահաբեկման փաստերի մեկնաբանությանը կարելի է տալ նաև այլ ուղղվածություն և ահաբեկչությունը համարել ՀՅԴ -ի բուն նպատակը, անգամ էությունը: Սակայն այն փաստը, որ նույնիսկ այս հարթության վրա արասահակյանների կողմից ՀՅԴ -ին ներկայացվող «մեղադրանքները» սահմանափակվում են թուրքական և ցարական բռնապետության դեմ պայքարում անխուսափելի դարձող հայ մատնիչներին կամ խափանարարներին չեզոքացնելու ծանոթ գործողություններով, ակնհայտ է դառնում, որ նման հնարքի միջոցով հնարավոր չէ «ահաբեկչական էություն» վերագրել մի ողջ կուսակցության: Առավել ևս զավեշտական է իր վտանգված հայրենակիցներին զենք հայթայթելու նպատակով 20-րդ դարի սկզբին «Փոթորիկ» գործողության ընթացքում, հայ մեծահարուստների դեմ իրականացված գործողությունների «մեղքը» բարդել ներկայումս պետականության պայմաններում գործող կուսակցության վրա: Քանզի նման մեթոդով առաջնորդվելու պարագայում ահաբեկչության մեջ կարելի է մեղադրել նույնիսկ ժամանակակից ժողովրդավարական երկրների հիմքերը դրած բոլոր առաջնորդներին ու նրանց ղեկավարած քաղաքական ուժերին, որոնք զենք են գործածել և արտաքին թշնամու, և դավաճանների ու մատնիչների դեմ:

Սակայն խնդիրն այն է, որ ՀՀՇ-ի տեսաբանների կողմից շրջանառության մեջ դրված մեղադրանքները քաղաքական հակառակորդին վարկաբեկելու նպատակ ունեցող սովորական զրպարտագրեր չեն: Բանն այն է, որ ՀՀՇ-ի տեսաբանները ՀՅԴ -ին դիտում են առաջին հերթին որպես որոշակի գաղափարախոսության կրողը հանդիսացող ուժ: ՀՅԴ անցյալի ու ներկայի պատմության և քաղաքականության դեմ ուղղվող հարվածների հիմնական, բայց քողարկված նպատակը հենց այդ գաղափարական ուղղության չեզոքացման նպատակադրումն է: Վերջինիս առանցքը, ինչպես

անցյալում, այնպես էլ այսօր, ՀՅԴ -ի համար եղել ու մնում է Հայ Դատի գաղափարը, որի իրականացման ներկա առաջնահերթությունը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրն է: Վերջինիս հետ է սերտորեն առնչվում նաև հայ - թուրքական հարաբերությունների կարգավորման երկու հակադիր մոտեցումների բանավեճը, որոնցից մեկի ներկայացուցիչը հենց ինքը ՀՀՇ -ն է: Այդ բանավեճի մեջ ՀՅԴ -ի և նրա տեսակետը պաշտպանող ուժերի ու պետական գործիչների փաստարկները ներկայումս սկսում են իրենց ազդեցությունը գործել միջազգային հանրության և արևմտյան առանձին ազդեցիկ երկրների ղեկավարության ու հասարակական կարծիքի վրա: «Կարգավորում-Ցեղասպանության ճանաչման միջոցով» բանաձևը սկսում է քաղաքական լուրջ հաղթանակներ արձանագրել: Ուստի դրանից անհանգստացած ուժերն Արևմուտքում, և ինչու չէ՝ նաև Թուրքիայի պետական գործիչները, պարբերաբար ասպարեզ են նետում «կարգավորում՝ անցյալի գնահատականը թողնելով պատմաբաններին» ծանոթ բանաձևը, որի իրականացմանն են լծվում պարբերաբար «մեռնող ու հարություն առնող» զանազան «թուրք - հայկական հաշտեցման հանձնախմբերի» անդամները: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ճանապարհով և ուղղակիորեն՝ սեփական կառույցների միջոցով, ՀՅԴ -ի քաղաքական գծի արձանագրած այս ձեռքբերումներն ստեղծում են անհրաժեշտ գաղափարաքաղաքական նախադրյալներ՝ նաև ոչ վաղ անցյալի ճիշտ գնահատման ու վերարժևորման համար՝ արդեն ներկա իրողությունների համատեքստում:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ակնհայտ է դարձնում Թուրքիայի կողմից պետականորեն իրականացված ահաբեկչության և նրա բարձրագույն դրսևորման՝ մի ամբողջ ժողովրդի ցեղասպանության դեմ պայքարելու՝ ՀՅԴ-ի միջազգայնորեն ճանաչված իրավունքի ու նաև պարտականության անհամապատասխանությունը ներկայումս «քաղաքական ահաբեկչություն» կոչվող երևույթի հետ: Ակնհայտ է դառնում նաև, որ ՀՅԴ-ն՝ որպես այդ պայքարի առաջնորդ ու խորհրդանիշ, իր պատմությամբ ու քաղաքականությամբ մարմնավորել ու մարմնավորում է ոչ թե քաղաքական բռնությունը, այլ այն չեզոքացնելու համար անհրաժեշտ՝ կամքն ու վճռականությունը: Ուրեմն, ներկայումս Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման նորանոր փաստերի լույսի ներքո նորովի է հիմնավորվում անցյալում ՀՅԴ-ի ունեցած դերակատարությունը՝ դառնալով ցեղասպանության, այսինքն՝ ահաբեկչության բարձրագույն ձևի դեմ պայքարի պատմական նախադեպ՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին քառորդի կտրվածքով: Այսինքն՝ ճանաչելով Հայոց ցեղասպանության անհերքելի փաստը՝ աշխարհի տարբեր երկրներն ու միջազգային կազմակերպությունները դրանով իսկ ընդունում են ոչ միայն ժամանակակից Թուրքիա պետության պատասխանատվությունը՝ հայ ժողովրդի դեմ իրականացված այդ հանցագործության մեջ, այլև ՀՅԴ-ի և հայ ժողովրդի կազմակերպված դիմադրությունն ապահովող այլ կառույցների՝ ցեղասպանության քաղաքականությանը դիմադրելու, հակահարված տալու բնական իրավունքը: Դրանով իսկ, ՀՅԴ-ն իր պատմությամբ ներկայումս միջազգային

հանրության կողմից դասվում է ոչ թե ահաբեկչության ու ահաբեկիչների, այլ նրանց քաղաքական հակառակորդների ճամբարում: Հայոց ցեղասպանության ճանաչումով անխուսափելի դարձող նման խորքային գնահատականները անհրաժեշտ քաղաքական ու գաղափարական հիմք են ստեղծում՝ հայ պատմագրության համար՝ մեր ժողովրդի նոր և նորագույն պատմության թուրքական կեղծարարությանը հակահարված տալու գործում: Միաժամանակ, դրանով «հայկական ահաբեկչության» ու «ահաբեկչների» մասին թուրք պատմաբանների հնարած առասպելները զրկվում են անհրաժեշտ հիմքից ու ենթահողից:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացից բխող նման հիմնարար եզրահանգումների լույսի ներքո առաջ է գալիս հարցադրումների երկրորդ՝ միանգամայն բնական ու տրամաբանական շղթան. իսկ այդ դեպքում ո՞ւմ են ծառայում վերջին շրջանում խիստ աշխուժացած՝ այն հայ հրապարակախոսներն ու պատմաբանները, որոնք անգամ Հայոց ցեղասպանության ճանաչման ներկա իրողությունների պայմաններում շարունակում են համառորեն տարածել «հայկական ահաբեկչության» և «հայ ահաբեկիչների» մասին թուրք պետական գործիչների ու պատմաբանների ծանոթ առասպելները: Եթե նրանք մեր իրականության մեջ քաղաքակիրթ աշխարհի ժողովրդավարական արժեքների կրողներն ու դրոշակակիրներն են, ապա պետք է ոգևորվեին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացից ծնունդ առնող նման հիմնարար եզրահանգումներից, որոնց լույսի ներքո մեր ողջ ազատամարտը ներկայանում է որպես ցեղասպանության քաղաքականության դեմ ուղղված արդարացի և օրինաչափ դիմադրություն, այսինքն՝ ստեղծվում է հնարավորություն՝ պատմական ճշմարտությունը արդիականության արժեքային համակարգի միջով անցկացնելու և հիմնավորելու համար:

Եվ քանի որ տեղի է ունենում հակառակ գործընթացը, հարց է առաջանում՝ ո՞րն է ՀՀՇ -ի համար առաջնայինը՝ քաղաքակիրթ աշխարհի արժեքները և դրանցից բխող՝ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթա՞ցը, թե՞ սեփական քաղաքական հակառակորդին՝ ՀՅԴ-ին զրպարտելով, ահաբեկչության պիտակը կպցնելով՝ վարկաբեկելու անզուսպ մոլուցքը:

Վերջին տարիների ընթացքում՝ առանձնապես 1998-ի իշխանափոխությունից հետո, ՀՀՇ -ի դրսևորած քաղաքական պահվածքը, մասնավորապես, արդեն իսկ ձախողված՝ «Թուրք -հայկական հաշտեցման հանձնախմբում» ստանձնած դերակատարությունը և այն հիմնավորելու համար «հայկական ահաբեկչության» թեմայով պատմագիտական ու հրապարախոսական աշխատանքներ պատվիրելու ու գրելու փորձերը, ցույց են տալիս, որ ՀՀՇ-ի համար առաջնայինը ոչ թե հրապարակայնորեն հռչակվող սկզբունքն է՝ արժեքային ընտրությունը, այլ վերջինիս քողի տակ որոշակի քաղաքական գործառույթ իրականացնելու ձգտումը՝ անկախ նրանից՝ այն վնասո՞ւմ, թե՞ նպաստում է սեփական ժողովրդի արմատական շահերին: Ներկայումս այդ գոր-

ծառույթի իրականացումը պահանջում է հակակշռել հայ իրականության մեջ առկա ազգայնական բևեռի՝ վերջին տարիներին արձանագրած հաջողությունները Հայոց ցեղասպանության ճանաչման գործում՝ դրանով հնարավորություն տալով կյանքի կոչել թուրք - հայկական հապշտապ «հաշտեցման» այն անիրականանալի ծրագրերը, որոնք խարսխված են ոչ թե պատմական ճշմարտության վերականգնման, այլ որոշ երկրների կողմից Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքի արժևորման այսրոպեական հաշվարկի վրա: Ուստի «հայկական ահաբեկչության» մասին թուրքական առասպելների վերակենդանացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ցեղասպան Թուրքիայի՝ հայ ժողովրդի հանդեպ գործած հանցանքը «հայ ազգայնական-ահաբեկիչների» գոյության փաստով հակակշռելու պատմագիտական, իսկ ավելի ճիշտ՝ քաղաքական զուգակշիռ, որն ստեղծում է կողմերի վրա գործադրվող ու գործադրվելիք ճնշումների բաշխման ու վերաբաշխման հնարավորություն: Խեղաթյուրելով սեփական ժողովրդի անցյալն ու ներկան՝ նման անպատվաբեր դերակատությունը ստանձնած ուժը՝ ՀՀՇ-ն, դառնում է մեր երկրի ներսում առկա այն հինգերորդ զորասյունը, որը պայմաններ է ստեղծում ոչ թե հայ-թուրքական անկեղծ երկխոսության, այլ Թուրքիայի՝ Անդրկովկաս թափանցելու ծրագրերի իրականացման համար:

Ուրեմն՝ «ահաբեկչություն» կոչվող վտանգավոր մեղադրանքի միջոցով ՀՅԴ անցյալի ու ներկայի վարկաբեկումը և նրա հանդեպ աշխարհի հզորների զայրույթը շարժելու փորձերը հանդիսանում են նման թափանցումների ճանապարհը բացելու ընդհանուր ռազմավարության հայկական նժարը:

Ծանոթագրություններ

1. Ստեփան Պողոսյան, Հայացք անցյալին. հանուն այսօրվա ու վաղվա, Երևան, 2002, էջ 15:
2. Տե՛ս Ա. Գ.Հովհաննիսյան, Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները իննսունական թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 2, էջ 63-82:
3. Աշոտ Սարգսյան, ՀՅԴ-ն պատմության դատաստանի առաջ, «Հայկական ժամանակ», 24 ապրիլի, 2002թ.:
4. Մանիֆեստ ՀՅ Դաշնակցութեան, կամ «Դրօշակի» թռուցիկ թերթ, N 1, էջ1:
5. Նույն տեղում:
6. Ստեփան Պողոսյան, նշվ. աշխ.՝ էջ 16:
7. Վ. Նավասարդեան, Հայ անկախության գաղափարը մերձաւոր անցեալի մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1924, N 4, էջ 80:
8. Արա Սահակյան, Պատահականությո՞ւն, թե՞ օրինաչափություն, «Հայկական ժամանակ», 27 հոկտեմբերի, 2002թ.:
9. Նույն տեղում:
10. Տե՛ս Շահեն Կուժիկյան, Շատախ: Լսած և տեսածներիցը, Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Շ. Կուժիկյանի ֆոնդ, վավ 3 (բ), տետրակ 29, թ. 60-61:
11. Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1939, N 7, էջ 144:
12. Յայտարարութիւն, «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», հատ.1, Պոսթըն,, 1934, էջ 94-95:
13. Աշոտ Սարգսյան, ՀՅԴ-ն պատմության դատաստանի առաջ, «Հայկական ժամանակ», 24 ապրիլի, 2002թ.:
14. Ստեփան Պողոսյան, նշվ. աշխ.՝ էջ 19:
15. Տե՛ս «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», հատ. Բ, էջ 109-110:
16. Այն փաստը, որ դաշնակցական մարտիկները դիմել են հմուտ գործողությունների՝ իրենց վրա վերցնելով նաև կանոնավոր բանակին դիմադրելու գործը, հաստատվում է նաև ժամանակի օտարերկրյա մամուլի ամենաազդեցիկ օրգանների կողմից: Օրինակ «Նյու Յորք Հերալդը» սպանված զինվորների թիվը համարում էր 450, «Դեյլի - Նյուզը»՝ 400, «Թանը» վկայում էր, որ հիվանդանոցներում 500 վիրավոր զինվորներ են պառկած: Իսկ եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ նման կռիվներում թուրքական ջարդարար խուժանը զորքից շատ ավելի մեծ կորուստներ էր ունենում, ապա միայն Սամաթիայում 1000 սպանված թուրքերի մասին տեղեկությունը կարելի է մոտ համարել իրականությանը: Ավելի մանրամասն տե՛ս «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», ա. հատոր, Պէյրութ, 1984, էջ 164:
17. Ստեփան Պողոսյան, նշվ. աշխ.՝ էջ 21:
18. Տե՛ս Հրաչ Տասնապետեան, ՀՅ Դաշնակցութեան յեղափոխական - մարտական գործունեութիւնը, Պէյրութ, 1994, էջ 55:
19. Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երևան, «Հայագիտակ»,-2003, էջ 63:
20. Տե՛ս «Հայկական ժամանակ», 27 մարտի 2001թ., տե՛ս նաև «Առավոտ», 12 մայիսի 2001 թ.:
21. Տե՛ս Զարևանդ, Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ, 1926, էջ 5:
22. Տե՛ս «Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան ծրագիր», Կ. Պոլիս, 1910 թ. էջ 3-11, տե՛ս նաև «Ծրագիր ՍԴ Հնչակեան կուսակցութեան Տաճկահայաստանի համար», Կ. Պոլիս, 1910:

23. Տե՛ս Վ. Փափազեան, Իմ յուշերը, Պէյրութ, 1953թ., հ.2, էջ 16-18:
24. Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ֆ 4047, ց. 1, գ. 237, թ. 59:
25. Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 6, Ե., 1981, էջ 478:
25ա. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ, Թեհրան, 1982, էջ 437:
26. Ա. Համբարյան, ՀՅԴ կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ (1890-1917), Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, N 2, էջ 10:
27. Վարդգես Միքայէլեան, Արդյոք ճի՞շտ քայլ էր Դաշնակցութեան համաձայնութիւնը երիտթուրքերի հետ, «Ազատամարտ» ՀՅԴ պաշտոնաթերթ, 1992 թ. 5-11 յունիս, էջ 8:
28. ՀՅԴ-ն պարտավոր է լռել, «Հայկական ժամանակ», 1 սեպտեմբերի, 2001թ.:
29. Դաշնակցականները օսմանյան հավատարիմ քաղաքացիներ, «Առավոտ», 1 սեպտեմբերի, 2001թ.:
30. Յայտարարագիր և որոշումներ ՀՅ Դաշնակցութեան հինգերորդ Ընդհանուր ժողովին - 1909, ժնև 1910, էջ 26-27:
31ա. «Ազատամարտ», 1992թ., N 23 (հունիս):
31. Տե՛ս Հրաչ Տասնապետեան, ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 104:
32. «Հայկական ժամանակ», 4 մայիսի, 2001թ.:
33. Նույն տեղում:
34. «Հայկական ժամանակ», 24 ապրիլի, 2002 թ.:
35. Նույն տեղում, 26 դեմտեմբերի, 2002թ.:
36. ՀՀ ՀՔԿՊ ՊԿԱ, Ֆ. 4047, ց.1, գ. 199, թթ. 4-19, տե՛ս նաև Ա. Կարինյան, Հայ նացիոնալիզմի ուղին, Ե., 1926, էջ142:
37. Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997: էջ 25:
38. «Դիւան Հայոց պատմութեան», գիրք ԺԳ: Հարստահարություններ Տաճկահայաստանում (վավերագրեր 1801-1888), հրատարակեց Գիւտ Աղանեանց ա.քահ., Թիֆլիս, տպարան Ն. Աղանեանցի, 1915, էջ I.
39. «Լևոն Շանթը իր մասին», Նյու Յորք, 1949:
40. Տե՛ս Հ. Քաջազնունի, ՀՅ Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Պուքրեշ, 1923, էջ 6:
41. Տե՛ս ՀՀ ՀՔԿՊ ՊԿԱ Ֆ. 4047, ց.1 գ. 88, թ.2, տե՛ս նաև Ռուբէն, Հայ-թրքական կնճիռը, Գահիրե, 1924 թ. էջ 50-51:
42. Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ. էջ 73:
43. Տե՛ս Ս. Արարատյան, ճշմարտություններ Կովկասի մասին, Պուքրեշ, 1941, էջ 17:
44. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 84:
45. Մ. Վարանդեան, ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, հ. Բ, Փարիզ, 1950, էջ 14:
46. «Հայկական ժամանակ», 1 սեպտեմբերի, 2001 թ., 24 ապրիլի, 2002 թ.:
47. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ակադ. Մ. Ներսիսյանի խմբ.), Ե., 1991թ. էջ XXII:
48. Տե՛ս Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 334:
49. Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 335, տե՛ս նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Պեյրութ, 1958, էջ 12, Ա. Դարբինյան, նշվ. աշխ, էջ 341:
50. Ս. Վրացյան, նշվ.աշխ , էջ 12:
51. Տե՛ս «Առավոտ», 12 մայիսի, 2001թ.:
52. Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 6, Ե., 1981, էջ 552:
53. Տե՛ս Մ. Կարապետյան, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.), Երևան, 1999, էջ 92

տե՛ս նաև Ա. Հ. Հարությունյան, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, 1914-1918, Երևան, 1983, էջ 277:
54. «Առավոտ», 12 մայիսի, 2001թ.:
55. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 222, g. 1, գ. 16, թթ. 1-4, 5, 8, տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, N 1-2, էջ. 105-110:
56. «Առավոտ» 12 մայիսի, 2001թ.:
57. Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 351:
58. Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 612:
59. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ 200, g.1, գ. 35, թ. 146:
60. Նույն տեղում, գ. 644, թ.1:
61. «Հայկական ժամանակ», 4 մայիսի, 2001թ.:
62. Տե՛ս նույն տեղում:
63. Տե՛ս «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս 1918, 30 հոկտեբերի, N 222, տե՛ս նաև Գ. Խուդինյան, Մի ուշագրավ քարտեզ, «Երևանի համալսարան», գիտահանրամատչելի հանդես, 1989, թիվ 3, էջ 37-38:
64. Տե՛ս «Հայկական ժամանակ», 1 սեպտեմբերի, 2001 թ.:
65. Տե՛ս Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997, էջ 301:
66. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ. 112, թ. 17:
67. «Առավոտ», 12 մայիսի, 2001 թ.:
68. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 198, g. 1, գ.15, թթ.88-89, տե՛ս նաև Ֆ.199, g.1, գ.26, թ. 4, տե՛ս նաև Ֆ. 200, g.1, գ.1, գ. 291, թ.31 և այլն:
69. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g 1, գ. 422, թթ. 21 և 23:
70. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 404, g.1, գ.62, թ.1, «ժողովուրդ», 4 մայիսի 1919թ.:
71. Տե՛ս Վ. Արծրունի, Հայ - տաճկական պատերազմը, Երևան, 2002, էջ 365-366:
72. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ , Ֆ 200, g.1,գ.20, թթ. 57-59, 94, տե՛ս նաև Ֆ.203, g.1, գ.57, թ.47, գ.58:
73. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ. 422, թթ. 22-23:
74. Տե՛ս նույն տեղում, թ. 24:
75. Տե՛ս նույնը, գ. 58, թ. 12:
76. Տե՛ս Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. է. Լոս Անճելըս, 1952, էջ 300:
77. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ.86, թ. 28, գ. 422, թ. 27:
78. Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 3 հուլիսի, 1920 թ.:
79. Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքները, 1918-1920 թթ. , Ե, 1988.:
80. Տե՛ս «Հառաջ», Երևան, 6 ապրիլի, 1920թ.:
81. «Հայկական ժամանակ», 27 մարտի, 2001թ.:
82. Տե՛ս «Սոցիալիստ-հեղափոխական», 26 օգոստոսի, 1919թ.:
83. Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997 թ., էջ 260:
84. Տե՛ս Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 261:
85. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ.183, թ.7, «ժողովուրդ» 4 և 6 դեկտեմբերի, 1918թ.:
86. Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 328-329:
87. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 198, g.1, գ.79, թ.4, տե՛ս նաև Ֆ.199, g.1, գ. 118, թ.47, տե՛ս նաև «Հայաստանի աշխատավոր», 20 հունիսի 1919 թ.:
88. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.198, g.1,գ.79, թ.4:
89. Նույն տեղում, գ.291, թ.49:
90. Տե՛ս նույն տեղում, Ֆ. 200, g.1, գ. 35, թ. 84, գ. 282, թ. 10:
91. Տե՛ս նույն տեղում, թ. 84, գ. 282, թ. 10:
92. Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 28:

93. Տե՛ս ՊՊ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ. 183, թ.7, տե՛ս նաև Ա. Բաբայան, էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 34, տե՛ս նաև Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 117:
94. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1,գ. 291, թ. 28:
95. «Հայկական ժամանակ», 26 դեկտեմբերի, 2000 թ.:
96. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, g.1, գ. 271, թ. 206:
97. Տե՛ս Լ. Խուրշուդյան, Հայաստանի բաժանումը 1920 թ., Ե., 2002, էջ 21 և 55:
98. Տե՛ս Լ. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 48:
99. Տե՛ս Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923թթ.), Ե., 1999, էջ 267:
100. Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 279:
101. Տե՛ս «Հայկական ժամանակ», 24 ապրիլի, 2002թ.:
102. Տե՛ս «Վերջին լուր», Կ. Պոլիս, 22 փետրվարի, 1921 թ.:
103. «Առավոտ», 1 սեպտեմբերի, 2001 թ.:
104. «Հայկական ժամանակ», 27 մարտի, 2001 թ.:
105. «ՀՅ Դաշնակցությունը և Խորհրդային իշխանությունը» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբ. պրոֆ. Վ. Ղազախեցյան), Ե., 1999, էջ 19:
106. «Առավոտ», 1 սեպտեմբերի, 2001թ.:
107. Տե՛ս ՀՀ ՆՊ ՊԿԱ, Ֆ. 114, g.1, գ. 319, թթ. 22-23, «Հայոց պատմություն» (1900-1939 թթ), նյութեր 9-րդ դասարանի համար, Ե., 1993, էջ 193-203:
108. Տե՛ս Աշոտ Սարգսյան, «ՀՅԴ-ն պատմության դատաստանի առաջ», «Հայկական ժամանակ», 24 ապրիլի, 2002 թ., Արա Սահակյան, «Պատահականությո՞ւն, թե՞ օրինաչափություն. Հայ Յեղափոխական Դաշնակցության հանցավոր անցյալը և ներկան», «Հայկական ժամանակ», 26 հոկտեմբերի, 2002թ.:
109. Արա Սահակյան, «Պատահականությո՞ւն, թե՞ օրինաչափություն», «Հայկական ժամանակ», 27 հոկտեմբերի, 2002թ.:

Գևորգ Սարգսի Խուդինյան

Արարատ Մխիթարի Հակոբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ յեղափոխական դաշնակցության պատմությունը և արդիականությունը 3

Հ Յ Դաշնակցության պատմության վաղ շրջանը խեղաթյուրելու փորձերը 10

ՀՅԴ - Իթթիհատ համագործակցության խնդիրը 20

Մեծ եղեռնի և կամավորական շարժման պատմության խեղաթյուրումը 27

Հայաստանի Առաջին Հանրապետություն. առասպելներ և իրականություն 32

Ով-ինչպես է հասկանում պատմության դասերը 48

Գևորգ Խուդինյան
Արարատ Հակոբյան

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորիչ 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
էլ. փոստ lusakn@rambler.ru